



# ԶԵԿՈՒՅՑ

*ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՁԲԱՂՎՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....	6
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	19
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ.....	30
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	32
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	43
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ.....	46
ՊԱՐՏԱԴԻՐ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....	49
ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.....	55
ՊԱՐՏԱԴԻՐ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ.....	58
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	64
ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	84
ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ, ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	89
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ.....	91
ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՅԵՐԸ.....	96
ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ.....	104
ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.....	111
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՎՃԻՌՆԵՐԸ.....	113
ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	132
ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ...	142

## Ներածություն

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրագրված է ինչպես ՀՀ սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով: Այն համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնական սկզբունքներից և ինչպես հասարակության, այնպես էլ պետության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը՝ նպաստելով հասարակության կայունացմանը, բանակի մարտունակության ամրապնդմանն ու հզորացմանը: Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը մի կողմից երաշխավորում է քաղաքացիական հասարակության գերակայությունը զինվորականների նկատմամբ հասարակության համար կենսական կարևորության հարցերի լուծման ժամանակ, մյուս կողմից՝ նպաստում է զինված ուժերում մարդու իրավունքների հարգմանը, պաշտպանությանը, իրավախախտումների և հանցագործությունների նվազմանը, զինծառայողների՝ հասարակությանը ինտեգրմանը:

ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դաշտի քարտեզագրման նպատակով 2011-2012թթ. ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ֆինանսական օժանդակությամբ «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունն իրականացրել է համապատասխան օրենսդրության, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների դաշտի ուսումնասիրություն:

Ծրագրի նպատակն է եղել՝

- ներկայացնել ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն իրականացնող կառույցների իրավասությունն ու լիազորությունները,

- ներկայացնել քաղաքացիական հասարակական վերահսկողություն իրականացնող կառույցները, նրանց գործունեության հիմնական ուղղությունները, կարիքները, վերահսկողությանը խոչընդոտող ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ խնդիրները,

- վերհանել զինված ուժերում առկա հիմնական խնդիրները և առաջարկել դրանց լուծման հնարավոր միջոցառումներ,

- ներկայացնել զինված ուժերին առնչվող ներպետական, ինչպես նաև միջազգային իրավական բազան, միջազգային դատական ատյանների դատական ակտերը, ինչպես նաև տեսական գրականության աղբյուրները,

- ներկայացնել պարտադիր զինվորական ծառայության գորակոչի գործընթացն ու պատասխանատու մարմինների իրավասությունը,

- ներկայացնել զինծառայողների հիմնական իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

Ծրագիրն իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլի ընթացքում ուսումնասիրվել են զինված ուժերին առնչվող ՀՀ ներպետական օրենսդրությունը, միջազգային փաստաթղթերը և զինված ուժերի այս կամ այն խնդիրների վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տեսական գրականությունը:

Վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական մեխանիզմները և պետական մարմինների գործառնությունն ու իրավասության շրջանակը: Ամփոփվել է պարտադիր զինվորական ծառայության գորակոչին վերաբերող ներպետական օրենսդրությունը, գորակոչի համար պատասխանատու մարմինների իրավասությունը, գորակոչիկների իրավունքներն ու պարտականությունները: Ջեկույցում հատուկ զույս է նվիրված զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքներին ու պարտականություններին, խրախուսմանն ու պատասխանատվությանը: Ներպետական օրենսդրական դաշտի վերլուծության արդյունքում ներկայացվել են օրենսդրական ակտերում առկա հակասություններն ու բացերը:

Երկրորդ փուլում իրականացված հետազոտությունը ներառել է ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող մարմինների քարտեզագրումը, դրանց ներկայացուցիչների հետ ՀՀ զինված ուժերի հիմնախնդիրների և դրանց լուծումների առնչությամբ հարցազրույց-քննարկումների իրականացումը: Իրականացվել են հարցազրույց-քննարկումներ ինչպես պետական մարմինների ներկայացուցիչների, այնպես էլ զինված ուժերի անկախ փորձագետների հետ: Փորձագիտական հարցազրույցներով ստացվել են անհատական կարծիքներ և դիրքորոշումներ զինված ուժերում առկա խնդիրների և դրանց հաղթահարման հնարավոր միջոցների, գործողությունների վերաբերյալ:

ՀՀ զինված ուժերին այս կամ այն կերպ առնչվող գործունեություն իրականացնող կազմակերպություններն ընտրվել են ինչպես հասարակական կազմակերպությունների պետական ռեգիստրի, այնպես էլ լրատվության միջոցներում և հարցազրույցներին մասնակցած փորձագետների կողմից դրանց հիշատակումների միջոցով:

Ջեկույցում ներկայացված են ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող պետական կառույցների իրավասությունները, հասարակական կազմակերպությունների գործունեությունը և առավել արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները: Ներկայացված է զինված ուժերին առնչվող ինչպես ՀՀ ներպետական օրենսդրական, այնպես էլ միջազգային փաստաթղթերի, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ զինված ուժերին և զինծառայողների իրավունքներին առնչվող վճիռների, ինչպես նաև զինված ուժերի տեսական գրականության և ինտերնետային ռեսուրսների ընդգրկուն ցանկ: Ուշադրություն է դարձվել պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, ծառայության ընթացքում

զինծառայողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ուսումնասիրությանը:

Զեկույցում կատարված ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել զինծառայողների, ռազմական ոլորտի մասնագետների, ինչպես նաև օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ խթանելու համար:

Հեղինակային խումբն իր խորին շնորհակալությունն է հայտնում ներքոգրյալ անձանց՝ հարցազրույցներին մասնակցելու և զեկույցի պատրաստմանն օժանդակելու համար.

- Ալավերդյան Լարիսա (4-րդ գումարման Ազգային Ժողովի պատգամավոր)
- Ալեքսանյան Ժաննա («Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ)
- Ասլիկյան Լալա («Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն)
- Արամյան Միքայել («Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ)
- Բարսեղյան Լևոն («Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ)
- Դանիելյան Արման («Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ)
- Դանիելյան Միքայել («Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիա» ՀԿ)
- Թադևոսյան Հրայր (ՊՆ առընթեր հասարակական խորհուրդ)
- Իշխանյան Ավետիք («Հայաստանի Հելսինկյան Կոմիտե» ՀԿ)
- Հակոբյան Գոռ («Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ» ՀԿ)
- Հակոբյան Կարեն (Արդարադատության նախարարություն)
- Հարությունյան Սերգեյ (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ)
- Հովհաննիսյան Արծրուն (Ռազմական փորձագետ)
- Հովնանյան Անահիտ («Զինվորի մայր» ՀԿ)
- Նազարյան Ծովինար («Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն)
- Ներսիսյան Լևոն («Մ.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ)
- Մարուխանյան Վահե («Հետաքննող լրագրողներ» ՀԿ)
- Մաքունց Արթուր («Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ)
- Սաֆարյան Սեդա (Փաստաբան)

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Նույնիսկ պետությունում զինված ուժերի առկայության  
անհրաժեշտության դեպքում, խելամիտ և հեռատես ժողովուրդը  
միշտ կպահպանի դրանք զգոն և աչալուրջ հայացքի ներքո...  
Սամուել Ադամս**

ՀՀ զինված ուժերի՝ որպես պետության անվտանգությունն ու կայուն զարգացումը երաշխավորող կարևորագույն ինստիտուտի արդյունավետ գործունեությունը պահպանելու և զարգացնելու, ներպետական օրենքների և միջազգային իրավունքի նորմերին դրա համապատասխանությունը ապահովելու համար անհրաժեշտ են սվյալ կառույցի գործունեության վրա համապատասխան ներպետական գերատեսչությունների և միջազգային կառույցների մշտական ուշադրության սևեռումը, տեղեկատվության պարբերական ստացումն ու տիրապետումը: Տվյալ նպատակների իրականացման համար կարևորվում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը: Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը ամրագրված է ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 8.2 հոդվածի համաձայն՝ «Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»:

Միաժամանակ, քաղաքացիական վերահսկողության սկզբունքն ամրագրված է նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ ՀՀ պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունները հարգելու, *զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:*

Զինված ուժերի նկատմամբ ինչպես տարածաշրջանային, ինչպես նաև ավելի լայն վերահսկողություն իրականացնելու նպատակով զինված ուժերի օգտագործման և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վարքագծային կանոնադրություն ստեղծելու անհրաժեշտությունն ընդգծվել է ԵԱՀՀ անդամ պետությունների նախագահների և կառավարության ղեկավարների կողմից<sup>1</sup>: 1994թ.

---

<sup>1</sup> ԵԱՀՀ Պառլամենտական ասամբլեայի «Քաղաքական հարցեր և անվտանգություն» բանաձև, 1994թ., կետ 59:

ընդունվեց Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտներին առնչվող վարձագծային կանոնադրությունը, որն ամրագրում է ժողովրդավարական հասարակություն զինված ուժերի դերի և նշանակության սկզբունքները: Այն նախատեսում է զինված ուժերի նկատմամբ քաղաքական և ժողովրդավարական վերահսկողության նորմերը, ինչը հանդիսանում է անվտանգության և կայունության հատկանիշ և կոչված է նպաստելու զինված ուժերի հասարակական ինտեգրմանը:

Այդպիսով, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և ղեկավարումը հանդիսանում է ԵԱԿՀ անդամ պետությունների ազգային անվտանգության ապահովման պարտադիր սկզբունք:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է փաստել, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է զինված ուժերի նկատմամբ ինչպես ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների ու նրանց կողմից նշանակված պաշտոնատար անձանց վերահսկողությունը (որը տեսական աղբյուրներում հիշատակվում է նաև որպես պետական-քաղաքական վերահսկողություն) և հասարակական կառույցների՝ հասարակական միավորումների, իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների և անհատ քաղաքացիների կողմից իրականացվող վերահսկողությունը<sup>2</sup>: Այդպիսով, կարելի է առանձնացնել քաղաքացիական ժողովրդավարական և քաղաքացիական հասարակական վերահսկողություն:

### ***Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն***

Այն ենթադրում է քաղաքացիական քաղաքական ինստիտուտների գերակայությունը պաշտպանության և անվտանգության հարցերում որոշումների կայացման գործընթացում: Չնայած նման գերակայությունը ներկայումս հանդիսանում է սկզբունքային պայման, սակայն այն չի նշանակում, որ քաղաքացիական պաշտոնատար անձինք որոշումներ կայացնում են ավելի լավ, քան զինվորականները. սխալվել կարող են ինչպես քաղաքական գործիչները, այնպես էլ բարձրաստիճան զինվորականները: Պարզապես, ժողովրդավարության պայմաններում զինվորականությանը պատկանող զենքը չպետք է նրանց՝ իրենց կարծիքը պնդելու առավելություն տա: Ըստ էության, քաղաքացիական իշխանությունը ցանկացած դեպքում գերակայում է զինվորական իշխանության նկատմամբ<sup>3</sup>:

Այստեղից բխում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողությունը ենթադրում է, որ ժողովրդավարական

<sup>2</sup> Гацко М. "Гражданский контроль над вооруженными силами России"//Обозреватель. 1-2007, стр. 14-21.

<sup>3</sup> Peter D. Feaver, "The Civil-Military Problematique: Huntington, Janowitz and the Question of Civilian Control", In *Armed Forces and Society* 23, no. 2 (Winter 1996): 152.

կառավարության յուրաքանչյուր որոշում, լինի դա խաղաղ կամ պատերազմի ժամանակ, ընդունվում կամ հաստատվում է ժողովրդի կողմից ընտրված կամ ընտրված ներկայացուցիչների կողմից նշանակված քաղաքացիական պաշտոնատար անձանց կողմից: Ընդհանուր առմամբ քաղաքացիական վերահսկողությունը կրում է բացարձակ և համընդհանուր բնույթ: Ոչ մի որոշում չի կարող կայացվել զինվորականների կողմից, եթե դրա իրավունքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց չի փոխանցվել քաղաքացիական իշխանության կողմից: Ցանկացած խնդիր, լինի դա լայնամասշտաբ, թե փոքր (օրինակ, պատերազմում ներգրավվելու հարցի լուծումից մինչև առանձին իրավախախտումների համար զինծառայողների պատասխանատվությանն առնչվող հարցերը) պետք է լուծվեն քաղաքացիական իշխանության կողմից կամ քաղաքացիական ներկայացուցիչների կողմից<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողությունն իրականացնում են հետևյալ մարմինները.

### **Նախագահ**

Պաշտպանության ոլորտում քաղաքացիական վերահսկողության իրականացման առումով ՀՀ նախագահի լիազորությունները նախատեսված են ՀՀ սահմանադրությամբ, որոնք մանրամասնվում են «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում<sup>5</sup>: Մասնավորապես, ՀՀ նախագահը հանդես է գալիս որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, շնորհում բարձրագույն զինվորական կոչումներ: ՀՀ նախագահի կողմից են հաստատվում ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարությունը և ռազմական դոկտրինը, զինված ուժերի կառուցվածքը, զինված ուժերի և այլ զորքերի զարգացման, զինված ուժերի կիրառման և ծավալման, գորահավաքային պլանները և այլն: Նախագահի իրավասությանն է պատկանում ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական սպառնալիքի կամ պատերազմ հայտարարելու դեպքում ռազմական դրություն հայտարարելը, զինված ուժերի օգտագործման մասին որոշում ընդունելը, ընդհանուր կամ մասնակի գորահավաք հայտարարելը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչ անցկացնելու և գորացրում կատարելու մասին հրամանագրեր հրապարակելը: Ազգային ժողովի նիստ հրավիրելու անհնարիության դեպքում նախագահն է որոշում պատերազմ հայտարարելու հարցը: Նախագահն է որոշում ՀՀ տարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցությունը:

<sup>4</sup> Richard H. Kohn, “The Forgotten Fundamentals of Civilian Control of the Military in Democratic Government” [<http://data.Harvard.edu/cfia/olin/pubs/no11.htm>].

<sup>5</sup> Հոդված 5-րդ:



### Ազգային ժողով

Պատլամենտական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կենտրոնական տարրն է: «Զինված ուժերի նկատմամբ պատլամենտական վերահսկողության վերաբերյալ» մոդելային օրենքի<sup>6</sup> համաձայն՝ այն մեկնաբանվում է որպես իրավական ակտերի և վարչական միջոցների համակարգի ստեղծմանն ու արդյունավետ գործադրմանն ուղղված գործունեություն, որն իրականացվում է պատլամենտի կողմից պետական այլ մարմինների և հասարակական այլ ինստիտուտների հետ փոխկապված:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու հարցերով Ազգային ժողովի լիազորությունները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես, Ազգային ժողովի կողմից ուսումնասիրվում են պաշտպանության ոլորտի առանցքային խնդիրները, օրենսդրական կարգավորման ենթարկվում զինված ուժերին առնչվող հարցերը: Ազգային ժողովը հաստատում է պետական բյուջեն, որի մասն է կազմում նաև ռազմական բյուջեն, վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ<sup>7</sup>: Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում պաշտպանության հարցերով վավերացում պահանջող միջազգային պայմանագրերը, որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և հաշտություն հաստատելու մասին, կարող է չեղյալ հայտարարել ՀՀ նախագահի հրամանագրով ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու կապակցությամբ իրականացվող միջոցառումները<sup>8</sup>: ՀՀ Պաշտպանության նախարարը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ազգային ժողովին զինված ուժերում իրավիճակի վերաբերյալ: Դա կատարվում է ինչպես բանավոր, այնպես էլ բանավոր հարցապնդումների միջոցով<sup>9</sup>:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մշտական գործող մարմին է Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը, որը՝ որպես անկախ մարմին, կոչված է վերահսկողություն իրականացնել բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ<sup>10</sup>: Այն Ազգային ժողովին է ներկայացնում իր վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվություն:

<sup>6</sup> Ընդունվել է ԱՊՀ անդամ պետությունների միջպատլամենտական ասամբլեայի թիվ 18-13 որոշմամբ, 2001թ. նոյեմբերի 24-ին, հոդված 2:

<sup>7</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 76:

<sup>8</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 81:

<sup>9</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 80:

<sup>10</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.4:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ վերջին տարիների ընթացքում Վերահսկիչ պալատի կողմից ռազմական բյուջեի կատարման առնչությամբ ստուգում չի իրականացվել<sup>11</sup>:

Պատվամենտական վերահսկողության լրացուցիչ մարմին է նաև ՀՀ ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը, որը կոչված է պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի առնչությամբ օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնել:

### **Կառավարություն**

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելիս լայն լիազորություններով օժտված է ՀՀ Կառավարությունը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Կառավարությունն է ապահովում ՀՀ պաշտպանության քաղաքականության իրականացումը: Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և պաշտպանության քաղաքականության իրականացման շրջանակներում կառավարության լիազորությունները սահմանված են «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով: Մասնավորապես, կառավարության կողմից հաստատվում են զինված ուժերի զինձառայողների ու աշխատողների հաստիքային թվաքանակները, այլ գործերի թվաքանակը, պաշտպանական պետական պատվերը և դրա ձևավորման կարգը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա պահեստագործի սպայական կազմի թվաքանակը, զինվորական հաշվառման, նախագորակոչային պատրաստության կարգերը: Պարտադիր զինվորական ծառայության գորակոչ կազմակերպելու, ընդհանուր կամ մասնակի գորահավաք անցկացնելու մասին որոշում է կայացնում: Կառավարության որոշմամբ է անցկացվում պարտադիր զինվորական ծառայության գորակոչ, ընդհանուր կամ մասնակի գորահավաք:

Կառավարությունը հաստատում է պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքն ու կանոնադրությունները:

Կառավարությունը կազմակերպում և համակարգում է զինված ուժերի ֆինանսավորման, սպառազինման, բնակավորման և այլ հարցերի, ինչպես նաև զինձառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական իրավունքների ապահովման ոլորտում պետական այլ մարմինների գործունեությունը:

Կառավարությունը մասնակցում է նաև ՀՀ ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների ծրագրերի մշակման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը:

---

<sup>11</sup> <http://www.coc.am/YearReportsArm.aspx>.

### Պաշտպանության նախարարություն

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը համալիր մարմին է և դրանում ներառնված են ինչպես զինված ուժերը, այնպես էլ դրանց արդյունավետ գործունեության համար նախատեսված վարչական ապարատը:

Պաշտպանության նախարարության համալիր կառուցվածքը թույլ է տալիս ստեղծել կառավարման կայուն մեխանիզմ, որը հնարավորություն կտա որոշումների ու հրամանների անխոչընդոտ ընդունման, ինչպես նաև դրանց կատարման արդյունքների ու չկատարման փաստերի մասին տեղեկատվության ստացման համար: Անհրաժեշտ է հստակ իրավական կարգավորում և քաղաքական վերահսկողության խիստ համակարգ՝ քաղաքացիական հասարակության (լեզհիտիմ իշխանության միակ աղբյուրի) կամքը զինծառայողների նկատմամբ գործադրելու համար, ովքեր օժտված են զենքի նկատմամբ օրինական և ուղղակի հասանելիությամբ: Այս պայմաններում, համալիր պաշտպանության նախարարության գոյությունը անհրաժեշտ պայման է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության համար: Գործառույթային իմաստով պաշտպանության նախարարությունն իրականացնում է երեք հիմնական նպատակներ.

- որոշումներ ընդունող քաղաքացիական մարմինների և դրանք կատարող զինվորական մարմինների հարաբերությունների համակարգում և կարգավորում,
- զինված ուժերի օգտագործման մաքսիմալ արդյունավետության ապահովում,
- փոփոխվող խնդիրների պայմաններում մարդկային և նյութական ռեսուրսների մաքսիմալ արդյունավետ օգտագործում<sup>12</sup>:

Ավելին, պաշտպանության նախարարությունը կարող է հանդես գալ որպես ժողովրդավարական հասարակությունում ռազմաքաղաքացիական հարաբերություններում առկա հնարավոր հակասությունների լուծման գործիք: Մասնավորապես, այն ստեղծում է համապատասխան դաշտ, որտեղ ժողովրդավարական ճանապարհով ընտրված պաշտոնատար անձանց լեզհիտիմությունը/օրինականությունը/ և իշխանությունը միավորվում են զինվորականների մասնագիտական գիտելիքների և փորձի հետ:

Նման պայմաններում, համալիր պաշտպանության նախարարությունը կոչված է իրականացնելու ամենօրյա վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ: Դա ենթադրում է մասնակցություն ռազմական բյուջեի մշակմանը, զինված ուժերի հեռանկարային և կառուցվածքային զարգացման և ստրատեգիական զարգացման պլանավորում, զինված ուժերի կիրառման նկատմամբ վերահսկողություն, պաշտպանության շահերին համապատասխան հետախուզական խնդիրների մշակում,

<sup>12</sup> Дэвид Бетц, Валерий Волков, "Министерство обороны в демократическом государстве", //Журнальный зал.

ռազմական պատվերի մշակում և ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի ձեռքբերում, զինված ուժերի կադրային քաղաքականության նկատմամբ վերահսկողություն: Նման գործառույթների իրականացման պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանության նախարարի կողմից ղեկավարվող վարչական, բյուրակրատական ու պլանավորման կառույցների և օպերատիվ հրամանատարություն ու վերահսկողություն իրականացնող զինվորական ղեկավարության (գլխավոր շտաբ կամ համանման կառույց) միջև հարաբերությունները լինեն հստակ կանոնակարգված: Այն դեպքում, երբ բարձրագույն իշխանությունը պատկանում է պաշտպանության նախարարին և պաշտպանության նախարարությանը որպես ինստիտուտի, գլխավոր շտաբի իրավասությունների մեջ է մտնում հարցերի տեխնիկական կողմը: Այլ կերպ ասած՝ գլխավոր շտաբում մեկտեղված են զինվորականների փորձն ու գիտելիքները: Պաշտպանության նախարարության, գլխավոր շտաբի և զինված ուժերի միջև փոխհարաբերությունները հանդիսանում են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության անկյունաքարը: Մեծամասամբ հենց այս հարաբերությունների բնույթն է երաշխավորում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները:

Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության նախարարությունն իրականացնում է զինված ուժերի անմիջական ղեկավարումը: Այն վերահսկողություն է իրականացնում զինված ուժերի մարտական պատրաստականության, սպառազինության և ռազմական տեխնիկայի կուտակման և բաշխման նկատմամբ, հսկողություն է իրականացնում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի և վարժական հավաքների անցկացման նկատմամբ, ղեկավարում է նախագորակոչային պատրաստությունը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը, մշակում և իրականացնում է զինված ուժերի կադրային քաղաքականությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանությունը:

Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությունը մասնակցում է ՀՀ ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի մշակմանն ու կատարելագործմանը, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի մշակմանը<sup>13</sup>:

### **Դատական իշխանություն**

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ է նաև քաղաքացիական դատարանների կողմից զինծառայողների նկատմամբ

<sup>13</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 13-րդ:

արդարադատության իրականացումը: Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է<sup>14</sup>: Սա նշանակում է, որ զինված ուժերի ներկայացուցիչների նկատմամբ արդարադատությունն իրականացվում է քաղաքացիական դատավորների կողմից քաղաքացիական անձանց համար նախատեսված բոլոր սկզբունքների պահպանմամբ, այդ թվում՝ հրապարակային, ողջամիտ ժամկետներում արդարացի դատական քննության պայմաններում: Հետևաբար, զինձառայողների քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց մեղավորությունը հանցագործության կատարման մեջ որոշվում է միայն քաղաքացիական դատարանների կողմից:

### **Մարդու իրավունքների պաշտպան**

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության գործուն մեխանիզմ է հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը որպես անկախ պաշտոնատար անձ իրականացնում է զինված ուժերում մարդու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար պաշտպանն օժտված է լայն լիազորություններով, մասնավորապես, իրավասու է անարգել այցելել զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատազրկման վայրեր, ստանալ իրեն հասցեագրված բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և պարզաբանումներ: Պետական մարմինները, այդ թվում՝ զինված ուժերի ստարաբաժանումները, պարտավոր են պահանջվող նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն տրամադրել պաշտպանին:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը լայնորեն համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ: Իսկ խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչության ստեղծումից հետո այդ համագործակցությունը նոր փուլ թևակոխեց. 2011թ. ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արագ արձագանքման խումբը՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն կոչված է ցանկացած պահի յուրաքանչյուր դիմումի և ահագանգի ընթացք տալ, այցելել զորամաս, կատարել համապատասխան զննումներ և այլն:

<sup>14</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 91, 92:

### **ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդ**

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ինստիտուտ է նաև Ազգային անվտանգության խորհուրդը, որի գործառույթների մաս է կազմում ազգային անվտանգության, այդ թվում ռազմական և ռազմաարդյունաբերական անվտանգության ռազմավարության պետական ծրագրերի նախապատրաստումը, կազմակերպումը, կանոնակարգումը և դրանց իրականացման նկատմամբ հսկողությունը: Այն, այսպես կոչված, միջգերատեսչական խորհրդատվական մարմին է, որը կազմավորում և նախագահում է ՀՀ նախագահը:

### ***Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողությունը***

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողության ինստիտուտներ են հանդիսանում քաղաքացիական հասարակության կառույցները: Քաղաքացիական հասարակությունը, ըստ էության, ենթադրում է հասարակության քաղաքացիական խմբավորումներ, որոնք միավորվել են՝ հանրորեն արտահայտելու և ներկայացնելու իրենց հայացքները, շահերը, մտահոգություններն ու այն հիմնարար արժեքները, որոնք ներկայացնելու համար հիմնվել են այդ խմբավորումները<sup>15</sup>: Ելնելով վերոգրյալ հասկացությունից՝ զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտներ են համարվում հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները, քաղաքացիների հասարակական նախաձեռնությունները, քաղաքացիական ոչ կառավարական միավորումները, ինչպես նաև անհատ քաղաքացիները:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց անդամն են հանդիսանում, ներկայացուցչական մարմինների պատգամավորների միջոցով, ինչպես նաև անմիջականորեն՝ դիմելով Մարդու իրավունքների պաշտպանին և այլ պետական մարմիններին, այդ թվում զինված ուժերին՝ ստանալու ցանկացած տեղեկատվություն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Հետևաբար, զինված ուժերը՝ որպես պետական մարմին պարտավոր են օրենքով սահմանված կարգով ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը, տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկատվություն<sup>16</sup>: Բնարկե, օրենքը նախատեսում է

<sup>15</sup> Caparini, Marina and Philipp Fluri, Mapping Civil Society in Defence and Security Affairs: An Agenda for Research, DCAF Civil Society Programme, p. 1, [http://www.dcaf.ch/civsoc/proj\\_mapping.pdf](http://www.dcaf.ch/civsoc/proj_mapping.pdf).

<sup>16</sup> «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 12-րդ:

բացառություն տեղեկություն ստանալու ազատության առնչությամբ, որը պայմանավորված է հարցված տեղեկությունների պետական գաղտնիք հանդիսանալու հետ: Պետական գաղտնիք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների մասին տեղեկությունները, որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար<sup>17</sup>: Ռազմական բնագավառում պետական գաղտնիքի շարքին կարող են դասվել զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստմանն ու անցկացման, գորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքայի ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստագործի ստեղծմանն ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին տեղեկությունները, ռազմաարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին տեղեկությունները, հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին տեղեկությունները, ՀՀ տարածքում դաշնակից պետությունների և ՀՀ զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին, ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին<sup>18</sup>: Ջինված ուժերին առնչվող տեղեկությունները պետական գաղտնիք են ճանաչվում ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից: Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը վավերացվում է Նախագահի կողմից և *ենթակա է հրապարակման*: Այդուամենայնիվ, ռազմական բնագավառում պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունների հստակ ցանկը դեռևս հրապարակված չէ:

Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողության միջոցներ են հանդիսանում զանգվածային լրատվամիջոցները, որոնք իրավասու են անխոչընդոտ բարձրաձայնել զինված ուժերին առնչվող հարցերը:

2010թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից հաստատվեց Հանրային իրազեկման հայեցակարգը, որը կոչված է սահմանելու ՀՀ պաշտպանության

<sup>17</sup> «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 2-րդ:

<sup>18</sup> Նույն տեղում, հոդված 9-րդ:

նախարարության և գլխավոր շտաբի գործունեության մասին հանրային իրազեկման քաղաքականության իրականացման ուղիներն ու միջոցները, նպաստելու պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը: Հայեցակարգն ուղղված է պաշտպանության քաղաքականության թափանցիկության բարելավմանը, բանակ-հասարակություն փոխվստահության ամրապնդմանը, զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության համակարգմանն ու կապերի ամրապնդմանը, զինծառայողների շրջանում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ աշխատանքների բարելավմանը և զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության ընդլայնմանը:

Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության խստացման և զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջներով պայմանավորված՝ 2009թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվեց Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ՝ կոչված ապահովելու ՀՀ պաշտպանության նախարարության և քաղաքացիների փոխհամագործակցությունը, բանակաշինության, ՀՀ ՁՈԻ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների զարգացման հարցերում հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցումը: Այն խորհրդակցական մարմին է և ձևավորվում է կամավորության սկզբունքով, հասարակական նախաձեռնությամբ ներկայացված հայտերի հիման վրա: Հասարակական խորհուրդը նպատակ ունի ապահովել պաշտպանության նախարարության և ՀՀ քաղաքացիների փոխհամագործակցությունը, բանակաշինության, զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, ՀՀ ՁՈւ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և քաղաքացիական հասարակության սկզբունքների զարգացման հարցերում հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շահերի փոխհամաձայնեցումը: Իր առաքելությունը հասարակական խորհուրդն իրականացնում է զինված ուժերի ստորաբաժանումներ այցելությունների, ստուգայցերի, մշտադիտարկումների և շրջայցերի միջոցով: Դրանք իրականացվում են տարբեր որոտի մասնագետների հանձնախմբերով: Խորհրդի կողմից իր գործունեության ընթացքում (2009թ. հուլիսից մինչ 2012թ. մայիս ամիսը) իրականացվել է 10 ստուգայցեր, որոնց ընթացքում Խորհրդի անդամներն այցելել են զինված ուժերի 69 ստորաբաժանումներ: Խորհրդի կողմից ստացվել են 375 դիմում-բողոքներ, որոնց մեծ մասը դրական լուծում է ստացել: Վերջին չորս գորակոչերի ընթացքում Հասարակական խորհուրդը ստացել է 212 դիմում (ընթացիկ՝ 2012թ. զարնանային գորակոչի ընթացքում՝ տասնակից ավելի): Հասարակական խորհրդի



կողմից իրականացվել է նաև «Մշակույթի և պատմության էջեր» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են 271 շրջայցեր և ընթերցվել 440 դասախոսություններ արվեստի, պատմության և տարբեր գիտությունների ներկայացուցիչների կողմից:

### **Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միջազգային փորձի որոշ օրինակներ**

«Զինված ուժերի նկատմամբ պառլամենտական վերահսկողության վերաբերյալ» ԱՊՀ մոդելային օրենքը սահմանում է զինձառայողների գործերով պառլամենտական հանձնակատարի ինստիտուտը, ով նշանակվում է պառլամենտի կողմից: Հանձնակատարը պառլամենտին և նախագահին պարբերաբար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև անհապաղ, զեկուցում է զինված ուժերում իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև իր գործունեության վերաբերյալ: Ըստ էության, զինձառայողների գործերով հանձնակատարը հանդիսանում է զինվորական օմբուդսմեն, ով զբաղվում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտ է Պաշտպանության հանձնակատարը, որն ընտրվում է պառլամենտի կողմից: Նրա գործունեությունն ընգրկում է պաշտպանության նախարարության իրավասությունների ամբողջ շրջանակը և պետության պաշտպանության նյութական ապահովումը: Պաշտպանության հանձնակատարի կողմից պատրաստվում և հրապարակվում է տարեկան հաշվետվություն զինված ուժերի կառավարման, հրամատարության, ինչպես նաև զինված ուժերի անդամների միջև իրավիճակի վերաբերյալ: Գերմանիայի Դաշնային Հանրապետության զինված ուժերի կողմից ֆինանսական միջոցների կառավարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Աուդիտի ֆեդերալ դատարանը, որը տարեկան հաշվետվություն է ներկայացնում ինչպես կառավարությանը, այնպես էլ պառլամենտին Պաշտպանության նախարարության կողմից բյուջետային միջոցների ծախսման վերաբերյալ՝ տալով եզրակացություններ և գնահատականներ:

Զինված ուժերի օմբուդսմենի ինստիտուտը գործում է նաև Կանադայում, որտեղ, սակայն, նշանակվում է ոչ թե պառլամենտի, այլ պաշտպանության նախարարի կողմից: Միաժամանակ, զինված ուժերի օմբուդսմենը ենթակա չէ պաշտպանության նախարարին և գործում է ինքնուրույն: Օմբուդսմենն անցնում է հատուկ մասնագիտական պատրաստություն, զինված ուժերի հրամանատարական օղակում ունի հատուկ կարգավիճակ և զինված ուժերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու լիազորություն:

Պառլամենտական վերահսկողության տեսանկյունից հետաքրքրական է Կանադայի փորձը, որտեղ պառլամենտի անդամներին և սենատորներին հնարավորություն է տրվում իրենց ընտրությամբ մինչև հինգ օր անցկացնել ծովային ուժերում, բանակում

կամ ռազմաօդային ուժերում հիմնականում մարտական գորավարժությունների ընթացքում: Ծրագիրն ուղղված է պառլամենտի անդամների և սենատորների կողմից զինված ուժերի ճանաչողությանը և ռիսկերի իրական գնահատմանը: Կանադայում ժողովրդավարական վերահսկողության կոնտեքստում անց են կացվում նաև բրիֆինգներ և սեմինար քննարկումներ պառլամենտի անդամների, սենատորների ու զինված ուժերի ներկայացուցիչների միջև այնպիսի հարցերի առնչությամբ, ինչպիսիք են ռազմամթերքի գնման հետ կապված հարցերը, ներպետական և միջազգային մարտական գործողությունները, պետության պաշտպանության ռազմավարությունը և այլն: Միաժամանակ, Կանադայում լայն կիրառում ունեն պառլամենտի անդամների կողմից զինված ուժերի տեղակայման և մարտական գործողությունների վայրեր ճանաչողական այցերը:

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները կարելի է ներկայացնել հետևյալ դասակարգմամբ.

- կազմակերպություններ, որոնց գործունեությունն ընդգրկում է **միայն** զինված ուժերի կամ զինծառայողների հիմնախնդիրները,
- կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում են **նաև** զինված ուժերին առնչվող առանձին ծրագրեր,
- **իրավապաշտպան կազմակերպություններ**, որոնց գործունեությունն ընդհանուր առմամբ ներառում է նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը:

*1. «Զինվորի մայր» հասարակական կազմակերպություն*

Հասցե: Խանջյան 5, 107 սենյակ, ք. Երևան

Հեռ.: (+37410) 529931, 523202

Վեբ-կայք: <http://www.zinvori-mair-ngo.am>

«Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1988թ. և հանդիսանում է ոչ կառավարական, շահույթ չհետապնդող, ոչ քաղաքական հասարակական կազմակերպություն, որը քարոզչական, լուսավորչական, խորհրդատվական, հրատարակչական և հետազոտական միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածքում սոցիալական, բարոյահոգեբանական և իրավական աջակցություն է ցուցաբերում զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին: Կազմակերպության հիմնական թիրախային խումբը կազմում են պարտադիր զինվորական ծառայություն իրականացնող զինծառայողները, որոնց տրամադրվում է իրավական կրթություն, խորհրդատվություն և ներկայացուցչություն ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմիններում: Կազմակերպության կողմից հատուկ ուշադրություն է դարձվում գորակոչային տարիքի երիտասարդների և նրանց ընտանիքի անդամների իրավական կրթության հարցերին:

Մասնավորապես, Կազմակերպության կողմից իրականացվում է զինծառայողների, հիմնականում նախկին կամ զոհված ազատամարտիկների երեխաներին ուղղված կրթական ծրագրեր՝ կոչված ապահովելու նրանց ընդունելությունը և հետագա կրթությունը բարձագույն ուսումնական հաստատություններում: Կազմակերպությունը տրամադրում է նաև իրավական աջակցություն զինվորական ծառայության հետ

առնչվող անձանց՝ անվճար իրավական խորհրդատվության, ինչպես նաև համապատասխան իրազեկող նյութերի տպագրման միջոցով:

Կազմակերպության կողմից իրականացվել են նաև մի շարք մշտադիտարկման ծրագրեր. մասնավորապես, 2009-2010թթ. գորակոչի գործընթացի մշտադիտարկում, 2011թ. զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ մշտադիտարկում՝ կոչված վերհանելու զինծառայողների առողջական խնդիրների բարդացումները, դրանց պատճառները և հիմքերը:

Ներկայումս կազմակերպությունը ծրագրում է իրականացնել ծառայության ընթացքում զինծառայողներին տրամադրվող բուժօգնության որակի մշտադիտարկում՝ վերհանելու զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդությունների պատճառները:

«Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է նաև ՊՆ առընթեր հասարակական խորհրդի անդամ:

Կազմակերպությունը ակտիվորեն համագործակցում է ինչպես տեղական հասարակական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների, Հայաստանում արտասահմանյան դեսպանությունների և անհատների հետ: Այն Ժնևյան Կոնֆերանսի փախստականների հայրենադարձության և ինտեգրացման Աշխատանքային խմբի անդամ է, ՀՀ Կառավարության առընթեր հակակոռուպցիոն կոալիցիայի, ՀՀ ԱԺ նախագահին առընթեր փախստականների հարցերով զբաղվող ՀԿ-ների Խորհրդի, ԿԲԻՆՈ Դանիական փախստականների Խորհրդի ցանցի, ինչպես նաև «Բանակն ու հասարակությունը» հասարակական կազմակերպությունների Խորհրդի անդամ: «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվել են ՀՀ զինված ուժերին առնչվող մեկ տասնյակից ավելի գրքեր և տեղեկատվական գրքույկներ<sup>19</sup>:

## *2. «Զինվոր» համակարգող խորհուրդ*

Հասցե: Մուրացան 110, ք. Երևան

Հեռ.: (+37410) 430315, (+37493) 881999

Վեբ-կայք: [www.zinvorhk.wordpress.com](http://www.zinvorhk.wordpress.com)

«Զինվոր» համակարգող խորհրդի առաքելությունը զինված ուժերին առնչվող հասարակական կազմակերպությունների կապի ու հակագործակցության ապահովումն է: Խորհուրդը ստեղծվել է 2003թ.: Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է զորամասեր, զինվորական ստորաբաժանումներ այցելությունների, ստուգայցերի միջոցով:

---

<sup>19</sup> Ամբողջական ցանկը տե՛ս Զեկույցի «Օգտակար գրականության ցանկ» բաժնում:

3. «Զինվորի պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպություն

Հասցե: Թավրիզյան 35, ք. Երևան

Հեռ: (+37410) 260223, (+37493) 611979

Կազմակերպությունը ստեղծվել է 2002թ., սակայն պաշտոնապես գրանցումն իրականացվել է 2010թ.: Կազմակերպության նպատակն է ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի վերացումը: Կազմակերպության գործնեությունն իրականացվում է գորամասեր այցելությունների, խորհրդատվությունների, ընդունելությունների միջոցով: Կազմակերպության գործնեության հիմնական ուղղությունը զինված ուժերում տեղի ունեցող մահվան դեպքերի առնչությամբ քրեական գործերի քննությանը որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ներգրավելն ու շահերի պաշտպանությունն իրականացնելն է:

4. «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն

Նախաձեռնությունը քաղաքացիների միավորում է, որում ընդգրկված են ինչպես տարբեր հասարակական կազմակերպությունների անդամներ, այնպես էլ զինված ուժերի հիմնահարցերով մտահոգված քաղաքացիներ: Խմբի ստեղծման նախապատմությունը միանշանակ չէ, քանի որ դրա հիմքերը դրվել են դեռևս 2010թ.: Սակայն 2011թ. մայիսին տեղի ուեցած «Հեղափոխում» ֆորումից հետո նախաձեռնությունը ստեղծվեց՝ կոչված լինելով աջակցել բանակում մահացած զինվորների ծնողներին: 2011թ. ամռանը բանակում գրանցված մահվան դեպքերը, հատկապես Ադասի Աբրահամյանի կասկածելի մահը, առիթ հանդիսացան նախաձեռնության ակտիվացման, մի շարք ակցիաների՝ երթեր, քննարկումներ, հանդիպումներ պաշտոնատար անձանց հետ, կազմակերպման և իրականացման: Այդպիսով, նախաձեռնությունը սկսեց հանդես գալ ոչ միայն բանակում մահացած զինծառայողների մայրերին աջակցող, այլ որպես ինքնուրույն քաղաքացիական նախաձեռնություն: Նախաձեռնության առաքելությունն է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև զինված ուժերում տեղի ունեցող հանցագործությունների բազմակողմանի, օբյեկտիվ քննությունն ու մեղավորներին պատասխանատվության ենթարկելը: Նախաձեռնության անդամները հանդես են գալիս կամավորության հիմունքներով:

5. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Հասցե: Տիգրան Մեծի պողոտա 59, ք. Վանաձոր

Հեռ.: (+374) 322 42268  
Ֆաքս: (+374) 322 41236  
Վեբ-կայք: www.hcav.am

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թ. մարտի 21-ին՝ որպես Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ: ՀՔԱՎ-ի *առաքելությունն է՝* ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը: Կազմակերպությունը հիմնականում գործում է մարդու իրավունքների պաշտպանության, շահերի պաշտպանության և քաղաքացիական նախաձեռնությունների ու խաղաղասիրության ոլորտներում:

Զինված ուժերի վերաբերյալ գործունեությունը կապված է խաղաղասիրական գործունեության հետ, որի օրակարգում շարունակում է մնալ կոնֆլիկտից տուժածների՝ անհայտ կորածների և նրանց ընտանիքների, նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների, փախստականների և ներքին տեղահանվածների բազմաթիվ խնդիրների չլուծվածությունը, ինչպես նաև կոնֆլիկտի մեջ գտնվող հասարակության ներկայացուցիչների միջև փոխվստահության և համագործակցության զարգացումը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող այս գործունեության բաղադրիչ է հանդիսանում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, պաշտպանական գերատեսչության հաշվետվողականության և թափանցիկության մեծացմանը նպաստումը:

Այս առումով կազմակերպության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

«Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանություն, հասարակության մեջ ինտեգրում»՝ 2007 թ. մայիս- սեպտեմբեր: Այն ներառել է երկու ուղղություն՝ ուսումնասիրություն և իրազեկում: Ծրագրի նպատակն է եղել ռազմագերիների շահերի և իրավունքների պաշտպանությանը և հասարակության մեջ նրանց ինտեգրմանը:

«Զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորում»՝ 2008 – 2009 թթ.: Ծրագրի նպատակն է եղել ՀՀ Լոռու մարզում զորակոչի գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների մշակումը և ներդրումը, զորակոչի ընթացքում իրավախախտումների բացահայտումն ու քաղաքացիների իրազեկման մակարդակի բարձրացումը: Ուսումնասիրվել է զորակոչի գործընթացում տեղի ունեցող խախտումները Լոռու մարզում, իրավական աջակցություն է ցուցաբերվել զորակոչիկներին և նրանց հարազատներին, կազմակերպվել են ուղիղ

հեռուստատեսությունները Լոռու մարզի քաղաքներում հանրությանն իրազեկելու նպատակով, մշակվել է գորակոչիկների իրավական ուղեցույց:

«Զորակոչի գործընթացի նկատմամբ մոնիթորինգի իրականացում»՝ 2009 թ. փետրվարի 1 – դեկտեմբերի 31: Սրա նպատակն է եղել Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում գորահավաքների ընթացքում տեղ գտած խախտումների և ծագած խնդիրների վեր հանումը: Ուսումնասիրվել է գորակոչի գործընթացում տեղի ունեցող խախտումները Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում, ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Ազգային ժողովի լսումների ժամանակ:

Քաղաքացիական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ ծրագրի նպատակն է եղել ձևավորել քաղաքացիական վերահսկողության ինստիտուտ զինված ուժերի նկատմամբ, ռազմական բյուջեի մոնիթորինգի և բանակում սպանության դեպքերի ուսումնասիրման միջոցով: Ծրագրի արդյունքում Ուսումնասիրվել են ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերը, ուսումնասիրվել է ՀՀ ռազմական բյուջեն:

6. «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպություն

Հասցե: Ղ. Փարպեցի 9 բ, բն. 26, ք. Երևան

Հեռ.: (+37410) 530840

Էլ. Փոստ: zalexanian@yahoo.com

Կազմակերպությունը հիմնադրվել է 2008թ.: Կազմակերպության կողմից իրականացված որոշ ծրագրերի հիմնական թիրախը եղել է զինծառայողների իրավունքների պաշտպանությունը:

«Լրագրողական վերահսկողություն մարդու իրավունքների ոլորտում» ծրագրի շրջանակներում (2009թ.) լուսաբանվել են ինչպես զինծառայողների իրավունքների խախտումների, այնպես էլ մարդու իրավունքների այլ խախտումների դեպքերը: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվել են գիտաժողովներ՝ մարդու իրավունքների լուսաբանման ոլորտում լրագրողների մասնագիտական որակները բարձրացնելու առումով:

«Լրագրողի և փաստաբանի համատեղ աշխատանքի արդյունավետությունը» ռազմավարական դատավարություններ ծրագրի շրջանակներում (2011թ.) զինվորական հանցագործության քննությանը՝ որպես տուժողի ներկայացուցիչ ներգրավվել է Կազմակերպության փաստաբանը: Այս ծրագրի շրջանակներում համատեղվել է գործերի վերաբերյալ լուսաբանումը՝ տուժողների իրավունքների ուղղակի պաշտպանությամբ: Այս ծրագիրը ներկայումս թևակոխել է իր երկրորդ փուլ:

«Քաղաքացիական վերահսկողությունը ՀՀ զինված ուժերում հանցագործությունների բացահայտման ուղղությամբ» ծրագրի շրջանակներում (2011թ.) իրականացվել են հանցագործությունների և այլ դեպքերի հրապարակային լուսաբանում:

7. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպություն

Հասցե: Պուշկինի 96, ք. Գյումրի

Հեռ.: (+374) 312 5-06-22

Էլ. փոստ: admin@asparez.am

Վեբ-կայք: [www.asparez.am](http://www.asparez.am)

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հիմնադրվել է 2000թ.՝ նպատակ ունենալով բարձրացնել խոսքի, տեղեկատվության, մամուլի և արտահայտման իրավունքի պաշտպանվածությունը: Ջինված ուժերի առնչությամբ Կազմակերպության գործունեությունը կարելի է բաժանել երեք հիմնական ուղղությունների: Առաջին. զինված ուժերին առնչվող տեղեկատվության հրապարակում, լուսաբանում Կազմակերպության համացանցային կայքում և թերթում: Երկրորդ. զինված ուժերում մարդու իրավունքների՝ այդ թվում խոսքի ազատության պաշտպանության առնչությամբ ծրագրերի իրականացում: Զինված ուժերի առնչությամբ Կազմակերպության առաջին ծրագիրն իրականացվել է 2002թ., որի նպատակն է եղել ներկայացնել բանակում հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Հաջորդ ծրագիրը մեկնարկել է 2011թ. հոկտեմբերին, կոչվում է «Պաշտպանենք զինվորների իրավունքները»: Ծրագրի նպատակն է վերհանել 1994 թ. ի վեր Շիրակի մարզից գորակոչված կամ պայմանագրային հիմունքներով զինձառայության անցած զինձառայողների մահվան դեպքերին առնչվող (սպանություն, ինքնասպանություն, անզգուշությամբ մահ պատճառել) տեղեկատվությունը, այդ թվում աշխարհագրությունը, քրեական գործերով ներգրավված պաշտոնատար անձանց՝ օրինաչափություններ առանձնացնելու համար, որոնց վերլուծության հիման վրա կներկայացվեն համապատասխան առաջարկություններ: Եվ երրորդ. անհատական մակարդակում գործունեություն առանձին գործերով, մասնակցություն քաղաքացիական նախաձեռնությունների գործունեությանը, նրանց կողմից կազմակերպված միջոցառումներին, հայտարարություններին, հանդիպումներին և այլն:

8. «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն

Հասցե: Թումանյան 8, 322 ս., ք. Երևան

Հեռ.: (+37410) 524886

Ֆաքս: (+37410) 523963



Էլ. փոստ: info@prwb.am

Վեբ-կայք: www.prwb.am

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2009թ.: Կազմակերպության նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանությանը, մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքմանն ու իրազեկմանը, մոնիթորինգների իրականացումը, օրենսդրության և իրավական համակարգի բարեփոխմանն ուղղված գործունեության իրականացումը:

Կազմակերպության կողմից 2010թ. իրականացվել է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական մոնիթորինգ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել զինված ուժերում հանցավորության պատճառներն ու պայմանները, քրեադատավարական ոլորտում հայտնված զինծառայողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը և ընդհանուր առմամբ, դատավարության կողմերի արդար դատաքննության իրավունքի ապահովումը: Ռեզոլուցիայի դատավարություններ ծրագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացրել է զինված ուժերում տեղի ունեցած հանցագործություններից տուժողների ներկայացուցչություն:

9. «Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Հասցե: Այգեստան 11 փողոց 43, ք. Երևան

Հեռ.: (+37410) 574317

Ֆաքս: (+37410) 559634

Էլ. Փոստ: [csi@csi.am](mailto:csi@csi.am)

Վեբ-կայք: [www.csi.am](http://www.csi.am)

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1998 թվականին: ՔՀԻ նպատակն է աջակցել Հայաստանում ազատ ժողովրդավարական հասարակության կայացման գործընթացին: Կազմակերպության գործունեությունը ուղղված է առաջին հերթին հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Զինված ուժերի հետ կապված գործունեությունը կապված է զինված ուժերի փակ հաստատությունների հետ՝ կարգապահական գումարտակներ և կարգապահական մեկուսարաններ. մեկուսարաններում պահվող անձանց պահման պայմանների,

պատասխանատվության ենթարկվելու իրավական հիմքերի, ընթացակարգի ու վարվեցողության չափանիշների ուսումնասիրություն: Զինված ուժերում տեղի ունեցած առավել ծանր հանցագործությունների առնչությամբ Կազմակերպության «Ռազմավարական դատավարություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել է տուժողների ներկայացուցչություն:

*10. «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն*

Հասցե: Արշակունյաց պող. 6, ք. Երևան

Հեռ.: (+37410) 582819

Վեբ-կայք: [www.favl.am](http://www.favl.am)

Կազմակերպությունը հիմնադրվել է 1991թ.: Կազմակերպության առաքելությունն է միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների տարածումն ու ամրապնդմանը, սահմանամերձ մարզերի սոցիալ-տնտեսական և քաղաքացիական զարգացմանը և Հայաստանում ժողովրդավարական արժեքների հաստատմանը նպաստելը: Կազմակերպության հիմնական թիրախային խումբն են հանդիսանում ռազմական գործողություններից տուժած անձինք, ներառյալ պատանքները, ռազմագերիները, անհայտ կորած անձինք և նրանց ընտանիքի անդամները, փախստականները, բռնի տեղահանվածները, խոշտանգումների և դաժան, անմարդկային վերաբերմունքից տուժած անձինք, ինչպես նաև քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներից տուժած ազգային փոքրամասնությունները, մարդկանց խմբերն ու միավորումները:

Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է տեղական հասարակական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ: Հանդիսանում է «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ, ՊՆ կից անհայտ կորածների հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հասարակական դիտորդների խմբի անդամ: Կազմակերպության կողմից իրականացվում է իրավական, բարոյահոգեբանական աջակցություն և օժանդակություն վերոգրյալ անձանց:

*11. «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպություն*

Հասցե: Պուշկինի 3ա, ք. Երևան

Հեռ.: (+37410) 560372

Էլ. Փոստ: [info@armhels.com](mailto:info@armhels.com)

Վեբ-կայք: [www.armhels.com](http://www.armhels.com)

Կազմակերպության կողմից ՀՀ զինված ուժերի առնչությամբ առանձին ծրագրեր չեն իրականացվել, սակայն դեռևս 1997թ. ՀՀ զինված ուժերի հիմնախնդիրները բարձրաձայնվել են Կազմակերպության կողմից:

Բանակի վերաբերյալ առաջին հոդվածը և դրան հաջորդողները գետեղված են կազմակերպության 1997 թվականի տեղեկագրում: Այդ հոդվածներն են՝ «Մարդու իրավունքները բանակում», «Ոչ ֆորմալ կառույցներ», «Ցուցմունք են տալիս միայն դիակները», «Ժայռը», «Ուլքեր չեն ուզում, որ իրենց երեխաները գնան բանակ», «Հելսինկյան Կոմիտեի իրավունքների պաշտպանության նախաձեռնությունը բանակում»: 1998-1999 թվականին կազմակերպության նախաձեռնությամբ ստեղծվեց գոհվածների ծնողների իրավունքների պաշտպանության առաջին կազմակերպությունը՝ «Զոհվածների ծնողների կազմակերպությունը»: Մինչ օրս կազմակերպությունը ակտիվորեն զբաղվում է զինված ուժերի հիմնախնդիրներով՝ զեկույցների պատրաստմամբ և ընդհուպ սպանությունների գործերով դատական հայցեր ներկայացնելով:

*12. «Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն*

Հասցե: Նանսենի 1 նրբ. 8-րդ շենք, բն. 33, ք. Երևան

Հեռ.: (+37410) 589991

Էլ. Փոստ: [hahr.yerevan@gmail.com](mailto:hahr.yerevan@gmail.com)

Վեբ-կայք: [www.hahr.am](http://www.hahr.am)

«Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997թ. և զբաղվում է Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների հիմնահարցերին անմիջականորեն առնչվող գործունեությամբ: Կազմակերպության կողմից ՀՀ զինված ուժերին առնչվող ծրագրեր չեն իրականացվել, սակայն բանակի հիմնախնդիրները բարձրաձայնվել և ներկայացվել են կազմակերպության զեկույցներում: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում Մարդու Իրավունքների իրավիճակի մասին» Հելսինկյան Ասոցիացիայի 2011 թվականի զեկույցում մի ամբողջ բաժին վերաբերում է մարդու իրավունքների հիմնախնդիրներին ՀՀ զինված ուժերում: Ներկայացվել են բանակում առկա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կոռուպցիան, ոչ կանոնադրական հարաբերությունների առկայությունը, հանցագործությունների կոծկման և անպատժելիության մթնոլորտը: Զեկույցի նույն գլխում ներկայացված են նաև մի խումբ զինձառայողների սպանության գործերը, որտեղ ներկայացվել են իրականացված քննության կեղծիքներն ու անարդյունավետությունը:

13. «Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Հասցե: Այգեձոր 4/1, ք. Երևան

Հեռ.: (+374 10) 26 47 12

Ֆաքս: (+374 10) 26 47 12

Էլ.փոստ: [info@idhr.am](mailto:info@idhr.am)

Կայք: [www.idhr.am](http://www.idhr.am)

Մարդու իրավունքների և ժողովրդավարական ինստիտուտ հասարակական կազմակերպությունը զինված ուժերի հետ կապված հատուկ ծրագրեր չի իրականացրել, սակայն կազմակերպության առաքելությունն ու գործունեությունը առնչվել է զինված ուժերի հիմնախնդիրներին նույնպես: Տարբեր հիմնախնդիրների առնչությամբ Կազմակերպությունը հանդես է եկել ուղերձներով և հայտնել իր քաղաքացիական դիրքորոշումը: Առանձին դեպքերի առնչությամբ, ինչպիսիք են սպանություններն ու բռնությունները, կազմակերպությունը անուղղակիորեն օժանդակել է այլ կազմակերպություններին ու նախաձեռնություններին, ովքեր զբաղվում են այդ հիմնախնդիրներով և փորձում են լուծումներ գտնել: Տվյալ խնդիրների առնչությամբ Կազմակերպությունը ներդրել է ռեսուրսներ դրանք հանրայնացնելու և քննարկման դնելու համար:

14. «Մ.Ռ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

Հասցե: Մարմեն 1, ք. Երևան

Հեռ.: (+374 10) 542936, 587864

Էլ. Փոստ: [sakhfd@arminco.com](mailto:sakhfd@arminco.com)

Կազմակերպության գործունեության մեջ զինված ուժերի վերաբերյալ կոնկրետ ծրագիր նկատելի չէ, սակայն մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը ընդգրկել է նաև զինվորականների իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես, 5-6 տարի առաջ բազմաթիվ Կազմակերպության կողմից տարբեր գորամասերում անց է կացվել դասախոսությունների շարք զինծառայողների իրավունքների վերաբերյալ:

Ինչպես երևում է ՀՀ զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների դաշտի ուսումնասիրությունից, Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի հիմնահարցերով զբաղվում են բավականին քիչ թվով հասարակական կազմակերպություններ: Դրանց արդյունավետ իրավապաշտպան

գործունեությունն ապահովելու, արձանագրվող խնդիրներին համարժեք միջոցառումներ իրականացնելու համար կազմակերպությունները հիմնականում ունեն ֆինանսական ռեսուրսների կարիք: Դրանք մեծամասամբ գործում են կամավորության հիմունքներով, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցներով, որոնք ուղղվում են հիմնականում կազմակերպության գործունեությանը փորձագետներ (այդ թվում միջազգային) ներգրավելուն: Ի լրումն նյութական ռեսուրսների պակասի, հասարակական կազմակերպությունների կողմից ընդգծվեց նաև մարդկային ռեսուրսի խնդիրը. որոշ կազմակերպություններ ունեն իրավաբան մասնագետների անհրաժեշտություն:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՑԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ԾՐԱԳՐԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կատարելագործման, ժողովրդավարական զարգացման, հասարակական վերահսկողության ամրապնդման, զինված ուժերում մարդու իրավունքների հարգանքի և պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվում են ծրագրեր միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից նույնպես: Մասնավորապես, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպության առաքելության շրջանակներում իրականացվում են ծրագրեր ՀՀ զինված ուժերում ԵԱՀԿ սկզբունքների և պարտավորությունների կատարման ուղղությամբ անվտանգության և կայունության ապահովման նպատակով: Այդ առթիվ ԵԱՀԿ երևանյան գրասենյակն ակտիվորեն համագործակցում է ինչպես ՀՀ պետական մարմինների, համալսարանների, հետազոտական հիմնարկների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների հետ: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ իրականացվում են ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների ամրապնդմանն ուղղված ծրագրեր. կազմակերպվում են դասընթացներ՝ սպայական և ՊՆ քաղաքացիական անձնակազմի համար, քննարկումներ՝ պետական մարմինների, մարդու իրավունքների ոլորտի մասնագետների և լայն հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ, հետազոտություններ և ուսումնասիրություններ՝ ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքներին վերաբերող խնդիրների պատճառների և դրանց հաղթահարման լավագույն փորձի մշակման ուղղությամբ:

Ակտիվ է նաև ՀՀ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ պաշտպանական ոլորտի բարեփոխումների շուրջ: ՀՀ և ՆԱՏՕ համագործակցության շրջանակն առավել հստակեցվեց 2005թ. կնքված Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով, որով ՀՀ ստանձնեց մի շարք պարտավորություններ պաշտպանական և ռազմական ոլորտներում: ՀՀ-ն և ՆԱՏՕ-ն համագործակցում են ՆԱՏՕ-ի խաղաղարար գործունեության իրականացման ոլորտում. մասնավորապես, ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումները մասնակցում են Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի և Կոսովոյում խաղաղապահ առաքելությունների իրականացմանը: Ի լրումն դրա, ռազմական ոլորտում ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև իրականացվում են նաև այլ ծրագրեր և միջոցառումներ: ՆԱՏՕ-ն աջակցում է նաև ՀՀ Զինված ուժերի ռազմական կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի իրականացմանը՝ կազմակերպելով դասախոսություններ, սեմինար-քննարկումներ ռազմական ոլորտին վերաբերող տարաբնույթ հարցերով:

Հայաստանի Հանրապետությունը ռազմական ոլորտում համագործակցում է նաև մի շարք օտարերկրյա պետությունների հետ: Մասնավորապես, ռազմական ոլորտում համագործակցության համաձայնագրեր են կնքված Գերմանիայի Դաշնության, Ռուսաստանի Դաշնության, Հունգարիայի Հանրապետության, Լիբանանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Սլովակիայի Հանրապետության, Արգենտինայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության և այլ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև:

Վերոգրյալ պետությունների հետ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում իրականացվում են հանդիպումներ, քննարկումներ, տարաբնույթ ռազմակրթական ծրագրեր, որոնց շրջանակներում հայ սպաները կրթություն են ստանում օտարերկրյա բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում: Օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ռազմական համագործակցության շրջանակներում շտաբային սպաների և երկու պետությունների պաշտպանական գերատեսչությունների քաղճառայողների կողմից Հայաստանում և Գերմանիայում 2011թ. իրականացվել է երկկողմ տարեկան ծրագրի 17 միջոցառում, որոնք ընդգրկել են կարծիքների փոխանակում, մասնագիտական հանդիպումներ, խորհրդատվական առաջարկներ, ևս 17 ծրագրեր իրականացվել են ռազմակրթական աջակցության շրջանակում, որի ընթացքում կազմակերպվել է Գերմանիայում հայ սպաների ռազմական ուսուցումը: 2012թ. ընթացքում պլանավորվում է իրականացնել 19 միջոցառում տարեկան ծրագրի, ինչպես նաև 10 ծրագիր ռազմակրթական աջակցության շրջանակներում:

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Այս գլխում ներկայացված են ՀՀ Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև ռազմական ոլորտի մասնագետների փորձագիտական կարծիքները ՀՀ զինված ուժերում առկա հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների ուղիների ու մեթոդների վերաբերյալ:

Փորձագետների կողմից հիմնականում նշվել են նույնաբովանդակ հիմնախնդիրներ, որոնք փոխկապված և փոխապայմանավորված են: Կարելի է դրանք առանձնացնել երկու հիմնական խմբերում: Առաջին խումբը վերաբերում է զինված ուժերի դերի և նշանակության ընկալմանը, երկրորդը՝ զինված ուժերում առկա խնդիրներին:

Որպես առաջին խումբ հիմնախնդիրներ՝ փորձագետներն առանձնացնում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերը որպես քաղաքական գործիք օգտագործելու պրակտիկան: Դա վերաբերում է համապետական ընտրություններին զինձառայողների մասնակցությանը. հատկապես ժամկետային զինձառայողները քվեարկում են ըստ հրամանատարության թելադրանքի, և քիչ չեն դեպքերը, երբ «հրամանը» չկատարելու համար զինձառայողները կոլեկտիվ պատասխանատվության են ենթարկվել: *Ըստ փորձագետի՝ «Բանակը չի կարող կիրառվել քաղաքական հարցեր լուծելու ընթացքում, քաղաքական իշխանությունը չի կարող կախված լինել բանակի ուժից, իսկ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը կախված է բանակից»:*

Որպես խնդրի լուծման միջոց՝ փորձագետների կողմից առաջարկվում է *«...սահմանափակել զինձառայողների ընտրության իրավունքը ձառայության ողջ ընթացքում: Ճիշտ է՝ նման սահմանափակումը կառաջացնի խնդիրներ մարդու իրավունքների տեսանկյունից, սակայն առկա պայմաններում զինձառայողների ընտրական իրավունքներն այլ կերպ են ոտնահարվում»:*

Ըստ հարցաքննված փորձագետների՝ քաղաքական նկատառումներով զինված ուժերի օգտագործման խնդիր է առաջացնում նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը, որով հնարավորություն է ընձեռնվում արտակարգ իրավիճակի պայմաններում զինված ուժերի օգտագործման համար, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը:

Որպես տվյալ խնդրի լուծման միջոց՝ փորձագետի կարծիքով *անհրաժեշտ է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում հստակ սահմանել և*



*տարանջատել զինված ուժերի մասնակցության դեպքերն ու իրավիճակները: Արտակարգ դրությանը զինված ուժերի մասնակցությունը պետք է սահմանափակվի միայն բնական աղետների դեպքերով: Անհրաժեշտ է օրենքով հստակ արգելել բանակի մասնակցությունը ներքին քաղաքացիական կամ քաղաքական գործընթացներին, ինչը պարզորոշ նախատեսված է ՀՀ սահմանադրությամբ:*

Երկրորդ խումբ հիմնախնդիրները վերաբերում են զինված ուժերի ներսում առկա խնդիրներին, որոնք փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից: Դրանով է բացատրվում հիմնախնդիրների՝ ըստ առաջնահերթության տարանջատման դժվարությունը:

Փորձագետների մեծ մասը համակարծիք են այն պնդմանը, որ բանակում արձանագրվող ցանկացած բացասական երևույթ ողջ հասարակության բարոյալքման և խեղաթյուրված արժեքների արտացոլանքն է: Միաժամանակ, նրանք պնդում են, որ «... հասարակության մեջ բացասական երևույթների տարածվածությունը չպետք է արդարացում հանդիսանա բանակում տարբեր հիմնախնդիրների գոյության համար»:

Որպես ՀՀ զինված ուժերի կարևորագույն հիմնախնդիր՝ փորձագետների կողմից առանձնացվում է կարգապահության ցածր մակարդակն ու բարոյական մթնոլորտի անկումը: Ըստ փորձագիտական կարծիքի՝ «Ներկայումս զինված ուժերում ներանձնային հարաբերությունները կարգավորվում են ոչ թե զինվորական օրենսդրության նորմերի համաձայն, այլ կլանային, գողական օրենքներով, որպիսի պայմաններում միջադեպերի բացառումը անհնարին է: Հենց կարգապահության ցածր աստիճանն է հանդիսանում ՀՀ զինված ուժերում հանցագործությունների, այդ թվում՝ սպանությունների, ինքնասպանությունների, տարբեր բռնությունների հիմնական պատճառը»:

Այլ փորձագետի կարծիքով՝ «Զինճառայողների շրջանում տիրում է անհանդուրժողականության մթնոլորտ: Ցանկացած չնչին առիթ կարող է հիմք հանդիսանալ ծանրագույն հանցագործության: Ընդունված նորմ է բանակում զինվորների հետ գրեհիկ, հայեոյախառն արտահայտություններով խոսելը, ինչը բոլորը չէ, որ հանդուրժում են»:

Նման պայմաններում պատասխանատվության առյուծի բաժինն ընկնում է սպայական կազմի ուսերին, քանի որ վերջինս պատասխանատվություն է կրում բոլոր զինճառայողների համար բարյացակամ մթնոլորտ ստեղծելու համար: Եթե հրամանատարությունն առաջնորդվում է զինվորական կանոնադրությունների դրույթներով, ապա ստորին օղակների զինճառայողների կողմից կանոնադրությունների խախտման դեպքերը, եթե ի սպառ չեն վերանա, միանշանակ կկրճատվեն:

ՀՀ զինված ուժերում տիրում է բռնության մթնոլորտ: «Ծեծերը, բռնությունները դաժանություն են, այլ ոչ խստություն: Բանակում կարգապահության հասնելու համար

պետք է տիրի խստություն, այլ ոչ դաժանություն: Ձինվորական ծառայությունը ինքնին պահանջում է կանոնների խստագույն պահպանություն բոլոր զինծառայողների կողմից. արտոնյալ զինծառայողների գոյությունը խարխլում է բանակի հիմքերը»:

«Ձինված ուժերում տիրում է սոցիալական անարդարություն, քանի որ բանակում ծառայում են սոցիալապես անապահով խավերի երեխաները»: Ֆինանսապես ապահով ընտանիքների երեխաները հազվադեպ են հայտնում սահմանամերձ գորամասերում, ինչն արդեն իսկ վկայում է գորակոչի շրջանում կոռուպցիոն երևույթների մասին:

«Ձինված ուժերում զինծառայողները ենթարկվում են ոչ միայն զինվորական պարտականությունների կատարման, այլև հանդես են գալիս որպես զինվորական ծառայությունից դուրս ստրկական աշխատուժ՝ ներգրավվելով շինարարական, գյուղատնտեսական, անասնապահական և այլ բնույթի անօրինական աշխատանքներում»:

Այս պայմաններում, ըստ փորձագետների, անհրաժեշտ է բարձրացնել զինված ուժերում վարչական պատժիչ միջոցների դերն ու կիրառությունը, բացառել արտոնյալ զինծառայողների կողմից չարաշահումները, արտաքին և ներքին ազդեցությունները սպայական կազմի տարբեր մակարդակներում: Ձինված ուժերում մարդու իրավունքների խախտումների նվազեցման գործում կարևոր է իրավապահ մարմինների գործունեությունը: Նրանց արդյունավետ գործունեությունը, հանցագործությունների պատշաճ քննությունն ու մեղավորներին արդարացի պատասխանատվության ենթարկելը կանխարգելիչ նշանակություն կունենան:

Միաժամանակ, փորձագետներն առաջարկում են «...արտոնյալ զինծառայողների նկատմամբ վերահսկողության նպատակով պաշտպանության նախարարության կողմից հրապարակել Հայաստանի բոլոր պետական պաշտոնյաների՝ ԱԺ-ի նախագահի, պատգամավորների, նախարարների և այլոց որդիների մասին տեղեկատվություն, թե ծառայում են արդյոք, թե ոչ, եթե ոչ՝ ինչու, ծառայության վայրը, կոչումը, պաշտոնը և այլն»:

«Անհրաժեշտ է բարձրացնել զինծառայողի բարոյական կերպարը հասարակության շրջանում, որպեսզի գորակոչիկը, գորակոչվելով բանակ, հպարտության զգացումով տոգորվի: Այստեղ շատ կարևոր է հանրակրթական դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների դերը»:

«Ձինված ուժերում բռնության մթնոլորտը հաղթահարելու համար անհրաժեշտ է ներմուծել քաղաքացիական կյանքի տարրեր՝ հնարավորություն տալով ավելի մոտ լինել բնակավայրերին, ավելի քիչ ժամանակ ծախսել գորամասում, գիշերել տանը՝ ընտանիքի անդամների հետ»: Միաժամանակ, «... բռնության դեպքերը նվազեցնելու համար անհրաժեշտ է զինվորների առօրյան դարձնել ավելի բովանդակալից, որպեսզի նրանք ազատ ժամանակ չունենան՝ բռնությունների հանգեցնող զբաղմունքով տարվելու համար»:

*Ըստ փորձագետներից մեկի՝ զինված ուժերում բռնությունների ու այլ հանցագործությունների թվի աճին նպաստում են նաև զորանոցային պայմանները, որտեղ մեկտեղված են 30-40 զինծառայողներ: Նման պայմաններում ոչ կանոնադրական հարաբերությունների ձևավորումն անխուսափելի է: Որպես նման հարաբերությունների ձևավորման ռիսկերի նվազման միջոց փորձագետը նշեց զորանոցների առանձնացման անհրաժեշտության մասին. «...բաժանել 3-4 հոգու համար նախատեսված սենյակների, որպիսի պայմաններում ինչպես վերահսկելիությունն ավելի արդյունավետ կլինի, այնպես էլ կապահովվի զինծառայողների անձնական կյանքի հարգանքի իրավունքը»:*

Ակտուալ են նաև զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների *հոգեկան և ֆիզիկական առողջության* խնդիրները: Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով սպաների աշխատանքը անարդյունավետ է այս իմաստով, քանի որ զինծառայողների հետ անհատական աշխատանք չի տարվում: Վերջիններս դիտարկվում են ընդհանրության մեջ, որտեղ «... թույլերը տրորվում են, իսկ ֆիզիկապես և հոգեպես դիմացկունները՝ մի կերպ դիմանում»: Նման մոտեցումը հանգեցնում է զինծառայողի մոտ հոգեբանական խնդիրների, որն իր հերթին բերում է ինքնասպանությունների, ինչու չէ, նաև այլ հանցագործությունների: Լինում են նաև դանդաղ ընթացող երևույթներ, երբ զինծառայողը զորացրվելուց հետո չի կարողանում դուրս գալ հոգեբանական լարված իրավիճակից, և ինքնասպանության դեպքերն արձանագրվում են արդեն քաղաքացիական կյանքում:

Այս առումով փորձագետների կողմից կարևորվում է հոգեբանի հաստիքի ներմուծումը զինված ուժերում, սակայն համապատասխան կադրերով համալրումը նույնպես խնդիր է. «*Հայաստանի Հանրապետությունում ռազմական հոգեբանության ամբիոն գործում է միայն Մանկավարժական համալսարանում, որտեղ ուսում են ստանում հիմնականում իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ դա հանգեցնում է իրավիճակի, երբ մշակութային սահմանափակումներից ելնելով՝ ոչ բոլորը կհամաձայնեն աշխատել զորամասերում*»:

*«Զինված ուժերի քանակական կազմն ապահովելու համար տարբեր հիվանդություններ ունեցող զորակոչիկները զորակոչվում են բանակ»:* Չնայած այն հանգամանքին, որ զինվորական ծառայության ընթացքում իրականացվում է նախորդ տարիների համեմատ առավել որակյալ բուժսպասարկում (զինվորական հոսպիտալներն ունեն բարձրորակ մասնագետներ, անհրաժեշտ դեղորայք և սարքավորումներ), սակայն ուսումնասիրությունները փաստում են, որ բազմաթիվ զինվորներ զորացրվում են ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդություններով, որոնց բուժման համար ծնողները մեծամասամբ չեն ունենում համապատասխան միջոցներ, ինչը հանգեցնում է հիվանդության խորացման, ծանր հաշմանդամության, նույնիսկ՝ մահվան:

Տվյալ խնդրի լուծման համար փորձագետի կողմից առաջարկվում է օրենսդրորեն և գործնականում ապահովել առողջության պատճառով *շուտ գորացրված, ինչպես նաև ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության բուժման նկատառումով զինծառայողի անվճար բուժսպասարկման իրավունքը*»:

Փորձագետներն անդրադարձան նաև ՀՀ զինված ուժերում հոգևոր ծառայության իրականացման խնդրին, այն է. ՀՀ Զինված ուժերում հոգևոր ծառայություն իրականացնում են միայն Առաքելական եկեղեցու սպասավորները: Սա առաջացնում է *կրոնի ազատության իրավունքի* ոտնահարում. զինծառայողները «... *վախենում են բարձրաձայնել, որ դավանում են այլ կրոնի կամ չեն դավանում որևէ կրոնի առհասարակ*»:

Փորձագետները, որպես ՀՀ զինված ուժերի հիմնախնդիր, նշեցին նաև զինված ուժերում իրականացվող թյուր քաղաքականությունը, սպայական անձնակազմի ոչ բավարար կրթական մակարդակը: «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը չի ապահովում պատշաճ կրթություն, ինչն էլ հանգեցնում է իրավիճակի, երբ գորացրվող սպայական կազմը չի համալրվում գիտակ կազմով: Թերևս դրանով է պայմանավորված Պաշտպանության նախարարության կողմից արդեն երրորդ տարին իրականացվող ծրագիրը, որի շրջանակներում այլ մասնագիտություններ ունեցող շրջանավարտները հրավիրվում են ռազմական ինստիտուտ մեկ տարվա կուրսերի և այնուհետև համալրում սպայական կազմը»:

Պաշտպանության նախարարության կողմից իրականացվում են նաև սպայական կազմի վերապատրաստումներ՝ այդ թվում արտերկրում: Սակայն այս ոլորտը նույնպես կրում է կոռուպցիոն ռիսկեր, քանի որ պարզ չէ, թե թեկնածուների ընտրությունն ինչպես է կատարվում. հաճախ «... *թեկնածուները կաշառք են տալիս՝ այդ ծրագրերում ընդգրկվելու համար*»:

Մյուս կողմից չի իրականացվում սպայական կազմի վերանայում. կրթական, ֆիզիկական պատրաստվածության ցածր մակարդակով, հանցավոր անցյալով զինծառայողները շարունակում են զբաղեցնել պաշտոններ: Բացակայում են նաև սպաների պաշտոնական առաջխաղացման հստակ չափանիշները: Դրանք հիմնված են միայն սուբյեկտիվ գործոնների վրա, իսկ օբյեկտիվ չափանիշները հստակեցված չեն:

Զինված ուժերում առկա կարևորագույն խնդիր է ժամկետային զինծառայողների ցածր իրավագիտակցության մակարդակը. իրենց իրավունքների վերաբերյալ վերջիններս, որպես կանոն, տեղեկացված չեն:

*Ըստ փորձագետների՝ այդ առթիվ «անհրաժեշտ է բարձրացնել ռազմական կրթահամալիրների որակը, իրականացնել սպայական կազմի պատշաճ*

դաստիարակությունը, որպեսզի սպայական կազմը դառնա զինվորական մտավորականության մի կարևոր հատվածը և գիտակցի իր արժանապատվությունը: Հարկավոր է հատուկ դասաժամեր կամ գործնական աշխատաժողովներ կազմակերպել զինծառայողների համար մարդու իրավունքների վերաբերյալ: Ի լրումն դրա՝ զինված ուժերում պետք է իրականացնել զինծառայողների մշակութային դաստիարակությունը: Քանի որ զորակոչիկների շրջանում մեծ թիվ են կազմում առհասարակ կրթություն չստացած երիտասարդները, անհրաժեշտ է ապահովել նրանց կրթություն ստանալու հնարավորությունները նույնիսկ շատ համեստ միջոցներով, կամավորների ներգրավմամբ, ինչին պետք է օժանդակեն ինչպես հասարակական կազմակերպությունները, այնպես էլ համալսարանները, դպրոցները»:

Սույն հարցի առնչությամբ կարելի է վկայակոչել լատվիական փորձը: Լատվիայի պաշտպանության նախարարության կազմում գործում է Ջբաղվածության և երիտասարդության պաշտպանության կենտրոն, որն իրականացնում է զինված ուժերում երիտասարդների զբաղվածության ծրագրեր, կրթում է երիտասարդներին պաշտպանությանը վերաբերող հարցերում, ինչպես նաև տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներ ազգային պաշտպանությանը վերաբերող թեմաներով:

Ձորակոչի գործընթացում զորակոչիկների իրավունքների խախտումները բազմաթիվ են. զինկոմիսարիատից ծանուցագիր չի ուղարկվում, հեռախոսով են կանչում կամ այլ անձանց միջոցով են ծանուցում զորակոչիկին: Ձորակոչի կարևորագույն խնդիրը առողջական վիճակի ոչ պատշաճ հետազոտությունն է: Բանակ են զորակոչվում ծառայության համար ոչ պիտանի երիտասարդներ կամ զորակոչվում են ոչ շարային ծառայության, ինչը ևս ծառայության ընթացքում խնդիրներ է առաջացնում, քանի որ զորամասերում այս հանգամանքը (ոչ շարային ծառայության) հաշվի չի առնվում:

Ձորակոչի ընթացքում պատշաճ չի ուսումնասիրվում նաև զորակոչիկի ընտանեկան դրությունը: Ըստ փորձագետի՝ «Օրենքը չի կարող նախատեսել բոլոր հնարավոր դեպքերը, որոնց առկայության դեպքում կարելի է տարկետում տրամադրել հերթական զորակոչից՝ թողնելով դա զորակոչային հանձնաժողովների գնահատմանը, իսկ դա բերում է ինչպես կոռուպցիոն երևույթների, այնպես էլ այլ ծանր հետևանքների»:

Ձորակոչի ընթացքում արձանագրվող խնդիրներ են նաև բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի խախտումները, որոնք արձանագրվում են հիմնականում ուսումնական զորամասեր զորակոչված զինվորների շրջանում, որոնք այնուհետև տեղաբաշխվում են ինչպես սահմանամերձ զորամասերում, այնպես էլ պաշտպանական բանակում:

Ձորակոչի ընթացքում տեղի ունեցող իրավախախտումների նվազեցման գործում կարևորվում է ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ հասարակական խորհրդի դերը, որոնք պարտավոր են ապահովել գորակոչիկի իրավունքների առավելագույն պաշտպանություն: Ջինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքը ուսումը շարունակելու համար, ըստ փորձագետներից մեկի, անհրաժեշտ է վերացնել: Դա կհանգեցնի ինչպես զինվորմիսարհատներում, այնպես էլ ուսումնական հաստատություններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման:

Փորձագետների կողմից շեշտվեց մեկ այլ (թերևս քաղաքական) խնդիր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ ԼՂՀ պաշտպանական բանակում ծառայելու հարցը, ինչը օրենսդրական կարգավորում չունի: Ջինծառայողները որպես կամավորներ են մեկնում ԼՂՀ ծառայության՝ անձամբ դա չգիտակցելով: *«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ ԼՂՀ պաշտպանական բանակում ծառայելու հարցը պետք է իրավական կարգավորման ենթարկվի երկու կողմերի միջև կնքված համաձայնագրով, որով պետք է նախատեսվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայելու հնարավորությունը»:*

Ըստ փորձագետների՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարևորագույն հիմնախնդիրներից են նաև կոռուպցիոն երևույթները, որոնք զինված ուժերում տեղ գտած բազմաթիվ այլ բացասական երևույթների պատճառ են հանդիսանում: Կոռուպցիոն երևույթներն առկա են ինչպես գորակոչի կազմակերպման ու իրականացման, այնպես էլ ժամկետային զինվորական ծառայության ողջ ընթացքում: Ջինվորական ծառայությունից ազատում, տարկետման իրավունքի տրամադրում, բնակավայրին մոտ ծառայելու հնարավորություն, ծառայությունից արձակում, արձակուրդի տրամադրում և այլ նմանատիպ հարցեր հաճախ լուծում են գտնում կոռուպցիոն ճանապարհով:

Կոռուպցիոն ամենամեծ ռիսկն իր մեջ պարունակում է ռազմական բյուջեի պլանավորման, ծրագրման և իրականացման գործընթացը. *«Հասարակությունը չի տեղեկանում, թե ինչ գնումների վրա են ծախսվում բյուջեի միջոցները: Արդյո՞ք զինծառայողները ստանում են նվազագույն կարիքների բավարարման համար անհրաժեշտ ապրանքներ: Օրինակ, բազմաթիվ զինծառայողներ հայտնում են, որ ծնողներն են ուղարկում հագուստ ու հիգիենայի պարագաներ: Սա նույնպես կոռուպցիա է»:*

Մեկ այլ խնդիր է, թե ովքեր են իրականացնում մթերքների և այլ ապրանքների մատակարարումը զինված ուժերին, ինչ գներով և այլն: *«Շատ դեպքերում փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար տենդերին մասնակցելու հնարավորությունը*

*արդեն իսկ սահմանափակված է դրա հայտարարությամբ ներկայացված պահանջներով»:*

Կոռուպցիոն երևույթների նվազեցման հարցում մեծ նշանակություն ունի զինված ուժերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Բոլոր այն հարցերը, որոնք, օրենքի համաձայն, չեն հանդիսանում պետական կամ ռազմական գաղտնիք, պետք է հասանելի լինեն հասարակության լայն շերտերին: *«Անհրաժեշտ է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում հստակ նախատեսել և տարանջատել պետական և ռազմական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը: Անհրաժեշտ է ապահովել պաշտպանության նախարարությանը մատակարարվող ապրանքների ծավալների, գների, մատակարարումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Միաժամանակ, ապահովել փոքր և մանր բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությունը տվյալ գործընթացին»:*

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում տիրում է *անպատժելիության մթնոլորտ* ինչպես կարգապահական զանցանքների, այնպես էլ հանցագործությունների դեպքերում: Ըստ փորձագետների՝ *«զինված ուժերում գերակայում է հանցագործությունները պարտակելու պրակտիկան: Մյուս կողմից, հանցագործությունների առնչությամբ քննությունը տարվում է միակողմանիորեն՝ ի հիմնավորումն որևէ հորինված վարկածի: Միաժամանակ, քննության իրականացումն անկախ չէ: Միայն այն հանգամանքը, որ ռազմական ոստիկանությունը, քննչական վարչությունը հանդիսանում են Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներ, բացառում է ինչպես հետաքննիչների, այնպես էլ քննիչների անկախությունը: Արդյունքում սպայական, հիմնականում բարձր հրամանատարական կազմի ներկայացուցիչներին պատասխանատվության ենթարկելը բարդանում է»:* Զինվորական հանցագործություններով քննությունների ընթացքում առկա այլ հիմնախնդիրներից են նաև դեպքի վայրերի խեղաթյուրումները, փորձաքննությունների ոչ ժամանակին և ոչ պատշաճ, թերի իրականացումը, ապացույցների կորուստը և այլն:

Քրեական գործերով քննության անարդյունավետությունը հանգեցնում է նրան, որ պաշտպաններին հնարավորություն չի տրվում անարգել այցելել գորամասեր, ձեռք բերել ապացույցներ, հանդիպել հանցագործության ակնատես վկաներին. *«Անհրաժեշտ է ստանալ նախարարի թույլտվությունը, որը տրվելու ժամանակ արդեն ուշ է լինում: Այդ ընթացքում քննչական գործողություններ են կատարվում զինվորների հետ, ստացվում են ապացույցներ, արդյունքում գործի քննությունն ընթանում է արհեստական սցենարով»:*

Անպատժելիության մթնոլորտը պայմանավորված է նաև զինված ուժերում ներքին բողոքարկման համակարգի բացակայությամբ: ՀՀ զինված ուժերում բողոքների ներկայացման կամ դրանց քննման անկախ մեխանիզմ գոյություն չունի: Դա հանգեցնում

է զինված ուժերում կամայականությունների և օրենքի գերակայության սկզբունքի ոտնահարման: Փորձագետի առաջարկության համաձայն՝ «Առանց ոտնահարելու զինված ուժերում ենթակայության սկզբունքը՝ անհրաժեշտ է ստեղծել անկախ և հաշվետու քաղաքացիական կառույց՝ ներքին բողոքարկման համար, ինչով կապահովվի նաև քաղաքացիական վերահսկողությունը»: Միաժամանակ զինված ուժերում տեղի ունեցող հանցագործությունների քննության օբյեկտիվությունն ու անկախությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է «պաշտպանության նախարարության կառուցվածքից դուրս բերել ռազմական ոստիկանությունը և քննչական վարչությունը՝ ի ապահովումն զինված ուժերում տեղի ունեցող հանցագործությունների քննության օբյեկտիվության և անկախության»:

Զինված ուժերի՝ փակ հաստատություն հանդիսանալը սահմանափակում է զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Զինված ուժերից ստացված տեղեկատվությունը քիչ է և միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը: Հստակեցված չէ պետական և ռազմական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության շրջանակն ու սահմանը, ինչը հանգեցնում է իրավիճակի, երբ ցանկացած տեղեկատվություն կարող է որակվել որպես պետական կամ ռազմական գաղտնիք: Փորձագետի հավաստմամբ՝ «հասարակությունը պետք է տեղեկացված լինի զինվորների առօրյայի, սննդի, հագուստի և այլ հարցերի վերաբերյալ: Մյուս կողմից, տեղեկատվության բացակայությունը հաճախ հանգեցնում է ապատեղեկատվության, քանի որ լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները զինված ուժերի մասին տեղեկատվությունը ստանում են իրենց հասանելի աղբյուրներից, որոնք հավաստի չեն, ինչի արդյունքում ստեղծվում է ոչ հստակ ինֆորմացիոն դաշտ: Իսկ պաշտպանության նախարարության չոր հաղորդագրությունները չեն բավարարում հասարակության հետաքրքրությունը»:

Հասարակական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ իրականացվում է սակավաթիվ կազմակերպությունների կողմից, շատ են այն կազմակերպությունները, որոնք միայն ձևական (ֆորմալ) առումով են առնչվում զինված ուժերին: Հասարակական դաշտի մասնագիտական գործունեությունը զինված ուժերի առնչությամբ համարժեք չէ խնդիրների ծավալին: Օրինակ, զինված ուժերում կոռուպցիոն երևույթները չեն գնահատվում որպես հիմնախնդիր, կոռուպցիոն երևույթների բացահայտումներին միշտ չէ ընթացք տրվում կամ հարուցված քրեական գործերը կարճվում են տարբեր հիմնավորումներով:

«Քաղաքացիական ակտիվության համար նախատեսված են հնարավոր տարբերակներ, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ քաղաքացիներն իրենք են վախենում խնդիրների լուծման համար ակտիվություն ցուցաբերել: Միաժամանակ,



առավել արդյունավետ է քաղաքացիական նախաձեռնությունների աշխատանքն ու գործելակերպը: Դրանք, ազդելով քաղաքացու գիտակցության վրա, փոխում են նրան՝ դարձնելով ավելի ինքնորոշված ու պահանջատեր սեփական պետությանը վերաբերող հարցերում»:

«Պաշտպանության նախարարությունը պետք է առավել սերտ համագործակցի հասարակական կազմակերպությունների, նախաձեռնությունների հետ: Անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել բոլոր կազմակերպություններին այցելել գորամասեր, ծանոթանալ զինձառայողների կենցաղին, առօրյային, խնդիրներին»:

«Նույնը վերաբերում է նաև տեղեկատվության տրամադրմանը և հրապարակայնացմանը: Պաշտպանության նախարարությունը պետք է տրամադրի հնարավորինս արժանահավատ և ծավալուն տեղեկատվություն»:

Միաժամանակ, փորձագետները ոչ բավարար են գնահատում պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի գործունեությունը՝ այն համարելով ձևական կառույց: Ըստ նրանց՝ «անհրաժեշտ է, որպեսզի Խորհուրդը զինված ուժերում տիրող իրավիճակի մասին հաշվետվություններ ներկայացնի ոչ միայն Պաշտպանության նախարարին, այլև հասարակությանը, քանի որ վերահսկողությունը ենթադրում է հաշվետվողականություն և թափանցիկություն»:

Փորձագետների մեծ մասի կողմից ցածր է գնահատվում նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեությունը, ինչը բացատրվում է Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների տարանջատման սկզբունքի ոչ լիարժեք կիրառությամբ: «Մի կողմից, այս ինստիտուտը զրկված է լուրջ քայլեր ձեռնարկելու հնարավորությունից, քանի որ այդ դեպքում նրա գործունեության համար իրական խոչընդոտներ կստեղծվեն, մյուս կողմից՝ բացասական երևույթների դեմ չպայքարելով այն վերածվում է իշխանության կցորդի: Հետևաբար, Մարդու իրավունքների պաշտպանը օբյեկտիվորեն չի կարող կտրուկ միջոցներ կիրառել, քանի որ նրա առաջ կարող են փակվել բոլոր ճանապարհները, որոնց դեպքում՝ ինքը կարող էր միջնորդելով ինչ-որ իրավունքներ պաշտպանել»:

Ռազմական օմբուդսմենի կամ զինձառայողների իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներմուծումը փորձագետների կողմից միանշանակ չի ընդունվում: Մի կողմից, ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման դեպքում, անհրաժեշտ է ստեղծել նաև այլ կատեգորիաների անձանց (կանանց, երեխաների, հաշմանդամների և այլն) իրավունքի պաշտպանի պաշտոններ: Մյուս կողմից, ռազմական ոլորտում առաջացող հարաբերությունները տարբերվում են քաղաքացիական կյանքում առաջացող հարաբերություններից, հետևաբար, մասնագիտացված, պառլամենտին հաշվետու մարդու իրավունքների պաշտպանը առավել արդյունավետ կարող է լինել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցում:

Այս պայմաններում, անհրաժեշտ է ուժեղացնել մարդու իրավունքների պաշտպանի վերահսկողական մեխանիզմները և նպաստել բազմազան և լայնածավալ համագործակցությանը ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակության ներկայացուցիչների հետ:

## ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ զինված ուժերն օգտագործվում են ՀՀ Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելուց հետո՝ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում<sup>20</sup>: Ռազմական դրություն հայտարարելու դեպքում նախագահը կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու:

Այդպիսի հանգամանքներ են՝

ա) այլ պետության զինված ուժերի ներխուժումը Հայաստանի Հանրապետության տարածք, նման ներխուժման հետևանքով Հայաստանի Հանրապետության ցանկացած տարածքի բռնազավթումը.

բ) այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգի առկայությունը.

գ) այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի ուժահարումը.

դ) այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կամ այլ զորքերի վրա հարձակումը՝ անկախ վերջիններիս տեղակայման վայրից.

ե) այլ պետության գործողությունները, որոնք թույլ են տալիս երրորդ պետությանը իր տարածքն օգտագործել Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում իրականացնելու համար.

զ) այլ պետության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ուղարկված կամ նրա անունից գործող զինված խմբերի, ապակայունացնող ուժերի կամ վարձկանների զինված ոտնձգությունները Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում կարող են համարվել նաև այլ պետության զինված ուժերի կողմից ցանկացած այլ գործողությունները կամ դրանց նախապատրաստությունը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կամ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների և նորմերի խախտմամբ իրականացված այլ գործողությունները, որոնք իրական սպառնալիք են ստեղծում Հայաստանի

<sup>20</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 55, կետ 13:

Հանրապետության ինքնիշխանության, անվտանգության և տարածքային ամբողջականության համար, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետությանը պատերազմ հայտարարելը<sup>21</sup>:

Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվում են մի շարք միջոցառումներ և ժամանակավոր սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի փոխադրում լիակատար մարտական պատրաստականության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարում և անցկացում<sup>22</sup>:

ՀՀ զինված ուժերն օգտագործվում են նաև ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու համար: Այսպես՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության և այլ պետական լիազոր մարմինների, Հայաստանի փրկարար ծառայության ուժերն ու միջոցները»<sup>23</sup>:

Զինված ուժերի օգտագործման հնարավորություն նախատեսվում է նաև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կամ դրա տարածքի մի մասում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում<sup>24</sup>: ՀՀ Սահմանադրությունը նախագահին իրավունք է վերապահում սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարել արտակարգ դրություն, իրականացնել իրավիճակից թելադրվող միջոցառումներ: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտակարգ դրությունը հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները<sup>25</sup>: Զինված ուժերի ներգրավումը արտակարգ դրության ընթացքում հնարավոր է միայն ի ապահովումն ռեժիմային, հատուկ ռեժիմային և հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող

<sup>21</sup> «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

<sup>22</sup> Նույն տեղում, հոդված 8, 1-ին կետ, ա ենթակետ:

<sup>23</sup> Նույն տեղում, հոդված 9:

<sup>24</sup> «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2012թ. մարտի 21-ին:

<sup>25</sup> Նույն տեղում, հոդված 1, մաս 2:

օբյեկտների պաշտպանության (հոդված 9, մաս 2, կետ 2), անօրինական զինված միավորումների գործունեության դադարեցման (հոդված 9, մաս 2, կետ 3), արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, մարդկանց կյանքի և առողջության երաշխավորման և նյութական արժեքների պահպանության (հոդված 9, մաս 2, կետ 4) նպատակներով միայն այն դեպքում, եթե վերոգրյալ խնդիրները հնարավոր չէ ապահովել ոստիկանության և ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերով, և զինված ուժերը գործում են ոստիկանության, ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերի հետ փոխգործակցության և փոխօգնության շրջանակներում<sup>26</sup>: Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ներգրավված զինված ուժերի զինձառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառումն իրականացվում է այն պայմաններին, կարգին ու սահմաններին համապատասխան, որոնք սահմանված են «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքով<sup>27</sup>: Միաժամանակ, արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ներգրավված զինձառայողները անցնում են հատուկ պատրաստություն՝ ոստիկանության կողմից իր խնդիրների իրականացման նպատակով գործադրվող հմտությունների և մեթոդների վերաբերյալ, և զինձառայողները կարող են ներգրավվել միայն այդ պատրաստությունն անցնելուց հետո<sup>28</sup>:

Զինված ուժերը արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու համար ներգրավվում են «Իրավական դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով կամ դրանում կատարված փոփոխությամբ: Այն անհապաղ ներկայացվում է Ազգային ժողովին, ինչի կապակցությամբ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

---

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 9, 3-4-րդ մասեր:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 9, 5-րդ մաս:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 9, 6-րդ մաս:

## ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Համաշխարհային փորձի շրջանակներում տարբերակում են զինվորական ծառայության հետևյալ տեսակները.

**Պարտադիր զինվորական ծառայություն** (Mandatory service), երբ որոշակի տարիքի հասած, ֆիզիկապես ու հոգեպես առողջ արական սեռի (իսկ որոշ երկրներում նաև իգական սեռի) ներկայացուցիչները պարտավորվում են անցնել զինվորական ծառայություն՝ օրենքով սահմանված ժամկետներով:

**Կամավորության վրա հիմնված զինվորական ծառայություն** (Voluntary service), երբ որոշակի տարիքի հասած, ֆիզիկապես ու հոգեպես առողջ արական և իգական սեռի ներկայացուցիչներն իրենց կամքով կարող են ընտրել զինվորական ծառայություն իրականացնել, հիմնականում դրամական և այլ փոխհատուցմամբ:

**Այլընտրանքային ծառայություն** (Alternatives to military service), որն իր հերթին ենթադրում է.

- ✓ այլընտրանքային զինվորական ծառայություն,
- ✓ այլընտրանքային քաղաքացիական ծառայություն (non-military alternative):

Այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համալրումը կատարվում է ընդհանուր զինապարտության սկզբունքով: Ընդհանուր զինապարտությունը քաղաքացու՝ օրենքով սահմանված պարտականությունն է զինվորական ծառայություն տանել զինված ուժերում, անցնել արտաբանակային ծառայության տարբեր ձևեր և կատարել երկրի պաշտպանության հետ կապված այլ պարտականություններ: Հայկական զինված ուժերի կազմակերպման կարևորագույն սկզբունքներից են կադրային և ընդհանուր զինապարտության վրա հիմնված բանակի ստեղծումը, կառավարման կենտրոնացումը, միանձնյա ղեկավարումը և այլն: ՀՀ բանակի համալրման գորակոչային սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որը սահմանում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը օրենքով սահմանված կարգով մասնակցելու Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

ՀՀ քաղաքացիների՝ պարտադիր զինվորական ծառայություն կրելու պարտականության հետ կապված հարցերը կարգավորվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով<sup>29</sup>: Օրենքը որոշակիորեն նեղացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու պարտականություն կրող անձանց

<sup>29</sup> Ընդունվել է 1998թ. դեկտեմբերի 16-ին:

շրջանակը՝ զինապարտ համարելով միայն նախագորակոչային, գորակոչային տարիքի և պահեստագործում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի ներկայացուցիչներին<sup>30</sup>: Հայաստանի Հանրապետությունում զինապարտությունն ընդգրկում է զինապարտների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, գորակոչը և զինվորական ծառայությունը, պահեստագործում գտնվելը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված է ժամկետային և պահեստագործային զինվորական ծառայություն:

Ժամկետային զինվորական ծառայությունն իր հերթին բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր գորակոչված շարքային և սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը շարքային կազմի (ներառյալ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) համար սահմանված է 24 ամիս, իսկ առաջին խմբի պահեստագործի սպաների համար՝ 2-3 տարի<sup>31</sup>:

Հայաստանի Հանրապետությունում շարքային կազմի պարտադիր գորակոչը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետում՝ տարին երկու անգամ: Իսկ պահեստագործի սպաների գորակոչը հայտարարվում է Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում:

Պարտադիր զինվորական ծառայության են գորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի գորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր առողջական վիճակից ելնելով՝ ճանաչվել են պիտանի զինվորական ծառայության համար խաղաղ պայմաններում<sup>32</sup>:

2003 թ. ՀՀ-ում ներդրվեց նաև այլընտրանքային զինվորական ծառայության համակարգը՝ հնարավորություն տալով կրոնական և այլ համոզմունքների հիման վրա պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվող անձանց՝ իրականացնել զինվորականի հետ չկապված ծառայություն: «Այլընտրանքային ծառայության մասին»

<sup>30</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

<sup>31</sup> «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

<sup>32</sup> Որպես բացառություն՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված են այն անձինք, ովքեր կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում են ստացել: Նրանք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը: Եթե ուսումը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող գորակոչի ընթացքում:

ՀՀ օրենքի համաձայն՝ այն փոխարինում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը և կապված չէ զենք կրելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է այլընտրանքային զինվորական ծառայություն<sup>33</sup> և այլընտրանքային աշխատանքային ծառայություն<sup>34</sup>: Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանված է 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 42 ամիս<sup>35</sup>:

---

<sup>33</sup> Ենթադրում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայությունը:

<sup>34</sup> Ենթադրում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

<sup>35</sup> «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:



**ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ**

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի գործընթացի կազմակերպման և իրականացման համար գործում է գորակոչային հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ տեղական գորակոչային, մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովներ և հանրապետական գորակոչային հանձնաժողով:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովը ստեղծվում է Կառավարության որոշմամբ՝ անդամների անհատական նշանակման կարգով: Այն հանդիսանում է գորակոչային գործընթացի իրականացման բարձրագույն մարմինը և օժտված է ստորադաս հանձնաժողովների գործունեության նկատմամբ ղեկավարություն և վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ: Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նախագահ ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարը:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի անցկացման համար մարզերում և Երևան քաղաքում համապատասխանաբար ստեղծվում են մարզային և Երևանի քաղաքային գորակոչային հանձնաժողովներ՝ տվյալ մարզի մարզպետի և Երևանի քաղաքապետի նախագահությամբ:

Միաժամանակ, յուրաքանչյուր զինկոմիսարիատում կազմվում է տեղական գորակոչային հանձնաժողով՝ բժիշկ մասնագետների ներգրավմամբ, համապատասխան զինվորական կոմիսարի նախագահությամբ: Հայաստանի Հանրապետությունում գործում է 44 տարածքային զինկոմիսարիատ:

Տեղական գորակոչային հանձնաժողովները ստեղծվում են ըստ կոմիսարիատի սպասարկման տարածքների՝ մարզպետի (Երևանի քաղաքապետի) կողմից՝ համապատասխան զինկոմիսարի ներկայացմամբ: Տեղական գորակոչային հանձնաժողովը նախագահում է համապատասխան զինվորական կոմիսարը<sup>36</sup>: Դրանում ընդգրկվում են բժիշկ-մասնագետները՝ թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ,

---

<sup>36</sup> Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ ՀՀ օրենդրությամբ կարգավորված չէ, թե ինչ կազմ ունի տեղական գորակոչային հանձնաժողովը՝ զինվորական պաշտոնյաների մասով: Ավելին, 2011թ. ապրիլի 7-ի «2011 թվականի գարնանային գորակոչը կազմակերպելու մասին» կառավարության թիվ 337-Ն որոշման 7-րդ կետում նշվում է. «Հանձնարարել ՀՀ մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին ... հաստատել տեղական (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների) գորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Երևանում, անհրաժեշտության դեպքում, նաև հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին»: Հետևաբար, օրենսդրական նման կարգավորումից անհստակ է, թե զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կազմի մեջ մտնող բոլոր մասնագետներն են արդյոք գորակոչային հանձնաժողովի անդամ, թե՞ միայն ավագ բժիշկը:

ակնաբույժ, օտոլարինգոլոգ, ստոմատոլոգ, մաշկաբան և բուժքույր: Բժշկական հանձնաժողովի կազմի բժիշկ մասնագետներից տեղական գորակոչային հանձնաժողովի նախագահը նշանակում է ավագ բժիշկ, ով որպես փորձագետ ընդգրկվում է գորակոչային հանձնաժողովի կազմում<sup>37</sup>:

Տեղական գորակոչային հանձնաժողովի հիմնական գործառույթը գորակոչիկների համակողմանի բժշկական փորձաքննության իրականացումն է՝ առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար: Բժշկական փորձաքննությունն իրականացվում է անհատականորեն: Բժշկական փորձաքննությունից հետո յուրաքանչյուր բժիշկ գորակոչիկի հաշվառման քարտում գրանցում է ախտորոշումը, պարտադիր զինվորական ծառայության համար նրա պիտանիության մասին եզրակացությունը: Ջինվորական ծառայության համար պիտանիությունը սահմանափակող հիվանդություններ, վնասվածքների հետևանքներ, ֆիզիկական թերզարգացում ունեցող գորակոչիկների վերաբերյալ ձևակերպվում է նաև բժշկի եզրակացություն:

Բժշկական փորձաքննության արդյունքում բժշկական հանձնաժողովի կողմից կայացվում է ներքոնշյալ որոշումներից մեկն այն մասին, որ գորակոչիկը.

- ա) պիտանի է շարային ծառայության համար,
- բ) պիտանի է շարային ծառայության համար՝ սահմանափակումով,
- գ) պիտանի է ոչ շարային ծառայության համար,
- դ) բուժման համար կարիք ունի տարկետման մինչև 1 տարի (որոշումը ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովին),
- ե) ժամանակավորապես պիտանի չէ զինվորական ծառայության համար (որոշումը ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովին),
- զ) պիտանի չէ զինվորական ծառայության համար (որոշումը ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովին),
- է) պիտանի չէ զինվորական ծառայության համար և ենթակա չէ վերափորձաքննության (որոշումը ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովին),
- ը) պիտանի չէ զինվորական ծառայության<sup>38</sup>:

Բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա՝ զինվորական ծառայության համար պիտանի ճանաչման դեպքում տեղական գորակոչային հանձնաժողովի կողմից կայացվում է որոշում զինապարտին պարտադիր զինվորական ծառայության

<sup>37</sup> «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՊՆ թիվ 175 հրաման, 26 փետրվարի, 2010թ.:

<sup>38</sup> «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՊՆ հրաման, կետ 91:

գորակոչելու և ըստ գորատեսակների զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին<sup>39</sup>:

Ջորակոչիկին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացության համար գորակոչային հանձնաժողովի կողմից կենտրոնական բժշկական հանձնաժողով է ներկայացվում նախնական եզրակացություն:

Այն դեպքերում, երբ գորակոչիկի առողջական վիճակը թույլ չի տալիս նրան գորակոչել, նա ներկայացվում է կենտրոնական բժշկական հանձնաժողով՝ վերջնական որոշում կայացնելու համար: Կցագրման ժամանակ հաշվառումից հանված և վերափորձաքննության ոչ ենթակա ճանաչված նախագորակոչիկներն անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հետազոտման են ուղարկվում ԿԲՀ-ի կողմից<sup>40</sup>:

Ջորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ վերջնական որոշման կայացման դժվարության դեպքում գորակոչային հանձնաժողովը նրան ուղարկում է քաղաքացիական բուժօգնության<sup>41</sup>: Ուղեգրում նշվում է նախնական ախտորոշումը և թե հատկապես ինչ պետք է ճշտել հետազոտության ժամանակ: Ուղեգրին կցվում է գորակոչիկի առողջական վիճակի հետազոտման ակտը:

Տեղական գորակոչային հանձնաժողովները նաև որոշում են կայացնում գորակոչիկի՝ ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու մասին, որը ներկայացվում է մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի հաստատմանը: Օրենքով չնախատեսված դեպքերում գորակոչիկին ընտանեկան դրության բերումով զինվորական ծառայությունից տարկետում տալու առթիվ տեղական գորակոչային հանձնաժողովների կողմից կայացվում է եզրակացություն՝ ներկայացնելով մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովին<sup>42</sup>:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի կազմակերպման մարմիններից հաջորդ օդակը մարզային և Երևանի քաղաքային գորակոչային հանձնաժողովներն են, որոնք ստեղծվում են Կառավարության կողմից՝ ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման: Մարզային և Երևանի քաղաքային գորակոչային

<sup>39</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

<sup>40</sup> «Զինապարտության բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՊՆ հրաման, կետ 41:

<sup>41</sup> Զինապարտության կցագրման, գորակոչի, զինվորական ծառայության անցնելու և վարժական հավաքի կանչելու ժամանակ բժշկական հետազոտություն անցկացնող բժշկական կազմակերպությունների ցանկը հաստատված է կառավարության 2002թ. հունիսի 13-ի թիվ 846-Ն որոշմամբ:

<sup>42</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

հանձնաժողովների նախագահներ ի պաշտոնե հանդիսանում են համապատասխան մարզպետը և Երևանի քաղաքապետը<sup>43</sup>:

Մարզային և Երևանի քաղաքային գորակոչային հանձնաժողովներն իրականացնում են տեղական գորակոչային հանձնաժողովների գործնետության համակարգումն ու վերահսկողությունը:

Մարզային և Երևանի քաղաքային գորակոչային հանձնաժողովների իրավասությանն են պատկանում.

– գորակոչիկներին ընտանեկան դրության և ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին տեղական գորակոչային հանձնաժողովների որոշումները հաստատելը,

– գորակոչիկներին ընտանեկան դրության բերումով օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ որոշում կայացնելը և այն հանրապետական գորակոչային հանձնաժողովին ներկայացնելը<sup>44</sup>:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի իրականացման բարձրագույն մարմինը հանրապետական գորակոչային հանձնաժողովն է, որը կազմավորվում է Կառավարության որոշման հիման վրա՝ անդամների անհատական ընդգրկման կարգով: Հանրապետական գորակոչային հանձնաժողովը հանդիսանում է գորակոչային հանձնաժողովների բարձրագույն մարմինը՝ օժտված ստորադաս հանձնաժողովների աշխատանքների ղեկավարության և գործունետության վերահսկողության գործառնություններով:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի իրավասությանն է պատկանում գորակոչիկին առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու որոշման ընդունումը:

Միաժամանակ, հանրապետական գորակոչային հանձնաժողովի լիազորությունների մեջ է պաշտպանության նախարարին եզրակացություն ներկայացնելը՝ գորակոչիկին ընտանեկան դրության բերումով օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու մասին մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի իրավասությանն է պատկանում ստորադաս գորակոչային հանձնաժողովների որոշումների դեմ բողոքների քննությունը: Մասնավորապես, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝

<sup>43</sup> Հատկանշական է, որ մարզային և Երևանի քաղաքային գորակոչային հանձնաժողովների կազմի որակական և քանակական չափանիշների վերաբերյալ նույնպես օրենսդրական հստակ կարգավորում գոյություն չունի:

<sup>44</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

հանրապետական զորակոչային հանձնաժողովը քննում է տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների դեմ գանգատները: Ներկայացված գանգատների վերաբերյալ որոշումները հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից ընդունվում են մեկամսյա ժամկետում՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ<sup>45</sup>: Հանրապետական զորակոչային հանձնաժողովի համապատասխան որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում:

Այլընտրանքային ծառայության զորակոչի կազմակերպման և իրականացման կարգը նախատեսված է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, այլընտրանքային ծառայություն անցնելու համար զորակոչիկը պարտավոր է մինչև հերթական զորակոչը (աշնանային զորակոչի դեպքում մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ գարնանային զորակոչի դեպքում՝ մինչև մարտի 1-ը) դիմել իր *բնակության վայրի զինվորական կոմիսարիատ*՝ նշելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու պատճառները, ինչպես նաև իր նախընտրած ծառայության տեսակը<sup>46</sup>: Զինվորական կոմիսարատի կողմից զորակոչիկի դիմումը ներկայացվում է *տեղական զորակոչային հանձնաժողովին*, որն էլ նախապատրաստում և *հանրապետական զորակոչային հանձնաժողովին* է ներկայացնում քաղաքացու վերաբերյալ նյութերը: Այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ քաղաքացու դիմումը քննարկվում է հանրապետական զորակոչային հանձնաժողովի առանձին նիստում, որին համապատասխան քաղաքացու ներկայությունը պարտադիր է:

Պարտադիր զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայությամբ փոխարինելը հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից մերժվում է, եթե դիմում ներկայացրած քաղաքացին առանց հարգելի պատճառների կրկին չի ներկայանում հանրապետական հանձնաժողովի նիստին, ինչպես նաև եթե ներկայացրած դիմումում առկա են կեղծ տեղեկություններ<sup>47</sup>: Այն դեպքերում, երբ դիմում ներկայացրած քաղաքացին ենթակա չէ զորակոչի կամ ունի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք, ապա այլընտրանքային ծառայության մասին դիմումը թողնվում է առանց քննության, և հանձնաժողովի կողմից կայացվում է համապատասխանաբար զինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տրամադրելու վերաբերյալ որոշում<sup>48</sup>:

<sup>45</sup> Այդուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում, թե համապատասխան զորակոչային հանձնաժողովների որ որոշումներն են ենթակա բողոքարկման հանրապետական զորակոչային հանձնաժողով, բողոք ներկայացնող անձանց շրջանակը, բողոքի ներկայացման ժամկետներն ու ընթացակարգը:

<sup>46</sup> «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

<sup>47</sup> Նույն տեղում, հոդված 9:

<sup>48</sup> Նույն տեղում, հոդված 10:



## ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացման ժամանակ զորակոչիկները ենթարկվում են բժշկական հետազոտության՝ զինվորական ծառայության համար նրանց պիտանիությունը և դրա աստիճանը պարզելու համար: Զորակոչիկները ենթարկվում են եռաստիճան բժշկական հետազոտության՝ զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների, կենտրոնական բժշկական հանձնաժողովի և հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից:

Զորակոչի ժամանակ բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է հանդիսանում կենտրոնական բժշկական հանձնաժողովը: Այն ստեղծվում է Կառավարության որոշմամբ՝ անդամների նշանակման անհատական կարգով: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նախագահ է հանդիսանում ՀՀ զինվորական կոմիսարը, իսկ որպես անդամ հանձնաժողովում ընդգրկվում են թերապևտ, նյարդաբան, մաշկաբան, վնասվածքաբան, օտոլարինգոլոգ, ակնաբույժ, վիրաբույժ, սրտաբան, հոգեբույժ առաջատար բժիշկ-մասնագետներ և քարտուղար: Կենտրոնական բժշկական հանձնաժողովը հաշվետու է հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

Զորակոչի իրականացման ընթացքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի իրավասության մեջ է մտնում բժշկական փորձաքննության և հետազոտման ենթարկված զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացումը: Հանձնաժողովի կողմից տրվում է գրավոր եզրակացություն զորակոչիկի առողջական վիճակի մասին, երբ զորակոչիկը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, այդ թվում՝ պիտանի՝ սահմանափակումով կամ պիտանի՝ ոչ շարային ծառայության համար, պարտադիր զինվորական ծառայության համար ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի, ճանաչվել է ոչ պիտանի խաղաղ ժամանակ զինվորական ծառայության համար, բուժման համար ստացել է տարկետում, ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ առանց վերափորձաքննության անհրաժեշտության, ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ հանվելով զինվորական հաշվառումից:

Կենտրոնական բժշկական հանձնաժողովն իրականացնում է զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեության վերահսկողություն: Միաժամանակ, հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում իրավասու է փոփոխելու իր կայացրած որոշումները: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումները զորակոչիկների վերաբերյալ վերջնական են և ենթակա են ներկայացման ՀՀ զորակոչային հանձնաժողովի հաստատմանը՝ զորակոչի ավարտից 15-օրյա ժամկետում:

Զորակոչի ժամանակ ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության պետի հրամանով ստեղծվում է հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական

հանձնաժողով, որի կազմում ընգրկվում են զինվորական բուժօգնականներից թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ատամնաբույժ, օտոլարինգոլոգ, ակնաբույժ, մաշկաբան, ռենտգենոլոգ, ֆթիզիատր, սեռաբան մասնագիտություններով բժիշկներ, ինչպես նաև բուժքույրեր և ռենտգեն-տեխնիկներ: Հանձնաժողովի նախագահ է նշանակվում ռազմաբժշկական փորձաքննության վերաբերյալ գիտելիքներ և փորձ ունեցող բժիշկ-սպա<sup>49</sup>:

Հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողովի գործառույթներից են.

- ✓ գորակոչվելու համար հավաքակայան ներկայացված գորակոչիկների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունը,
- ✓ գորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների իրականացումը,
- ✓ գորակոչիկների արտաքին մարմնական զննում, ֆյուրորոգրաֆիայի, արյան խմբի և ռեզուս-գործոնի, հասակի և քաշի որոշումը,
- ✓ զինկոմիսարիատներում բժշկական զննություն չանցած կամ առողջական վիճակի պատճառով ոչ շարային ծառայության համար պիտանի ճանաչված, զննության ժամանակ շեղումների հայտնաբերման, առողջական վիճակի վերաբերյալ գանգատների դեպքում զինծառայողների բժշկական հետազոտության իրականացումը,
- ✓ գորակոչիկների առողջական վիճակը որոշելու հետ կապված դժվարությունների առկայության դեպքում լրացուցիչ և լիարժեք հետազոտության համար նրանց զինկոմիսարիատներ վերադարձնելը,
- ✓ անհրաժեշտության դեպքում գորակոչիկին զինկոմիսարիատներ ուղարկելը՝ կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից լրացուցիչ և լիարժեք հետազոտության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի հետ համատեղ հետազոտության իրականացումը,
- ✓ անհրաժեշտության դեպքում գորակոչիկների՝ շարային և ոչ շարային ծառայության համար պիտանի լինելու մասին որոշումների կայացումը,
- ✓ հավաքակայան ներկայացված գորակոչիկների բժշկական փորձաքննության արդյունքների ամփոփումը և հաշվետվության՝ ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչություն ներկայացումը:

<sup>49</sup> «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՊՆ որոշում, բաժին 7:





## ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առանձնացնում է ինչպես պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հիմքերը, այնպես էլ զինվորական ծառայության հերթական զորակոչից ազատելու հիմքերը: Եթե զինվորական ծառայությունից ազատելու ուժով զինապարտ քաղաքացիները վերջնականապես ազատվում են զինվորական ծառայություն անցնելու պարտականությունից, ապա զինվորական ծառայության հերթական զորակոչից ազատելու դեպքում անձը օրենսդրությամբ սահմանված դեպքերում ստանում է զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են պարտադիր զինվորական ծառայությունից ազատման հիմքերը<sup>50</sup>: Համապատասխան հոդվածի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է.

ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից<sup>51</sup>,

բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) գոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է,

գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ<sup>52</sup>,

դ) մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին,

ե) գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

Ավելին, նշված օրենքը նախատեսում է նաև այն դեպքերը, երբ զինապարտ քաղաքացիները ենթակա չեն պարտադիր զինվորական ծառայության զորակոչի: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ զորակոչի ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն/նախաքննություն, դատաքննություն, կամ

<sup>50</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված:

<sup>51</sup> Զինապարտ քաղաքացիների զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշվում է ՊՆ 26.02.2010թ. թիվ 175 հրամանով, որին կից հավելված 1-ում տրվում է հիվանդությունների ցանկը և դրանց առկայության դեպքում զորակոչիկի պիտանիության աստիճանը:

<sup>52</sup> Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ կառավարության որոշումը ոչ թե պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հիմք է, այլ ընթացակարգ:

ովքեր նախկինում դատապարտվել են ազատագրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատագրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ գլխավոր դատախազի համատեղ հրամանով հաստատված ցանկում նշված որևէ հանցագործություն<sup>53</sup>: Հրամանում ընդգրկված հանցագործությունների ցանկի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանում հաշվի են առնվել անձի կողմից կատարված հանցագործությունների վտանգավորությունն ու նշանակությունը, դրանք կատարած անձանց՝ զինված ուժերում հետագա ծառայության նպատակահարմարությունը, վերջինների կողմից նոր հանցագործությունների կատարման հնարավորությունը և դրանց՝ զինված ուժերում կանխելու անհրաժեշտությունը<sup>54</sup>:

Պարտադիր զինվորական ծառայության հերթական գորակոչից ազատվելու հիմքերի առկայության դեպքում զինապարտ քաղաքացիները ձեռք են բերում պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունք: Ձինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու հիմքերը նախատեսված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով: Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքը կարող է տրվել 6 ամսով, 1 կամ 3 տարով՝ կախված տարկետման տրամադրման հիմքերից: Ձինվորական ծառայության հերթական գորակոչից տարկետում տրամադրվում է առողջական վիճակի բարելավման, ուսումն անընդհատ շարունակելու, իր խնամքի տակ գտնվող անձանց խնամքն ապահովելու (ընտանեկան դրության բերումով) և այլ հիմքերից ելնելով:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսվում են պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետման իրավունք ստանալու հիմքերը: Դրանք են.

---

<sup>53</sup> Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ գլխավոր դատախազի 15.04.2008թ. համատեղ թիվ 477 հրամանը: Նշված հրամանով հաստատված ցանկում ընդգրկված են հետևյալ հանցագործությունները՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ (ՀՀ քր. օր. 139 հ.), անառակաբար գործողություններ (ՀՀ քր. օր. 142 հ.), նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը (ՀՀ քր. օր. 266 հ.), առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը (ՀՀ քր. օր. 268 հ.), թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը (ՀՀ քր. օր. 272 հ.) և այլ հանցակազմեր:

<sup>54</sup> Առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ, թե հրամանով հաստատված ցանկում «սեքսուալ բնույթի գործողություններ» հանցագործությունը ներառելու դեպքում ինչու է դրանում բացակայում «բռնաբարություն» հանցագործությունը: Հրամանի հեղինակները թերևս ելել են այն տրամաբանությունից, որ պարտադիր զինվորական ծառայության գորակոչվում են արական սեռի քաղաքացիները, իսկ բռնաբարության հանցագործությունից տուժող է հանդիսանում միայն իգական սեռի ներկայացուցիչը: Այսինքն՝ նկատի է առնվել անձանց ոչ բնական սեռական հակումներ ունենալու հանգամանքը:

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր ունենալը, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ<sup>55</sup>:

բ) առանց մոր մեծացող երեխա ունենալը.

գ) երկու և ավելի երեխա ունենալը.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին ունենալը.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր ունենալը, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Ջորակոչիկին տարկետում տրվում է նաև նրա կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխաներով վեցամսյա հղիության դեպքում:

Օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքից քաղաքացին օգտվում է նաև, եթե նա մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն հինգ տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն առնվազն հինգ տարի առաջ ամուսնալուծված են, և եթե առկա է նույն հողվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը<sup>56</sup>:

Ընտանեկան դրության բերումով զինապարտ քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունք տրվում է տեղական գորակոչային հանձնաժողովի որոշմամբ, որը հաստատվում է մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի կողմից:

Ի լրումն օրենքով նախատեսված դեպքերի՝ գորակոչիկին պարտադիր զինվորական ծառայության հերթական գորակոչից տարկետման իրավունք կարող է տրամադրվել նաև ընտանեկան դրության բերումով օրենքով չնախատեսված այլ դեպքերում: Այս դեպքում տարկետում տալու մասին որոշումը կայացնում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական գորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

Ընտանեկան դրության բերումով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից գորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա

<sup>55</sup> Օրենքի համաձայն՝ անաշխատունակ են համարվում ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հանդիսացող կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը:

<sup>56</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, 2-րդ մաս: Անհրաժեշտ է ուշադրության արժանացնել, որ եթե զինապարտ քաղաքացին արդեն իսկ ունի ընտանեկան դրության բերումով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունք նախատեսող որևէ հիմք, ապա անտրամաբանական է օրենքի լրացուցիչ պահանջը՝ լինել ամուսնալուծված ծնողների զավակ կամ մինչև գորակոչային տարիքի հասնելը՝ որդեգրված:

խաղաղ ժամանակ ազատվում է զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստագործում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված են պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետման հիմքերը: Ուսումը շարունակելու հիմքով գորակոչից տարկետում տրվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին, պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորողներին, պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողներին, դատական դպրոցի ունկնդիրներին, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև հանրակրթական, նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողներին՝ մինչև նրանց 19 տարին լրանալը:

Ուսումը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած 18 տարին լրացած քաղաքացիները կորցնում են իրենց տարկետման իրավունքը, եթե հեռացվում կամ ազատվում են ուսումնական հաստատությունից կամ անբավարար առաջադիմության պատճառով մնում են նույն կուրսում:

Կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը: Սույն կանոնից բացառություն են կազմում պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բուհերի ասպիրանտուրայում սովորողները, ինչպես նաև դատական դպրոցի ունկնդիրները, որոնց տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե վերջիններս ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող գորակոչի ընթացքում:

Զորակոչիկին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է տեղական գորակոչային հանձնաժողովի կողմից, որը հաստատում է մարզային (Երևան քաղաքի) գորակոչային հանձնաժողովը: Իսկ այն դեպքերում, երբ ՀՀ քաղաքացին սովորում է օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատությունում ոչ թե պետական պատվերով կամ

միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով, ապա նրան պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք տրվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ որպես <sup>57</sup>:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված են առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու հիմքերը:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող գորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրվում է 3 անգամ՝ մինչև մեկ տարի ժամկետով, իսկ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի գորակոչիկներին՝ 1 անգամ՝ 3 տարի ժամանակով:

Ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած և 27 տարեկանից բարձր տարիքում ուսումն ավարտած գորակոչիկներին առողջական վիճակի պատճառով բուժման նպատակով տարկետում կարող է տրվել 1 անգամ՝ մինչև 6 ամիս ժամկետով, իսկ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքում՝ մինչև 1 տարի ժամկետով:

Տրամադրված տարկետման վերջնական ժամկետը լրանալուց հետո գորակոչիկը ենթարկվում է բժշկական քննության, որի արդյունքում ճանաչվում է կամ պիտանի զինվորական ծառայության համար՝ գորակոչվելով զինվորական ծառայության, կամ խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ հաշվառվելով պահեստագործում, կամ զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառումից:

Բժշկական քննության արդյունքում խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված և պահեստագործում հաշվառված անձինք 5 տարին մեկ անգամ ենթարկվում են բժշկական վերափորձարկման: Եվ եթե մինչև 27 տարեկանը լրանալը քաղաքացին բժշկական վերափորձարկման արդյունքներով ճանաչվում է զինվորական ծառայության համար պիտանի, ապա պարտադիր զինվորական ծառայության է գորակոչվում ընդհանուր հիմունքներով:

Առողջական վիճակի պատճառով բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու որոշում կայացնում է հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսվում են նաև պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու այլ հիմքեր,

---

<sup>57</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 16:

համաձայն որոնց ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն իրենց լիազորությունների ողջ ընթացքում, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշմամբ առանձին դեպքերում քաղաքացիների կատեգորիաներ և առանձին քաղաքացիներ ստանում են տարկետում պարտադիր զինվորական ծառայության գորակոչից<sup>58</sup>:

ՀՀ Դատական օրենսգրքով դատավորը իր լիազորությունների իրականացման ողջ ընթացքում ազատվում է զինվորական ծառայության գորակոչից, գորահավաքներից և վարժական հավաքներից<sup>59</sup>:

---

<sup>58</sup> «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 16: Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրվում է տարբեր կատեգորիայի անձանց, հիմնականում արտասահմանյան բուհերում, ինչպես նաև հայաստանյան մի շարք ուսումնական հաստատություններում ուսուցանող անձանց, օրինակ՝ հայ առաքելական եղեկեցու հոգևորականների և հոգևոր ուսումնական հաստատություններում սովորողներին, ինչը, թերևս, անընդունելի է, քանի որ նույն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը նախատեսում է ուսումը շարունակելու համար հերթական գորակոչից տարկետում ստանալու հնարավորությունը, որի իրավասությամբ օժտված են տեղական գորակոչային հանձնաժողովները:

<sup>59</sup> ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 82:

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է, իսկ զինծառայողները զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիները և ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներն են<sup>60</sup>: ՀՀ զինված ուժերի զինծառայողներ են սպաները, ենթասպաները, ռազմաուսումնական հաստատությունների ուսանողները, սերժանտները, ավագները և զինվորները, որոնք զինվորական ծառայություն են կատարում<sup>61</sup>:

Ինչպես և մի շարք իրավական համակարգերում, Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընդունված է զինծառայողներին որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելու սկզբունքը: Այս սկզբունքի էությունն այն է, որ զինծառայողները զինվորական ծառայության պահանջների շրջանակներում կարողանան օգտվել այլ քաղաքացիների ունեցած ընդհանուր քաղաքացիական և սահմանադրական իրավունքներից:

Մասնավորապես, զինծառայողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից՝ հաշվի առնելով զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները: Զինծառայողների վրա դրվում են սահմանադրական, այլ համաքաղաքացիական պարտականություններ, ինչպես նաև ընդհանուր, ծառայության և հատուկ պարտականություններ՝ սահմանված զինվորական ծառայության պայմաններով<sup>62</sup>: Զինծառայողներին՝ որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելը ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, որ զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից: Զինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը: Սա առաջացնում է այնպիսի արժեքների և չափանիշների անհրաժեշտություն, որոնք ավելի խիստ են, քան

<sup>60</sup> «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 1: Զինծառայող հասկացությունը սահմանվում է նաև «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, որի համաձայն՝ զինծառայողներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

<sup>61</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրք», հոդված 5:

<sup>62</sup> Նույն տեղում, հոդված 7:



առհասարակ հասարակության մեջ ընդունվածները<sup>63</sup>: Եթե զինված ուժերը ցանկանում են արդյունավետորեն ծառայել իրենց հասարակությանը, ապա դրանում տեղ չի գտնվի ճնշումների, հակասոցիալական վարքի դրսևորումների, իրավախախտումների, խտրականության, հետապնդումների և վարքի այլ անընդունելի դրսևորումների համար:

Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական կազմը կարող են հանդես գալ զորանոցներում տեղի ունեցող խախտումների պայքարի առաջին գծում: Նրանց ղեկավարումը կարևորագույն նշանակություն ունի զորանոցներում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար: Այս առումով հրամանատարները պարտավոր են ակտիվ լինել /նախաձեռնող դեր ունենալ զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար/ և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց ենթակաների անօրինական գործողությունները կանխելու համար:

Որպես պետական ապարատի ներկայացուցիչներ՝ զինծառայողները պարտավոր են իրենց պարտականություններն իրականացնելու ընթացքում հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Բայց զինծառայողները թե՛ զորամասերում, թե՛ մարտական պայմաններում իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելիս միայն այն դեպքում կպահպանեն նշված իրավունքները, եթե իրենց սեփական իրավունքները ապահովված լինեն:

2006 թ. ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի կողմից հաստատվել է անդամ պետությունների կողմից զինծառայողների մարդու իրավունքների ապահովման կարևորությունը. «...զինված ուժերի անձնակազմից մարդասիրական իրավունքի նորմերի ու մարդու իրավունքների պահպանում չի կարելի ակնկալել, եթե մարդու իրավունքները երաշխավորված չեն հենց զինված ուժերի շարքերում: Հետևաբար, էական է, որ զինված ուժերի ներսում Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված ուղեցույցները՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, զուգակցվեն մասնակից պետությունների այնպիսի քաղաքականության հետ, որն ուղղված լինի զինվորականների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը<sup>64</sup>:

Վերը նշված «համազգեստով քաղաքացու» սկզբունքը կարելի է ուսումնասիրել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով (հետայսու՝ Կոնվենցիա) ամրագրված մի քանի առավել կարևոր քաղաքացիական և քաղաքական իրավունքների առնչությամբ, ինչպիսիք են արտահայտվելու ազատությունը, անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և

<sup>63</sup> British Army, “Values and Standards of the British Army” [Բրիտանական բանակ, «Բրիտանական բանակի արժեքներն ու չափորոշիչները»], մարտ, 2000թ., տե՛ս [http://www.army.mod.uk/servingsoldier/usefulinfo/valuesgeneral/values/ss\\_hrpers\\_values\\_comd\\_w.html](http://www.army.mod.uk/servingsoldier/usefulinfo/valuesgeneral/values/ss_hrpers_values_comd_w.html):

<sup>64</sup> Եվրոպայի խորհուրդ, Խորհրդարանական վեհաժողով, թիվ 1742 (2006) հանձնարարական:

նամակագրության անձեռնմխելիության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, միավորվելու ազատությունը: Այդուամենայնիվ, Կոնվենցիայի համաձայն՝ սրանք ոչ բացարձակ իրավունքներ են, այսինքն՝ պետության կողմից կարող են սահմանափակվել որոշակի պայմաններ բավարարելու դեպքում: Սահմանափակումները պետք է լինեն «օրենքին համապատասխան» կամ «օրենքով նախատեսված» և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն համապատասխան հողվածով նախատեսված որևէ շահի: Հիմնականում, զինված ուժերի համար սահմանափակումները նախատեսվում են «ազգային անվտանգության» շահերից ելնելով, սակայն երբեմն որպես շահ կարող են վկայակոչվել «անկարգությունների կանխումը» և «այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «համազգեստով քաղաքացիներ» հասկացության մոտեցումն ամրագրել է «Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» գործով վճռում, որի համաձայն՝ «... Կոնվենցիան կիրառելի է ոչ միայն քաղաքացիական անձանց, այլև զինձառայողների նկատմամբ: Դրա 1-ին և 14-րդ հոդվածների ուժով պայմանավորվող պետության «իրավագործության տակ գտնվող յուրաքանչյուր ոք» պետք է «առանց խտրականության» օգտվի Կոնվենցիայով սահմանված իրավունքներից: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի նորմերը մեկնաբանելիս և կիրառելիս Դատարանը պետք է հաշվի առնի զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինձառայողների համար դրա ունեցած ազդեցությունը»<sup>65</sup>:

Կարևորվում է, որ զինձառայողների իրավունքները և պարտականությունները նախատեսվեն օրենքներով, հատկապես այն դեպքերում, երբ դրանք ենթակա են սահմանափակման՝ ելնելով ազգային անվտանգության նկատառումներից: Զինձառայողների իրավունքների սահմանափակումները նախատեսվելու դեպքում դրանք պետք է հստակ սահմանված լինեն իրավունքի աղբյուրներում և բավարարեն Եվրոպական կոնվենցիայով նախատեսված չափանիշները, որով նախատեսված են զինձառայողների իրավունքների սահմանափակումների նվազագույն չափանիշները, մասնավորապես՝ նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի, մտքի և համոզմունքի ազատության, արտահայտվելու ազատության և միավորվելու ազատության իրավունքների սահմանափակումները (համապատասխանաբար՝ Կոնվենցիայի 8-11-րդ հոդվածներ): Նույն կերպ, զինձառայողների նկատմամբ արդարադատության իրականացումը պետք է համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պահանջներին՝ «օրենքի հիման վրա ստեղծված» անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

<sup>65</sup> Engel v. Netherlands, ECHR, 8 August, 1976, p. 54.

Զինճառայողների իրավունքների համատեքստում առանձնակի նշանակություն ունեն մարդու իրավունքների սահմանափակումների բնույթն ու աստիճանը: Զինճառայողների համար մեծ է արտակարգ իրավիճակներում կենտրոնական դեր ստանձնելու հավանականությունը, որի պայմաններում մարդու իրավունքների (այդ թվում նաև իրենց իսկ իրավունքների) գործողությունը կարող է կասեցվել: Միաժամանակ, որոշ հանգամանքներ, որոնց պայմաններում գործում են զինված ուժերը, կարող են զինճառայողների իրավունքների ընդունելի սահմանափակման հիմք հանդիսանալ անգամ ավելի հանդարտ պայմաններում: Հիմնական խնդիրն այն է, թե որ իրավունքները կարող են սահմանափակվել, ինչ հանգամանքներում, դատավարական ինչպիսի երաշխիքների առկայությամբ և ինչ չափով:

Միջազգային իրավունքի նորմերով ամրագրվող մարդու իրավունքները կարելի է դասակարգել երեք խմբի.

1. Իրավունքներ, որոնցից վերապահումներ անելն արգելվում է (անվերապահելի կամ բացարձակ իրավունքներ),

2. Իրավունքներ, որոնցից վերապահումներ կարելի է անել արտակարգ իրավիճակների ժամանակ (մասամբ սահմանափակման կամ վերապահման ենթակա իրավունքներ),

3. Իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով հանրային որոշ հստակեցված շահերի համաձայն:

Որոշ պետություններ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը վավերացնում են վերապահումներով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, վերապահում է արել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով առ այն, որ տվյալ դրույթները չեն ազդում ՀՀ զինված ուժերի ներքին կարգապահական կանոնադրության<sup>66</sup> գործողության վրա, համաձայն որի՝ մեկուսացումը և պահումը կարգապահական մեկուսարանում՝ որպես կարգապահական տույժ կարող էր կիրառվել.

- ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 10 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» ենթակետ և 55-րդ կետի «դ» ենթակետ),

- պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» և 56-րդ կետի «գ» ենթակետ),

- ենթասպանների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (60-րդ կետի «գ» ենթակետ),

---

<sup>66</sup> Հաստատվել է ՀՀ կառավարության թիվ 247 որոշմամբ, 1996թ. օգոստոսի 12-ին:

- սպաների նկատմամբ՝ մինչև 5 օր ժամկետով (74-րդ կետի «գ» ենթակետ)<sup>67</sup>:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով մարդու անվերապահելի իրավունքների թվին են դասվում կյանքի իրավունքը (հոդված 6), խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (հոդված 7), ստրկության կամ ստրկությանը հավասարեցված վիճակում չպահվելու իրավունքը (հոդված 8), պայմանագրային պարտավորությունը չկատարելու հիմքով ազատագրկման չենթարկվելու իրավունքը (հոդված 11), քրեական օրենքի հետադարձ ուժի ներգործությանը չենթարկվելու իրավունքը (հոդված 15), մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (հոդված 18)<sup>68</sup>:

Զինվորական ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ միջազգային իրավունքը նախատեսում է զինծառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումների հնարավորություն, հատկապես զինվորական կարգապահության, ազգային անվտանգության, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանության անհրաժեշտությամբ պայմանավորված: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Էնգելի գործով ամրագրել է. «Արտահայտվելու ազատությունը, ինչպես որ այն երաշխավորված է 10-րդ հոդվածով, զինծառայողների նկատմամբ կիրառելի է ճիշտ այնպես, ինչպես պայմանավորվող պետությունների իրավագործության ներքո գտնվող ցանկացած անձի նկատմամբ: Այդուամենայնիվ, զինված ուժերի պատշաճ գործունեությունը դժվար է պատկերացնել առանց իրավական այնպիսի նորմերի, որոնք մշակվում են զինծառայողների կողմից զինվորական կարգապահությունը խախտելը կանխելու համար»<sup>69</sup>:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավաչափ է նաև զինվորականների կողմից քաղաքական կուսակցությանն անդամակցելը կամ որևէ քաղաքականության գործունեությամբ զբաղվելու արգելքը, քանի որ դրանք հետապնդում

<sup>67</sup> ՀՀ ԱԺ որոշումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան» և դրան կից արձանագրությունները վավերացնելու մասին, 2002թ. մարտի 20:

<sup>68</sup> Իրավունքներ, որոնցից վերապահում կատարելն արգելվում է, նախատեսված են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածով: Դրանք են՝ կյանքի իրավունքը՝ բացառությամբ պատերազմի ընթացքում իրավաչափ գործողություններով պատճառված մահվան դեպքերի (հոդված 2), խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (հոդված 3), ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակում չպահվելու իրավունքը (հոդված 4), օրենքով չնախատեսված հանցագործության համար պատժի չենթարկվելու իրավունքը (հոդված 7): Անհրաժեշտ է փաստել, որ չնայած Կոնվենցիայի համապատասխան հոդվածով ամրագրված չէ, սակայն ինչպես Կոնվենցիայի տեքստի բովանդակությունից, այնպես էլ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը Կոնվենցիայի ուժի ներքո հանդիսանում է բացարձակ և անվերապահելի իրավունք:

<sup>69</sup> Engel and others v. Netherland, para. 100.

են իրավաչափ նպատակներ, մասնավորապես՝ ազգային անվտանգության և հասարակական անվտանգության պահպանումը և անկարգությունների կանխումը<sup>70</sup>:

Եվրոպական կոնվենցիան իրավաչափ է համարում նաև զինձառայողների՝ ցույցերի և հավաքների մասնակցելու իրավունքի սահմանափակումները՝ համաչափության չափանիշներին բավարարելու պայմաններում: Միաժամանակ, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սույն հոդվածը չի խոչընդոտում սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

Այսպես, ՀՀ-ում զինձառայողների համար նախատեսված իրավունքների սահմանափակումները նախատեսվում են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինձառայողն իրավունք չունի.

1) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի զիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

2) լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ,

3) անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արհեստակցական միության,

4) ոչ ձառայողական նպատակների համար զինված ուժերում և այլ զորքերում օգտագործել նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ,

5) կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց,

6) պաշտոնական դիրքն օգտագործել ի շահ քաղաքական կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության,

7) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,

8) հոնորար ստանալ ձառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ էլույթների համար,

9) ձառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ձառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժամկետային պարտադիր զինձառայողների համար նախատեսված են այլ սահմանափակումներ ևս: Այսպես,

---

<sup>70</sup> Rekvényi v. Hungary, 20 May 1999, Vol. 30, 2000, p. 519. Սույն գործում հարցը վերաբերում էր ոստիկանության աշխատակիցների իրավունքների սահմանափակումների իրավաչափությանը: Մակայն դատարանն ամրագրել է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև զինձառայողների նկատմամբ:

նրանք զրկված են տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից<sup>71</sup>:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը երաշխավորում է զինձառայողների պետական պաշտպանությունը<sup>72</sup>:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը սահմանում է զինձառայողների իրավունքներն ու պարտականությունները մի քանի նորմատիվ իրավական ակտերում: Ձինձառայողներին տրվում են «Ձիննապարտության մասին», «Ձինձառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին», «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքներ, երաշխիքներ և փոխհատուցում<sup>73</sup>:

«Ձիննապարտության մասին» ՀՀ օրենքը, կարգավորելով զինվորական հաշվառման, զինվորական ծառայության նախապատրաստության, զորակոչի, պահեստագործում զինվորական պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարցերը, չի նախատեսում բուն զինվորական ծառայության ընթացքում զինձառայողների իրավունքները, բացառությամբ զինվորական ծառայությունից ժամկետից շուտ արձակելու իրավունքի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ զինձառայողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ծավալները և բովանդակությունը պայմանավորված են զինձառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունների կատարմամբ: Պարտականություններ ասելով՝ հասկացվում է

---

<sup>71</sup> ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 2:

<sup>72</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», հոդված 6: Ձինձառայողին անվանարկելը, նրա կյանքի, առողջության, սեփականության նկատմամբ բռնությունը, սպառնալիքը, ոտնձգությունը կամ զինձառայողի կողմից իր պարտականությունները կատարելուն խոչընդոտող այլ գործողությունների կատարումը կամ այլ կերպ նրա իրավունքների ոտնահարումը առաջացնում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

<sup>73</sup> Որպես օրինակ կարելի է մատնանշել «Ձինձառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքը՝ ընդունված 1998թ. մայիսի 27-ին, որով ամրագրվում են զինձառայողների ինչպես քաղաքական և քաղաքացիական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները՝ միաժամանակ մեկտեղելով նաև զինձառայողների ինչպես հիմնական, այնպես էլ պաշտոնեական և հատուկ պարտականությունների վերաբերյալ դրույթները: Այսպես, օրենքն ամրագրում է զինձառայողների ազատության, պատվի և արժանապատվության պաշտպանությունը, տեղաշարժվելու ազատության և բնակության վայր ընտրելու իրավունքը, խոսքի ազատությունը, ժողովներին, հանրահավաքներին, ցույցերին, երթերին և պիկետներին մասնակցելու իրավունքը, խղճի և կրոնի ազատությունը, պետական գործերին և հասարակական միավորումների կառավարմանը մասնակցելու իրավունքը, աշխատանքի իրավունքը, ծառայողական ժամանակը և հանգստի իրավունքը, դրամական բավարարումը, հավելավճարները, հագուստի տրամադրումը, օթևանի տրամադրումը, առողջության պահպանման և բուժօգնության իրավունքը, կրթության իրավունքը և մշակույթի բնագավառի իրավունքները, տրանսպորտից օգտվելը, անօրինական հրամանների գանգատարկման իրավունքը, դատական վարույթների շրջանակներում առկա իրավունքները, սոցիալական ապահովության իրավունքները, արտակարգ իրավիճակների պայմաններում զինվորական պարտականություններ կատարելու համար հավելյալ արտոնությունները, հիմնական պարտականությունները, պաշտոնեական և հատուկ պարտականությունները:

մարտական գործողություններին մասնակցելը, պաշտոնեական պարտականություններին, մարտական հերթապահության կատարումը, զինավարժություններին մասնակցելը, աշխատակարգով սահմանված ծառայության ժամանակամիջոցում զորամասի տարածքում կամ եթե դա թելադրված է ծառայության անհրաժեշտությամբ, ծառայողական գործուղման կամ բուժման մեջ գտնվելը, ծառայության վայր, բուժման մեկնելը կամ վերադառնալը, զինվորական հավաքներին մասնակցելը, գերության մեջ (բացառությամբ կամավոր գերի հանձնվելու դեպքերի), պատանդի կամ ձերբակալվածի վիճակում գտնվելը, անհայտ բացակայությունը՝ մինչև զինծառայողին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչելը կամ մեռած հայտարարելը, անհատի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ապահովման գործում իրավապահ մարմիններին օգնություն ցույց տալը, զինծառայողների այլ գործողություններ, որոնք դատարանի կողմից ճանաչվել են որպես հասարակության ու պետության շահերից բխող<sup>74</sup>: Որպես զինվորական ծառայության պարտականությունները կատարող՝ չեն ճանաչվում այն զինծառայողները, որոնք կատարում են քրեական օրենսդրությամբ նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի համաձայն՝ ոչ ոք իրավասու չէ սահմանափակելու զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ: Միաժամանակ, զինծառայողների կողմից իրենց իրավունքներից օգտվելը չպետք է վնաս հասցնի հասարակության, պետության իրավունքներին և օրինական շահերին, զինվորական ծառայությանը, ուրիշ զինծառայողների և այլ քաղաքացիների իրավունքներին<sup>75</sup>:

Զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս, անհրաժեշտության դեպքում նաև ծառայությունից դուրս, զինծառայողները զենք պահելու, կրելու և գործադրելու իրավունք ունեն: Զինծառայողի կողմից զենքը պահելու, կրելու կանոնները և գործադրելու կարգը սահմանվում է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով»<sup>76</sup>:

<sup>74</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», հոդված 8:

<sup>75</sup> Նույն տեղում, հոդված 9:

<sup>76</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», հոդված 11: Զինծառայողները, որպես ծայրահեղ միջոց, անհատապես կամ ստորաբաժանման կազմով զենք գործադրելու իրավունք ունեն պահպանվող ռազմական և պետական օբյեկտների, զորամասերի և ստորաբաժանումների տեղաբաշխման, շենքերի ու շինությունների, զինվորական էջելոնների, մեքենաների շարայուների ու միայնակ տրանսպորտային միջոցների և պահակախմբերի վրա խմբային կամ զինված հարձակումը ետ մղելու համար, եթե հնարավոր չէ դրանք պաշտպանել այլ եղանակով ու միջոցներով, զենքին կամ ռազմական տեխնիկային բռնի տիրանալու փորձի կասեցման համար, եթե հնարավոր չէ դրանք պաշտպանել այլ եղանակով ու միջոցներով, զինծառայողներին և քաղաքացիական անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումից պաշտպանելու համար, եթե հնարավոր չէ նրանց պաշտպանել այլ եղանակով ու

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զինծառայողը պարտավոր է իր ծառայության ընթացքում ղեկավարվել ՀՀ օրենքներով, զինվորական կանոնադրությունների պահանջներով և հրամանատարների հրամաններով:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը սահմանում է զինծառայողների ընդհանուր պարտականությունները:

Զինծառայողները պարտավոր են.

✓ հավատարիմ լինել զինվորական երդմանը, անձնուրացաբար ծառայել ժողովրդին, արիաբար՝ առանց խնայելու սեփական առողջությունն ու կյանքը, պաշտպանել հայրենիքը, կատարել զինվորական պարտքը՝ տանելով զինվորական ծառայության դժվարությունները,

✓ խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները,

✓ մշտապես տիրապետել և կատարելագործել իրենց ռազմական մասնագիտական գիտելիքները և զինվորական վարպետությունը,

✓ տիրապետել իրենց հանձնված սպառազինությանը և մարտական տեխնիկային և այն մշտապես պատրաստ պահել գործադրման համար, պահպանել պետական և ռազմական ունեցվածքը,

✓ զինվորական պարտականությունների կատարման ժամանակ լինել ազնիվ, կարգապահ և խիզախ,

✓ անվերապահորեն ենթարկվել հրամանատարներին (պետերին), նրանց պաշտպանել մարտի ժամանակ, պաշտպանել զորամասի մարտական դրոշը,

✓ բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, հարգել ընկերների պատիվն ու արժանապատվությունը, նրանց նկատմամբ թույլ չտալ կոպտություն, ծաղրուծանակ, փրկել նրանց վտանգից՝ չխնայելով սեփական կյանքը,

✓ պահպանել զինվորական հարգանքի, վարքի և զինվորական ողջույնի կանոնները, մշտապես պահպանել մաքուր և խնամված տեսք,

✓ պահպանել պետական գաղտնիքը<sup>77</sup>:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի համաձայն՝ իրենց ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողները մեկը մյուսի նկատմամբ կարող են լինել պետեր և ենթականեր: Ելնելով զինված ուժերի միանձնյա ղեկավարման սկզբունքից՝ պետը միանձնյա որոշումներ կայացնելու, հրամաններ արձակելու և դրանց կատարումը պահանջելու իրավունք ունի:

---

միջոցներով, հանցագործություն կատարած կամ ծանր հանցագործության կատարման պահին բռնված և զինված դիմադրություն ցույց տվող անձին, ինչպես նաև զենքը հանձնելու օրինական պահանջը կատարելուց հրաժարվող զինված անձին մեկուսացնելիս, եթե այլ եղանակով ու միջոցներով հնարավոր չէ ճշտել դիմադրությունը կամ առգրավել զենքը:

<sup>77</sup> Նույն տեղում, հոդված 13: Զինծառայողների ընդհանուր պարտականությունների մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքում, հոդվածներ 13-20:



Զինճառայողներն օժտված են նաև պաշտոնեական և հատուկ պարտականություններով: Պաշտոնեական պարտականությունները որոշվում են ըստ զինճառայողի պաշտոնի՝ իր դերի և խնդիրների ծավալներին և սահմաններին համապատասխան: Յուրաքանչյուր զինճառայողի պաշտոնեական պարտականությունները սահմանվում են զինվորական կանոնադրություններով, հրահանգներով, կանոնակարգերով և ուղղակի պետի գրավոր հրամաններով<sup>78</sup>:

Հատուկ պարտականություններ են համարվում մարտական հերթապահության (մարտական ծառայության), օրվա և կայագորային վերակարգի մեջ գտնվելու, ինչպես նաև տարերային աղետների վերացմանն ուղղված, ինչպես նաև այլ արտակարգ իրավիճակներում զինճառայողների պարտականությունները: Այդ պարտականությունները, որպես կանոն, կրում են ժամանակավոր բնույթ, և դրանց կատարման կարգը սահմանվում է օրենսդրական ակտերով, զինվորական կանոնադրություններով և դրանց հիման վրա մշակված այլ ակտերով<sup>79</sup>:

Ելնելով համազգեստով քաղաքացիների սկզբունքից՝ բոլոր զինճառայողները, անկախ կոչումից և պաշտոնից, կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները: Զինճառայողները կարող են ենթարկվել կարգապահական, վարչական, քաղաքացիաիրավական, նյութական և քրեական պատասխանատվության<sup>80</sup>: Օրենսդրությամբ նախատեսված է նաև զինճառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցների կիրառման հնարավորություն զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար<sup>81</sup>: Թույլ տրված իրավախախտման համար զինճառայողը, որպես կանոն, ենթարկվում է մեկ տեսակի պատասխանատվության, սակայն իրավախախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը չի ազատում քրեական պատասխանատվությունից, եթե արարքում առկա են հանցագործության հատկանիշներ, ինչպես նաև զինճառայողները չեն ազատվում իրավախախտմամբ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունից՝ անկախ

<sup>78</sup> Նույն տեղում, հոդված 21:

<sup>79</sup> Նույն տեղում, հոդված 22: Հատուկ պարտականությունների կատարման ժամանակ զինճառայողներն օժտվում են նաև հատուկ իրավունքներով՝ կապված զինվորական կարգապահության և իրավակարգի պահպանման, անձնակազմի, մարտական դրոշների, սպառազինության, ռազմական տեխնիկայի ու նյութական այլ միջոցների և ուրիշ ռազմական ու պետական օբյեկտների պաշտպանության հետ, այդ թվում՝ զենքի գործադրմամբ:

<sup>80</sup> Նույն տեղում, հոդվածներ 25-29:

<sup>81</sup> Նույն տեղում, հոդված 24:

պատասխանատվության կամ հասարակական ներգործության որևէ միջոցի ենթարկված լինելու հանգամանքից<sup>82</sup>:

## **Պարտադիր ժամկետային զինծառայողներին տրվող խրախուսանքի և տույժի միջոցները**

Զինծառայողներին տրվող խրախուսանքի և տույժի միջոցները նախատեսվում են ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ<sup>83</sup>:

Որպես զինծառայողների դաստիարակության և զինվորական կարգապահության ամրապնդման միջոց՝ հրամանատարները պարտավոր են սխրագործության, ջանասիրության, խելացի նախաձեռնության և ծառայության մեջ աչքի ընկնելու համար խրախուսել իրենց ենթակա զինծառայողներին:

Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի նկատմամբ կիրառվում են հետևյալ խրախուսանքի միջոցները.

- ա) նախկինում տրված կարգապահական տույժի հանում,
- բ) շնորհակալության հայտնում,
- գ) ժամկետային ծառայության զինծառայողի կողմից զինվորական պարտքի օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին նրա բնակության կամ նախկին աշխատանքի (ուսման) վայր հայտնում,
- դ) պատվոգրերով, արժեքավոր նվերներով կամ դրամով պարգևատրում,
- ե) պարգևատրում զինծառայողի անձնական լուսանկարով՝ նկարված զորամասի բացված մարտական դրոշի մոտ,
- զ) զինվորներին եֆրեյտորի զինվորական կոչման շնորհում,
- է) սերժանտներին պաշտոնեական հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում,
- ը) գերազանցիկ կրճքանշանով պարգևատրում,
- թ) զորամասի պատվո գրքում (թիվ 2 հավելված) զինվորների, սերժանտների ազգանունների գրանցում,
- ժ) ժամկետային ծառայության զինծառայողների հիմնական արձակուրդի ժամկետին 5 օր ավելացում<sup>84</sup>:

<sup>82</sup> Նույն տեղում, հոդված 30:

<sup>83</sup> Ներկայում միաժամանակ գործում են ինչպես 1996թ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը», այնպես էլ 2012թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը», որոնցով նախատեսված են զինծառայողների խրախուսանքի և տույժի միջոցները: Թերևս «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը» գործում է, սակայն դրա կիրարկման համար անհրաժեշտ է մի շարք միջոցառումների իրականացում, որոնք ամրագրված են վարչապետի 2012թ. հունիսի 4-ի որոշմամբ:

Խրախուսանքի միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին զինծառայողի, այնպես էլ ստորաբաժանման, զորամասի ամբողջ անձնակազմի նկատմամբ: Զինծառայողին նույն ծառայության համար կարելի է խրախուսել միայն մեկ անգամ՝ հաշվի առնելով զինծառայողի աչքի ընկնելու կամ ծառայության բնույթը, ինչպես նաև զինծառայության նկատմամբ նրա նախկին վերաբերմունքը<sup>85</sup>:

Միաժամանակ, զինվորական կարգապահությունը և հասարակական կարգը խախտելու դեպքում զինծառայողը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Զինծառայողի կողմից զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում հրամանատարը (պետը) կարող է բավարարվել նրա պարտականություններն ու զինվորական պարտքը հիշեցնելով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կարգապահական տույժ տալ՝ հաշվի առնելով զանցանքի ծանրությունը և մեղքի աստիճանը, որը պարզվում է կատարված քննությամբ<sup>86</sup>:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված շարքային զինծառայողների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժի հետևյալ տեսակները.

- ✓ նկատողություն,
- ✓ խիստ նկատողություն,
- ✓ զորամասի տարածքից հերթական արձակումից զրկում,
- ✓ վերակարգում արտահերթ աշխատանքի նշանակում՝ մինչև հինգ վերակարգ,
- ✓ մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում՝ մինչև տասն օր,
- ✓ գերազանցիկի կրճքանշանից զրկում:

Մերժանտի կոչում ստացած ժամկետային զինծառայողների նկատմամբ, ի լրումն վերոգրյալ կարգապահական տույժի տեսակների, կարող են կիրառվել նաև պաշտոնի իջեցում, զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցում, զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցում՝ փոխադրելով ավելի ցածր պաշտոնի, զինվորական կոչումից զրկում՝ փոխադրելով ավելի ցածր պաշտոնի կարգապահական տույժի տեսակները:

Նախքան կարգապահական պատասխանատվության ենթարկելը հրամանատարի կողմից անց է կացվում քննություն՝ պարզելու մեղավորներին, զանցանքի կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները վեր հանելու նպատակով<sup>87</sup>:

Եթե քննության ընթացքում պարզվում է, որ զինծառայողի զանցանքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, ապա զորամասի հրամանատարը տեղյակ է պահում կայազորի զինվորական դատախազին, անհրաժեշտության դեպքում քրեական գործ է

<sup>84</sup> «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրություն», կետ 20:

<sup>85</sup> Նույն տեղում, կետ 37:

<sup>86</sup> Նույն տեղում, կետ 51:

<sup>87</sup> Նույն տեղում, կետ 91:

հարուցում և նշանակում հետաքննություն: Ջինժառայողին կարգապահական տույժը տրվում է, որպես կանոն, զանցանքը կատարելու պահից մեկ օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան զանցանքի մասին հրամանատարին հայտնի դառնալու պահից 10 օրվա ընթացքում: Կարգապահական տույժը պետք է պարունակի ենթակայի անձնական արժանապատվության կամ կոպտության տարրեր: Միաժամանակ, ծառայության մեջ բացթողումների համար հրամանատարի (պետի) նախագուշացումը, դիտողությունն ու խիստ ցուցումը կարգապահական տույժ չեն համարվում<sup>88</sup>: Կարգապահական կոպիտ զանցանքների կատարման դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ հրամանատարի (պետի) ձեռնարկած միջոցառումներն անարդյունավետ են, որպես ներգործության ծայրահեղ միջոց՝ կիրառվում է կարգապահական մեկուսացումը: Կարգապահական կոպիտ զանցանքները նախատեսված են զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ<sup>89</sup>:

Կարգապահական տույժը պետք է կատարվի անհապաղ, բացառիկ դեպքերի առկայության դեպքում դրա կատարումը հնարավոր է ոչ ուշ, քան այն տրվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Ջինված ուժերի կարգապահական կանոնադրությունը նախատեսում է զինժառայողների կողմից կարգապահական տույժերի բողոքարկման հնարավորություն: Այն կարող է բողոքարկվել ստանալու պահից տասն օրվա ընթացքում: Սակայն բողոքարկումը չի կասեցնում կարգապահական տույժի կատարումը, քանի դեռ չի ստացվել այն հանելու մասին ավագ հրամանատարի (պետի) հրամանը<sup>90</sup>:

Անհրաժեշտ է փաստել, որ 2012թ. մարտի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքով սահմանվել է զինժառայողների կարգապահական պատասխանատվության և խրախուսման նոր համակարգ: Օրենքն ուժի մեջ է մտել 2012թ. ապրիլի 28-ին, սակայն «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը» ևս գործում է, քանի որ նոր օրենքի կիրարկման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

---

<sup>88</sup> Նույն տեղում, կետ 93:

<sup>89</sup> Դրանք են՝ ինքնակամ բացակայությունը, արձակուրդից, գործուղումից կամ բուժհիմնարկից ժամկետին ծառայության չներկայանալը, պահակային, ներքին ծառայությունների և մարտական հերթապահության կանոնների խախտումը, ակոնոլի, թմրանյութերի կամ թունանյութերի օգտագործման հետևանքով անսթափ վիճակում ծառայողական պարտականությունների կատարումը, անվտանգության պահանջների խախտումը, որը հանգեցրել է աշխատունակության կորստի, զինժառայողների փոխհարաբերությունների կանոնադրական կանոնների խախտումը, ռազմական գույքի վատնումը կամ կորուստը, զանցանքները հասարակական վայրերում՝ ծառայությունից դուրս:

<sup>90</sup> Կարգապահական տույժերի բողոքարկումը կատարվում է հրամանների բողոքարկման կարգին համապատասխան: Սույն կապակցությամբ, իհարկե, անիրատեսական է թվում անհապաղ կատարման ենթակա տասնօրյա կարգապահական մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժի դեմ բողոքարկելու հնարավորությունը:

Այսպես, նոր կարգապահական կանոնագրքի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի նկատմամբ կիրառվում են հետևյալ խրախուսանքի միջոցները՝

- 1) նախկինում տրված կարգապահական տույժի հանում,
- 2) շնորհակալության հայտնում,
- 3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում,
- 4) գերատեսչական պատվոգրով պարգևատրում,
- 5) արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում,
- 6) զորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում,
- 7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում,
- 8) զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում,
- 9) գերատեսչական կրծքանշաններով պարգևատրում,
- 10) գերատեսչական մեդալներով պարգևատրում,
- 11) զորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի զետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում,
- 12) վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում,
- 13) հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում,
- 14) անվանական զենքով պարգևատրում<sup>91</sup>:

Զինվորական պարտքը կատարելիս ցուցաբերած արիության ու խիզախության, զորքերի օրինակելի ղեկավարման և Հայաստանի Հանրապետությանը, զինված ուժերին ու այլ զորքերին մատուցած ծառայության, մարտական պատրաստականության գործում դրսևորած բարձր ցուցանիշների համար զինծառայողները կարող են օրենքով սահմանված կարգով ներկայացվել պետական պարգևներով պարգևատրման:

Զինծառայողի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում հրամանատարը պարտավոր է հիշեցնել զինծառայողի պարտականություններն ու զինվորական պարտքը և կիրառել կարգապահական տույժ: Կարգապահական տույժը՝ որպես կարգապահության ամրապնդման ու դաստիարակման միջոց, պետք է համապատասխանի կարգապահական խախտման ծանրությանը և զինծառայողի մեղքի աստիճանին<sup>92</sup>: Միաժամանակ, «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը սահմանում է կարգապահական խախտման հասկացությունը: Կանոնագրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական խախտում (զանցանք) է համարվում

<sup>91</sup> Սույն ցանկով նախատեսված 2-14-րդ խրախուսանքի միջոցների հերթականությունը չի ենթադրում դրանց առաջնահերթությունը: Մինչդեռ կարգապահական տույժ ունեցող զինծառայողը խրախուսվում է դրա հանումով:

<sup>92</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 22, մաս 2-րդ:

զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար տվյալ օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Հատկանշականն այն է, որ կարգապահական պատասխանատվությունը Կանոնագրքով նախատեսված իրավախախտումների համար առաջանում է անկախ այն հանգամանքից՝ դրանք իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն, թե ոչ<sup>93</sup>: Կանոնագրքով նախատեսված են նաև կարգապահական խախտման համար պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները<sup>94</sup>: Ծանրացնող հանգամանքների առկայությամբ կատարված կարգապահական խախտումները համարվում են կոպիտ կարգապահական խախտումներ<sup>95</sup>:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված շարքային զինծառայողների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժի հետևյալ տեսակները՝

1. աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ,
2. հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով,
3. կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով,
4. գերատեսչական կրծքանշանից զրկում,
5. պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով,
6. զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով,
7. հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով,
8. զինվորական ծառայությունից արձակում<sup>96</sup>:

Կարգապահական տույժը կիրառվում է անհատական կարգով՝ կարգապահական խախտում թույլ տված զինծառայողի նկատմամբ: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, իրավախախտի անձը, նրա մեղքի աստիճանը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Այն տրվում է գրավոր հրամանով, որում պարտադիր նշվում են կարգապահական խախտման էությունը, տվյալ կարգապահական տույժը կիրառելու հիմնավորվածությունը, զինծառայողի մեղքի աստիճանը:

Զինծառայողի կողմից կոպիտ կարգապահական խախտում թույլ տալու դեպքում իրավասու հրամանատարի հրամանով նշանակվում է ծառայողական քննություն՝

<sup>93</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 13-րդ, մաս 2-րդ:

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղում, հոդվածներ 18 և 19:

<sup>95</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 19, մաս 2-րդ:

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 24, մաս 1-ին:

կարգապահական խախտման բնույթը, դրա կատարման հանգամանքները և հետևանքները պարզելու, կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու, զինձառայողի մեղքի աստիճանը և կարգապահական տույժի տեսակը որոշելու համար: Իր նկատմամբ նշանակված ծառայողական քննության ընթացքում զինձառայողն իրավունք ունի ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, ինչպես նաև՝ այն բողոքարկելու: Ջինձառայողներն իրավունք ունեն իրենց նկատմամբ նշանակված կարգապահական տույժերը բողոքարկել վերադասության կարգով՝ օրենքով նախատեսված կարգով<sup>97</sup>: Այն կարող է բողոքարկվել տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքով նախատեսվում են կարգապահական խախտումների առանձին տեսակները: Մասնավորապես, Կանոնագրքի Հատուկ մասով նախատեսված են հետևյալ կարգապահական իրավախախտումները՝ հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 31), գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը (հոդված 32), մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (հոդված 33), սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը (հոդված 34), պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (հոդված 35), ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (հոդված 36), հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը (հոդված 37), ռազմական գույքն անգգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 38), զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը (հոդված 39), զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը (հոդված 40), իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (հոդված 41), անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ (հոդված 42), մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը (հոդված 43), թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը (հոդված 44),

<sup>97</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 27:

հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը (հոդված 45):

### Ստացված հրամանները բողոքարկելը

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը տարբերում է *հրաման* և *կարգադրություն* հասկացությունները: Ըստ դրա՝ հրամանը հրամանատարի (պետի) կարգադրությունն է՝ ուղղված ենթականերին, որ պահանջում է որոշակի գործողությունների կատարում, այս կամ այն կանոնի պահպանում կամ սահմանում է որոշակի կարգ, դիրք: Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, կապի տեխնիկական միջոցներով ինչպես մեկ զինծառայողի, այնպես էլ դրանց խմբի և ողջ զորամասին: Գրավոր հրամանը պաշտոնական փաստաթուղթ է, որը միանձնյա ղեկավարման սկզբունքի հիման վրա հրապարակում են զորամասի հրամանատարները/հիմնարկների պետերը: Բանավոր հրամաններ տալիս են բոլոր հրամանատարները (պետերը)<sup>98</sup>:

Իր հերթին, կարգադրությունը նույնպես տրվում է գրավոր կամ բանավոր: Կարգադրությունը առավելապես վերաբերում է մասնավոր հարցերի: Ի տարբերություն հրամանի՝ կարգադրությունը պաշտոնեական պարտադրող փաստաթուղթ է, որ շտաբի պետը հրապարակում է հրամանատարի անունից կամ կայազորի զինվորական պարետը՝ կայազորի պետի անունից<sup>99</sup>:

Հրամանները պետք է խստիվ համապատասխանեն օրենքներին և զինվորական կանոնադրություններին: Հրամանատարը հրամանը տալուց առաջ պարտավոր է համակողմանիորեն գնահատել իրադրությունը և միջոցներ նախատեսել դրա կատարումն ապահովելու համար: Նա պատասխանատվություն է կրում տված հրամանի և դրա հետևանքների, հրամանի՝ օրենսդրությանը համապատասխանելու, տրված հրամանում պաշտոնի չարաշահման և լիազորությունների գերազանցման, ինչպես նաև հրամանի կատարման համար միջոցներ չձեռնարկելու համար: Միաժամանակ, զինծառայողին չեն կարող տրվել այնպիսի հրամաններ կամ կարգադրություններ, որոնք առաջադրում են զինվորական ծառայության հետ առնչություն չունեցող խնդիրներ կամ իրենց կատարմամբ օրենքի խախտման են հակում<sup>100</sup>:

<sup>98</sup> Նույն տեղում, հոդված 37:

<sup>99</sup> Նույն տեղում, հոդվածներ 38, 39:

<sup>100</sup> Նույն տեղում: «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանվում է, որ զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանները պետք է համապատասխանեն հրամաններ կամ ցուցումներ տվողի և դրանք կատարողի լիազորությունների սահմաններին:



Ենթական պարտավոր է անվերապահորեն կատարել հրամանը. դրա քննարկումն անթույլատրելի է, իսկ չենթարկվելու կամ հրամանը չկատարելու համար նախատեսված է քրեական պատասխանատվություն<sup>101</sup>: Միաժամանակ, *ակնհայտ անօրինական հրաման կամ կարգադրությունը չկատարելը բացառում է քրեական պատասխանատվությունը*<sup>102</sup>: Հրամանատարի (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում<sup>103</sup>: Հրամանը կարող է բողոքարկվել, սակայն առանց դրա կատարումը կասեցնելու<sup>104</sup>:

Հրամանները տրվում են ենթակայության կարգով, որը սահմանված է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով»<sup>105</sup>: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ավագ պետը կարող է հրաման տալ ենթականերին՝ շրջանցելով նրանց անմիջական պետին: Եթե հրաման կատարող զինծառայողը ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով առավել բարձր ուրիշ պետից ստանում է նոր հրաման, որը խոչընդոտում է նախորդի կատարումը, նա այդ մասին զեկուցում է երկրորդ հրաման տվողին և հրամանի կրկնության դեպքում կատարում վերջինը: Նոր հրաման տվողն այդ մասին հաղորդում է առաջին հրամանը տվողին:

Միաժամանակ, օրենքը զինծառայողին հնարավորություն է տալիս իր առջև դրված խնդիրները լուծելիս դրսևորել ինքնուրույնություն և պահանջում է խելացի նախաձեռնության ցուցաբերում: Դա առանձնապես անհրաժեշտ է, երբ տրված հրամանը չի համապատասխանում կտրուկ փոփոխված իրադրությանը, և անհնար է նոր հրաման ստանալը:<sup>106</sup>

Այն զինծառայողները, որոնք, ըստ իրենց ծառայողական դիրքի և զինվորական կոչման, մյուս զինծառայողների նկատմամբ պետեր կամ ենթականեր չեն, կարող են լինել ավագներ և կրտսերներ, ինչը որոշվում է ըստ զինծառայողների զինվորական կոչումների: Զինվորական կոչումով ավագները կրտսերների կողմից զինվորական կարգապահության, հասարակական կարգի և վարքի կանոնների, զինվորական

<sup>101</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 356:

<sup>102</sup> Նույն տեղում, հոդված 47:

<sup>103</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրք», հոդված 41:

<sup>104</sup> Նույն տեղում, հոդված 32:

<sup>105</sup> Կանոնագրքի հոդված 34-ի համաձայն՝ իրենց զինվորական կոչման բերումով պետեր են զինվորական ծառայության մեջ գտնվող՝

- գեներալ-գնդապետները՝ ավագ և կրտսեր սպաների, ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.

- գեներալները, գնդապետները՝ կրտսեր սպաների, ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.

- փոխգնդապետի, մայրի կոչումով ավագ սպաները՝ ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.

- կրտսեր սպաները՝ սերժանտների, զինվորների համար.

- ենթասպաները՝ իրենց հետ նույն գորամասի սերժանտների, զինվորների համար.

- սերժանտները՝ նույն գորամասի զինվորների համար:

<sup>106</sup> Նույն տեղում, հոդված 43:

համազգեստ կրելու և զինվորական ողջույնի կատարման խախտումների դեպքում պետք է նրանցից պահանջեն վերացնել այդ խախտումները: Կոչումով կրտսերները պարտավոր են անառարկելիորեն կատարել ավագների այդ պահանջները<sup>107</sup>:

Հրամանների դեմ բողոքների ներկայացման և քննարկման կարգը սահմանվում է ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ: Կանոնադրության 5-րդ գլուխը վերաբերում է զինծառայողների առաջարկություններին, դիմումներին և բողոքներին (գանգատներին): Սույն գլխի դրույթների համաձայն՝ յուրաքանչյուր զինծառայող իրավունք ունի անձամբ, ինչպես նաև իր կողմից լիազորած անձի միջոցով բողոքելու հրամանատարի (պետի) և այլ զինծառայողի՝ իր նկատմամբ կատարած անօրինական գործողությունների, օրենքով սահմանված իր իրավունքների և արտոնությունների սահմանափակման դեմ<sup>108</sup>: Բողոքը ներկայացվում է այն զինծառայողի անմիջական պետին, որի գործողությունները, տվյալ դեպքում՝ հրամանը, բողոքարկվում է: Խմբակային բողոքների ներկայացումն արգելվում է<sup>109</sup>: Բողոքի ներկայացումը չի ազատում հրամանները և ծառայողական պարտականությունները կատարելուց: Միաժամանակ, կանոնադրությունը նախատեսում է բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակում. արգելվում է ներկայացնել մարտական հերթապահության, շարքում եղած ժամանակ (բացառությամբ զինծառայողների հարցման ժամանակ տրված բողոքների (գանգատների), պահակախմբում, ինչպես նաև օրվա վերակարգում ու պարապմունքներում գտնվելու ժամանակ<sup>110</sup>: Արգելվում է խոչընդոտել զինծառայողների կողմից բողոք ներկայացնելը, ինչպես նաև դրանց համար նրանց պատժել, հետապնդել կամ ճնշել<sup>111</sup>: Բողոքը ստացած հրամանատարը պարտավոր է եռօրյա ժամկետում քննարկել այն և բացահայտել ու վերացնել բողոքում առկա պատճառները<sup>112</sup>: Եթե բողոք ստացած հրամանատարը բավարար իրավունքներ չունի այն լուծելու կապակցությամբ, ապա ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում բողոքն ուղարկվում է վերադաս հրամանատարությանը:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է հրամանների, ցուցումների, ինչպես նաև ստացված կարգապահական տույժերի բողոքարկման հետևյալ կարգը:

Հրաման կամ ցուցում տված կամ ստացած զինծառայողի լիազորությունների սահմաններին չհամապատասխանող հրամանների առնչությամբ զինծառայողն իրավունք ունի վերադաս հրամանատարներին ներկայացնել զեկուցագիր: Դրանում պարտադիր նշվում են բողոքարկվող հարցի էությունը, այն հրամանատարի (պետի) կամ

<sup>107</sup> Նույն տեղում, հոդված 35:

<sup>108</sup> «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրություն», կետ 116:

<sup>109</sup> Նույն տեղում:

<sup>110</sup> Նույն տեղում, կետ 118:

<sup>111</sup> Նույն տեղում, կետ 119:

<sup>112</sup> Նույն տեղում, կետ 120:

այլ զինձառայողի տվյալները, որոնց գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են, ինչպես նաև զեկուցագիր ներկայացնող զինձառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, զինվորական կոչումը, բնակության (ուսման) վայրը:

Եթե զեկուցագիրը տրվել է այն հրամանատարին, որի իրավասությունների մեջ չի մտնում դրանում նշված հարցերի լուծումը, 3-օրյա ժամկետում նա զեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ դրանք լուծելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին)՝ այդ մասին տեղյակ պահելով զեկուցողին: Միաժամանակ, զեկուցագիրը չի կարող ուղարկվել այն հրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են զեկուցագրում:

Արգելվում է խոչընդոտել զինձառայողին ներկայացնելու զեկուցագիր, դրա համար նրան պատժել, նսեմացնել նրա պատիվն ու արժանապատվությունը կամ դրսևորել այլ անարդարացի վերաբերմունք, ինչպես նաև խոչընդոտել, որ նա ամբողջ ծավալով իրականացնի իր խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանությունը: Ջեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող զեկուցագրի մասին որոշումն ընդունվում է մինչև 30 օր ժամկետում՝ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին տեղեկացնելով զեկուցագիր ներկայացնողին:

Ջեկուցագրում ներկայացված հարցերի լուծումը մերժելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է զեկուցագիր ներկայացրած զինձառայողին՝ նշելով մերժման պատճառները, մերժման համար հիմք համարվող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև պարզաբանելով մերժումը բողոքարկելու կարգը:

Ջեկուցագրում ներկայացված հարցերը համարվում են լուծված, եթե քննարկվել են ամբողջությամբ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ և տրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող սպառիչ գրավոր պատասխան:

**ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Պետությունը երաշխավորում է զինծառայողների սոցիալական և իրավական պաշտպանությունը, միջոցներ է ձեռնարկում նրանց համար բավարար և արժանի կենսամակարդակ ապահովելու, ծառայության և կենցաղի պայմանների բարելավման ուղղությամբ: Զինծառայողների իրավունքների ապահովումը և պահպանումը դրվում են տարածքային կառավարման մարմինների, զինվորական կառավարման մարմինների, հրամանատարների (պետերի) և իրավապահ մարմինների վրա<sup>113</sup>:

Զինծառայողների սոցիալական պաշտպանության հետ կապված հարցերը կարգավորվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով: Դրանով, մասնավորապես, նախատեսվում են զինծառայողների աշխատանքային երաշխիքները, նյութական ապահովությունը, աշխատելու և հանգստի ժամանակը, զինծառայողների արձակուրդի իրավունքը, բժշկական սպասարկման իրավունքը, բնակարանի իրավունքը, զինծառայողների և նրանց ընտանիքի անդամներին ամենամսյա դրամական բավարարումը, զինծառայողների տրանսպորտային սպասարկումը, զինծառայողների կրթության իրավունքը, զինծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը և ծառայության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության ծախսերի հատուցումը:

Ելնելով սույն հետազոտության նպատակներից՝ անդրադառնանք միայն ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողների սոցիալական երաշխիքներին, զինվորական ծառայության իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվությանը:

Այսպես, որպես պարտադիր զինվորական ծառայության գորակոչված զինծառայողների աշխատանքային երաշխիքներ՝ օրենքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր գործատուները պարտավոր են մինչև գորակոչվելն իրենց մոտ աշխատած ժամկետային զինծառայողներին, զինված ուժերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, ընդունել աշխատանքի՝ նախկինից ոչ ցածր պաշտոնով: Միաժամանակ, զինծառայողները զինված ուժերի շարքերից օրենքով սահմանված կարգով արձակվելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից<sup>114</sup>:

<sup>113</sup> Նույն տեղում, հոդված 10:

<sup>114</sup> «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, հոդված 29:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողները պետական բյուջեի հաշվին ստանում են դրամական բավարարում, պարենային և հանդերձանքի ապահովում՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով և պայմաններում: Միաժամանակ, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողները առողջության, ժամկետը լրանալու դեպքում ծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում ստանում են դրամական օգնություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 75 տոկոսի չափով, իսկ նշված կազմից երկկողմանի ծնողագուրկ (որբ) զինծառայողներին՝ հիմնական կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով<sup>115</sup>:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողները ունեն հանգստի իրավունք: Զինավարժություններ, մարտական հրաձգություններ և մարտական հերթապահություններ անցկացնում են շաբաթվա ցանկացած օր՝ առանց աշխատաժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման: Զինվորական ծառայության պարտականությունները տոնական և ոչ աշխատանքային օրերին կատարելու դեպքում ժամկետային զինվորական ծառայության զինծառայողների հանգստի ժամանակը սահմանում է համապատասխան հրամանատարը (պետը):

Ժամկետային պարտադիր զինծառայողներին տրամադրվում են հերթական, լրացուցիչ և հիվանդության արձակուրդ:

Հերթական արձակուրդը տրվում է խրախուսման կարգով՝ ոչ պակաս, քան 6 ամսվա բարեխիղճ ծառայության դեպքում զինվորներին՝ 15 օր, իսկ սերժանտներին և ավագներին՝ 20 օր տևողությամբ:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինվորներին հրամանատարի (պետի) որոշմամբ կարող է տրամադրվել 5-օրյա լրացուցիչ արձակուրդ զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար, ինչպես նաև ընտանեկան դրությունից ելնելով՝ ամուսնացած զինծառայողներին՝ 6 ամիսը մեկ անգամ պարբերականությամբ: «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ լրացուցիչ արձակուրդ կարող է տրամադրվել նաև պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի կողմից նախատեսված այլ դեպքերում ևս:

Միաժամանակ, ծառայության հատուկ պայմաններ ունեցող կամ վնասակար աշխատանքներում զբաղված ժամկետային զինծառայողները ունեն 10-օրյա լրացուցիչ արձակուրդի իրավունք<sup>116</sup>:

<sup>115</sup> Նույն տեղում, հոդված 30:

<sup>116</sup> Նույն տեղում, հոդված 32: Ժամկետային զինծառայողներին տարեկան 10 օրվա տևողությամբ լրացուցիչ արձակուրդի տրամադրման պայմանները և ծառայության տեսակներն ամրագրված են ՀՀ

Ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա զինծառայողին տրամադրվում է հիվանդության արձակուրդ՝ 30-60 օր տևողությամբ: Բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետն ավարտվելուց հետո զինծառայողները ենթակա են ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու համար:

«Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է զինծառայողների, այդ թվում նաև ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների անվճար որակյալ բժշկական օգնությունը համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք<sup>117</sup>:

Օրենքը նախատեսում է զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների ամենամսյա դրամական օգնության իրավունքը: Մասնավորապես, որպես ամենամսյա դրամական օգնության իրավունք ունեցողներ՝ օրենքը բաժանում է զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց, այս խմբում կարելի է առանձնացնել Հայաստանի Հանրապետության *պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված շարքային զինծառայողների ընտանիքի անդամներին*:

Ամենամսյա դրամական օգնության իրավունք ունեցող անձանց երկրորդ խմբի մեջ մտնում են զոհված զինծառայողների ընտանիքների այն անդամները, ովքեր ստանում են աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ և ունեն նաև կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք, իսկ երրորդ խմբում ներառված են Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական

---

կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշմամբ: Որոշման 8-րդ կետի համաձայն՝ դրանք են՝ սահմանված կարգով հայտարարված արտակարգ իրավիճակների պայմաններում ծառայությունը, մարտական գործողություններին մասնակցությունը, մարտական հերթապահությունը և հատուկ առաջադրանքի կատարումը, բարձր լեռնային շրջաններում (ծովի մակերևույթից 2000 մետր և ավելի բարձրություն) ծառայությունը, հրթիռային վառելիքին առնչվող ծառայությունը, թունավոր նյութերի, իոնացնող և ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրներին առնչվող ծառայությունը, թռիչքային (օդաչուական) անձնակազմում ծառայությունը, գաղտնալսումները, ՀԱԷԿ-ի պահպանության ծառայությունը, կալանքի տակ գտնվող անձանց տուբերկուլյոզային դիսպանսերներում պահպանության ծառայությունը, ֆրեզգրեզատներին և օդամղիչներին առնչվող ծառայությունը, վթարային վերականգնողական ծառայությունը, ջրասուզակների ծառայությունը (տարեկան առնվազն 265 ժամ ջրի տակ անցկացրած), ազդանյութերի (ռեագենտներ) լուծազատմանն առնչվող ծառայությունը, տեխնաձին կամ բնական աղետների հետևանքների՝ ռադիոակտիվ, քիմիական, անասունների համաճարակների և կենսաբանական ախտահարման օջախների վերացմանն առնչվող ծառայությունը, ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի «Ա» ստորաբաժանումում ծառայությունը:

<sup>117</sup> Նույն տեղում, հոդված 32:

պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից անկախ<sup>118</sup>:

Զինծառայողների սոցիալական երաշխիքներից է նաև նրանց՝ քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով անվճար երթևեկության իրավունքը, անկախ դրանց սեփականության ձևից, բացառությամբ տաքսիների<sup>119</sup>:

Պետության կողմից երաշխավորվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների կրթության իրավունքը, ըստ որի՝ անձն իրավունք է ստանում զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդունվելու պետական ուսումնական հաստատություններ, մրցույթից դուրս պետական պատվերի շրջանակներում՝ ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում:

Միաժամանակ, երաշխավորվում է ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին<sup>120</sup>:

Զինծառայողները, ինչպես նաև ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներն օգտվում են եկամտահարկ վճարելու արտոնություններից<sup>121</sup>, որոնցից օգտվում են նաև պարտադիր ժամկետային զինծառայողները սահմանված կարգով պահեստ արձակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում<sup>122</sup>:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է զինծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը զոհվելու (մահանալու) դեպքերից՝ տվյալ պահին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի երեսունհինգապատիկի, իսկ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, մարտական հերթապահության և հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքերից՝ հիմնական կենսաթոշակի յոթանասունապատիկի չափով:

---

<sup>118</sup> Նույն տեղում, հոդված 34.1:

<sup>119</sup> Նույն տեղում, հոդված 36:

<sup>120</sup> Նույն տեղում, հոդված 37:

<sup>121</sup> «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ եկամուտ չեն համարվում և հարկման ենթակա չեն զինծառայողների ընտանիքի անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ գումարները: Իսկ 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկման ենթակա եկամուտներից նվազեցվում են զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները:

<sup>122</sup> Օրենսդրական նման կարգավորումից հարց է առաջանում, թե զինվորական պարտադիր ծառայությունից հետո մեկ տարվա ընթացքում ինչպիսիք զինվորական ծառայություններ պետք է մատուցվեն քաղաքացիների կողմից, որոնց համար եկամուտները չեն հարկվում:

Պարտադիր պետական ապահովագրությունը տարածվում է նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների վրա՝ աշխատունակության կորստի չափին համամասնորեն, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքից ապահովագրվելու համապատասխան ընդհանուր գումարների նկատմամբ<sup>123</sup>:

---

<sup>123</sup> Նույն տեղում, հոդված 39:



**ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ, ԱԶՍԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՍ  
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած և ծառայական պարտականություններ կատարելու ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության երաշխիքները:

Նախ, նշված անձինք «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն ունեն գինվորական կենսաթոշակի իրավունք<sup>124</sup>:

Օրենսդրությամբ նախատեսված է հաշմանդամության գինվորական կենսաթոշակի ստացման իրավունքը. այն ստանում են անձինք, ովքեր հաշմանդամ են ճանաչվել ծառայության ընթացքում կամ դրանից հետո՝ հինգ տարվա ընթացքում՝ զինծառայության ընթացքում ծագած հիվանդության հետևանքով, այդ ժամկետից ուշ, սակայն զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով<sup>125</sup>: Հաշմանդամության գինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ գինվորական ծառայության տևողությունից և հաշմանդամության ողջ ժամանակահատվածի համար:

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով նախատեսված են վետերանների սոցիալական երաշխիքները: Մասնավորապես, վետերաններն ունեն անվճար բժշկական օգնության և բժշկական սպասարկման, ինչպես նաև արտոնյալ պայմաններում առողջարանային բուժման ուղեգրերի իրավունք: Վետերաններին տրվում է ամենամսյա դրամական օգնություն՝ էլետրաէներգիայից և տրանսպորտից օգտվելու համար, իսկ հաշմանդամ վետերաններին՝ նաև գազի, ջրամատակարարման, ջրահեռացման և ջերմամատակարարման ծախսերը հոգալու համար: Հաշմանդամ վետերաններն օգտվում են նաև բնակարանի, աղբահանության, հեռախոսի և ռադիոյի վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու, անվճար պրոթեզավորում և վերականգնողական պարագաներ ստանալու իրավունքից: Նրանք պետության կողմից ստանում են նաև ամենամսյա պատվովճար:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած և հաշմանդամ զինծառայողները օգտվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված

---

<sup>124</sup> «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, հոդված 34.1: Սակայն «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի սահմանումներից հստակ չէ, թե գինվորական կենսաթոշակի որ տեսակն է ենթակա վճարման վերոնշյալ անձանց, եթե նրանք հաշմանդամ չեն:

<sup>125</sup> «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենք, հոդված 20:

իրավունքներից և արտոնություններից: Նրանք անվճար բժշկական օգնության, անհրաժեշտության դեպքում՝ առողջարանային բուժման իրավունք ունեն: Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող, ինչպես նաև զինվորական ծառայողական պարտականությունների ժամանակ գոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները (ինչպես նաև ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձինք) օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած զինծառայողներն օգտվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ սոցիալական իրավունքներից և երաշխիքներից: Մասնավորապես, նրանք ունեն քաղաքային ուղևորատար տրանսպորտից անվճար օգտվելու իրավունք, օգտվում են զինծառայողների համար սահմանված եկամտահարկի վճարման արտոնություններից, նրանց երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ կատարվում է մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին,<sup>126</sup>: Զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներն օգտվում են գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան և սպասարկման համար պետության և համայնքի սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ստանալու իրավունքից<sup>127</sup>:

---

<sup>126</sup> «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 36-40:

<sup>127</sup> ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 64:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Արևելյան Եվրոպայում աշխարհաքաղաքական փոփոխությունները և սառը պատերազմը նպաստեցին ԱՄՆ-ում զինվորական ծառայությունների նվազմանը՝ նախագահի և Կոնգրեսի որոշմամբ: Բանակն աշխատանքից ազատում կամ թոշակի էր ուղարկում սոցիալական ծառայություններ մատուցող անձանց:

ԱՄՆ բանակային ծրագիրը շարունակում է մնալ ամենաերկարատև ու բազմազան զինվորական սոցիալական աշխատանքի ծրագիրն աշխարհում: Չնայած այս ոլորտում սոցիալական աշխատողների թվի կրճատմանը՝ նրանք շարունակում են հսկայական աջակցություն ցույց տալ զորքի անդամներին և նրանց ընտանիքներին իրենց առողջության և սոցիալական բարեկեցության հարցերում: Հատկապես հատկանշական է հետևյալ ոլորտներում սոցիալական աշխատողների աշխատանքը.

**Ա. Առողջություն և հոգեկան առողջություն:** Զինվորական սոցիալական աշխատողները ներգրավված են բուժկենտրոններում և հոսպիտալներում, մատուցում են բուժական և փաստաբանական ծառայություններ: Որակավորված սոցիալական աշխատողները ընտանիքին սովորեցնում են կլինիկական օրդինատուրայի ծրագիրը և կատարում են կլինիկական սոցիալական աշխատանք ֆիզիկապես և հոգեպես խոցելի մարդկանց հետ՝ ներգրավելով նաև ընտանիքին: Զինվորական սոցիալական աշխատողները հոգեկան առողջության և այլ տարբեր սոցիալական ծառայություններ տրամադրում են ուղղիչ հաստատությունների անդամներին, աշխատակազմին և ընտանիքի անդամներին: Հոգեկան առողջության համայնքային գործողությունների շրջանակներում սոցիալական աշխատողը տրամադրում է ամուսնական, ընտանեկան խորհրդատվություն, երեխաներին և անչափահասներին խորհրդատվություն, և ճգնաժամային միջամտության ծառայություններ:

Զինված ուժերում սոցիալական աշխատանքի հարուստ փորձ ունի Կանադան, որտեղ ապահովվում է գաղտնիության սկզբունքի վրա հիմնված խորհրդատվություն հոգեբանական և սոցիալական խնդիրներ ունեցող զինծառայողների համար: «Կանադայի զինված ուժերի ծառայողների աջակցություն»<sup>128</sup> կոչվող ծրագրի շրջանակներում գործում է նաև անվճար թեժ գիծ, ինչպես նաև Կանադայի զինված ուժերի անձնակազմի ու նրանց ընտանիքի անդամների համար նախատեսված աջակից ծառայություն: Կանադայում գործում է նաև զինված ուժերի քաղաքացիական ծառայողների համար աջակցության ծրագիրը<sup>129</sup>՝ կոչված աջակցելու անձնական և մասնագիտական խնդիրների հաղթահարմանը: Զինծառայողների շրջանում

<sup>128</sup> [www.forces.gc.ca/health-sante/ps/map-pam/default-eng.asp](http://www.forces.gc.ca/health-sante/ps/map-pam/default-eng.asp).

<sup>129</sup> [http://hr.ottawahull.mil.ca/hrciv/dgcesp/ddwb/eap/en/home\\_e.asp?reference=110750001](http://hr.ottawahull.mil.ca/hrciv/dgcesp/ddwb/eap/en/home_e.asp?reference=110750001).

ինքնասպանության, սթրեսի, բռնությունների և տարբեր կախվածությունների դեմ պայքարի համար մշակվել է «Հզորացնելով զինված ուժերը» ծրագիրը, որի ընթացքում իրականացվում են հետևյալ ծրագրերը՝ հնարավոր վնասվածների (այդ թվում՝ հոգեբանական), կանխարգելում և ակտիվ ապրելակերպ, առողջ սննդակարգ, կախվածությունների կանխարգելում և դրանց վերաբերյալ իրազեկում, սոցիալական բարեկեցություն: Բոլոր ծառայություններն անվճար են և հասանելի զինված ուժերի բոլոր աշխատակիցներին:

**Բ. Համայնքային աշխատանք:** Սոցիալական աշխատողները մասնակցում են զինվորական հետազոտության և գնահատման ինստիտուտների աշխատանքներին, որտեղ նրանք տեղեկանում են զինվորների, նրանց ընտանիքների և համայնքների կյանքի վրա մի շարք գործոնների ազդեցության մասին: Սոցիալական աշխատողները ներգրավված են նաև պատանդությունից ազատվածների, աղետներից տուժածների օգնության և մարդասիրական օգնության գործողություններում: Բանակը ձևավորել է սոցիալական աշխատողների, հոգեբույժների և հոգեբանների հատուկ թիմեր, որոնք ուղեկցում են նրանց, նույնիսկ երբ նրանք շրջում են աշխարհով:

Տարբեր ծառայություններ տրամադրող զինվորական սոցիալական աշխատողները լայնորեն ներգրավվում են բնական աղետներից տուժածներին տրամադրվող մարդասիրական օգնության աշխատանքներում, դժբախտ պատահարներից, պատանդությունից փրկվածներին ճգնաժամի միջամտության ծառայություններում և այն օգնության ջանքերում, որտեղ գորքն է ներգրավված: Ջինվորական ծառայությունների սոցիալական աշխատանքի ծրագրերը որոշ ոլորտներում ունեն նույն համակարգային խնդիրները:

Ջինվորական սոցիալական աշխատողներն իրականացնում են նաև.

**Գ.** Պատերազմական իրավիճակներում գորքի աջակցությունը,

**Դ.** Ջինվորների ընտանիքների աջակցություն, ներառյալ ընտանեկան բռնության կանխարգելում և բուժում,

**Ե.** Ջինվորական ծառայությունների աջակցություն՝ ակոհոլից և թմրանյութերից կախվածությունը կանխարգելելու կամ բուժելու համար,

**Զ.** Բուժական ծառայությունների ապահովում բուժական, հոգեբուժական, ուղղիչ և ընտանիքի աջակցման ծրագրերի միջոցով:

Սոցիալական աշխատանքի հարուստ փորձ ունի նաև Ավստրալիան, որտեղ պաշտպանության աջակցության խմբի կողմից իրականացվում է իրավական, առողջապահական, զինվորական և անձնական խնդիրներում համընդհանուր աջակցություն զինված ուժերի ներկայացուցիչներին:

Ավստրալիայում գործում է նաև «Պաշտպանության ոլորտում ծառայողների կազմակերպությունը»<sup>130</sup>, որը կոչված է սատարելու զինծառայողների ընտանիքներին՝ վերջիններին տրամադրելով անհրաժեշտ սոցիալական աջակցություն: Ի ապահովումն զինծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների արդյունավետ իրականացման՝ զինծառայողները պետք է վստահ լինեն, որ իրենց ընտանիքի անդամները ստանում են անհրաժեշտ խնամք և աջակցություն, որպիսի գաղափարն ընկած է կազմակերպության ստեղծման հիմքում:

ԱՄՆ Կոնեկտիկուտ նահանգի ռազմական վարչության և նահանգային կառավարության մշակած «Աջակցություն զինծառայողներին» ծրագրի շրջանակներում գործում է «Զինծառայողներին աջակցություն» ՀԿ-ն: Այն իրականացնում է ընտանեկան սոցիալական աշխատանք, սթրեսի և ՀՏՄ-ի (Հետտրավմատիկ սթրեսային խանգարում) կանխարգելման և հոգեկան առողջության վերականգնման աշխատանք, սոցիալական աշխատանք երեխաների և դեռահասների հետ և նյութական աջակցություն: Կազմակերպության հիմնական գործառույթները և գործունեության ուղղություններն են.

- Աջակցություն զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների հուզական խնդիրների լուծմանն ու կանխարգելմանը:

- Հնարավոր խնդրի լուծման հարցում օգնություն՝ ուղղորդման միջոցով: Հաճախ զինծառայողները և նրանց ընտանիքի անդամները չգիտեն, թե ում պետք է դիմել իրենց խնդիրներին լուծում տալու համար: ՀԿ-ն համագործակցում է պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ և անհրաժեշտության դեպքում միջնորդում զինծառայողների և նրանց ընտանիքի անդամներին համապատասխան աջակցությունը տրամադրելու համար:

- Երեխաների կամ հաշմանդամների համար խնամքի կազմակերպում:

- Բազմամասնագիտական խորհրդատվության տրամադրում: Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական խնդիրները սովորաբար լինում են միանգամից մի քանի ոլորտներից: Այդ իսկ պատճառով ճիշտ բազմամասնագիտական խորհրդատվությունը մեծապես նպաստում է այդ խնդիրների լուծմանը:

- Աջակցություն ապահովագրական վճարների տրամադրման գործընթացում: «Զինծառայողներին աջակցություն» ՀԿ-ն կիրառության մեջ է դրել զինծառայողների և նրանց ընտանիքի սոցիալ-հոգեբանական վիճակի գնահատման հատուկ հարցաթերթիկներ, որոնք մշակվել են ՀԿ-ի մասնագետների կողմից: Կազմվում է կլինիկական մատրիցա, որը ներառում է տվյալներ շահառուի կենսաֆիզիոլոգիական վիճակի, սոցիալական վիճակի, կյանքի նկատմամբ վերաբերմունքի, շահառուի մոտ սթրեսաձին գործոնների առկայության և այլնի վերաբերյալ:

<sup>130</sup> [http://www.defence.gov.au/dco/news\\_and\\_updates.htm](http://www.defence.gov.au/dco/news_and_updates.htm).

1993 թվականին, ի ապահովումն զինձառայողների ընտանիքի և նրանց երեխաների սոցիալ-հոգեբանական խնդիրների, Ռուսաստանի Դաշնությունում փորձարկվեց զինձառայողների ընտանիքի ու երեխաների սոցիալ-հոգեբանական օգնության կենտրոնի նոր մոդել: Այն ներկայացնում է յուրահատուկ կապող օղակ ընտանիքի և պետական ու ոչ պետական կառույցների միջև՝ համատեղ լուծում տալով ընտանիքի սոցիալական ապահովության հիմնախնդիրներին՝ կապված կրթության, առողջապահության, իրավապաշտպանության ոլորտների և հասարակական կազմակերպությունների հետ: Այն ապահովում է բազմակողմանի սոցիալ-հոգեբանական աջակցություն: Ծրագիրն իրականացնողները կապող օղակի դեր են կատարում այլ ոլորտների հետ, որոնք էլ տրամադրում են համապատասխան ձառայությունները, սակայն տվյալ կենտրոնի անմիջական ուղղորդմամբ: Զինձառայողի ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի ժամանակ կենտրոնի մասնագիտական կազմը իրեն հատուկ տեխնոլոգիաներով կատարում է հետևյալ գործառույթները.

– Տեղեկատվական՝ ա) հավաքում է տեղեկություններ շահառու ընտանիքների, նրանց սոցիալական խնդիրների և պահանջումների մասին, փոխանցում հավաքված տեղեկատվությունը շահագրգիռ կառույցներին, որոնք ի վիճակի են աջակցել այդ շահառուներին, բ) որոշում է շահառուի դիմումի բնույթը և իրական պատկերը, որն առկա է այդ ընտանիքում, գ) ընտանիքին տեղեկատվություն է տրամադրում սոցիալական աջակցություն ստանալու իրավունքների, ինչպես նաև այն մասնագիտական կազմի մասին, ովքեր կարող են աջակցել սոցիալական տարաբնույթ խնդիրների լուծման հարցում:

– Կազմակերպչական՝ միջոցների և հնարավորությունների հայթայթում զինձառայողների ընտանիքներին նոր հմտությունների ուսուցման համար, աջակցություն պահեստազորում գտնվող զինձառայողներին այլ մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում:

– Ուղղորդիչ՝ ուղղորդում է ընտանիքին կամ նրա անդամին համապատասխան մասնագետի մոտ:

– Խորհրդակցական՝ ա) շահառու ընտանիքի հետ աշխատանքի համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմում, բ) ընտանիքի առանձին անդամներին որոշ փաստաթղթերի լրացման գործում տրամադրվող օգնություն:

– Միջնորդական՝ ապահովել կապը շահառու ընտանիքի ու մասնագետների միջև և վերջիններիս հետ փոխհարաբերությունների հոգեբանական ուղղորդում:

– Փորձագիտական՝ մասնագետը կարող է հանդես գալ որպես անկախ փորձագետ շահառու ընտանիքի մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

– Վերահսկող՝ ա) տեղեկություն ստանալ շահառու ընտանիքին համապատասխան սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման ծավալների և որակի մասին, բ)

պաշտպանել շահառուի շահերը, գ) բարձրացնել այլ ոլորտների ուշադրությունը խոցելի ընտանիքների նկատմամբ:

– Սոցիալական ծառայությունների տրամադրում՝ ա) ընտանիքին տրամադրել տարատեսակ սոցիալական նպաստներ, բ) աջակցել կենցաղային ծառայությունների տրամադրման հարցում (բնակարանի վերանորոգում, բնակչահագործման ծառայություններ), գ) աջակցել մանր ձեռնարկատիրական գործունեության ծավալման հարցում, որին կարող են մասնակցել զինծառայողների կանայք և դեռահաս երեխաները:

– Զինծառայողների ընտանիքների և երեխաների սոցիալ-հոգեբանական նորարարական մոդելի հիմքում ընկած են տարբեր համակարգերի հերթականությամբ կառուցումը, ընդհանուր խնդիրների առաջադրումը, ֆինանսավորման խառը աղբյուրները (պետական և ոչ պետական), միաժամանակյա աջակցությունը և խնդիրների բազմակողմանի լուծումը:

– Այս մոդելի արդյունավետությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն հնարավոր է կիրառել նաև հայաստանյան իրականության մեջ՝ մշակութային առանձնահատկություններին համապատասխան որոշակի փոփոխություններ կատարելով:

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՌԻ ԲԱՑԵՐԸ**

Սույն բաժինը վերաբերում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, դրանց համալրման կարգի, զինված ուժերում ծառայության, զինծառայողների իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում վեր հանված հակասություններին, օրենսդրական բացերին: Դրանցից մի քանիսը ներկայացված են ստորև:

**Իրավական հակասություններ**

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում՝ որպես օրենքի կարգավորման առարկա նշվում է զինվորական ծառայությունը, սակայն օրենքի՝ զինվորական ծառայությունը կարգավորող գլուխը՝ համապատասխան հոդվածներով, ուժը կորցրած է ճանաչվել դեռևս 2002 թ.:

Որպես «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի կարգավորման առարկա՝ նշվում են զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովումը և սոցիալական պաշտպանությունը, սակայն օրենքի 2-րդ գլուխը, որն ամրագրում էր զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովության վերաբերյալ դրույթներ, ուժը կորցրած է ճանաչվել 2010 թ. դեկտեմբերի 22-ին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական հաշվառման կարգը սահմանող՝ ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշման 13-րդ կետը սահմանում է, որ զինապարտները զինվորական հաշվառումից հանվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Սակայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը նման դրույթ չի պարունակում:

Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ. փետրվարի 26-ի թիվ 157 հրամանի 30-րդ կետը նշում է, որ զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները կազմավորվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Հիշյալ օրենքը, սակայն, զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների կազմավորման մասին դրույթ չի պարունակում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տալու իրավունքները նախատեսող հոդվածներում



բացակայում է նշում առ այն, որ նույն դրույթները կիրառելի են *այլընտրանքային ծառայությունից* ազատելու և տարկետում տալու դեպքերում ևս:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում գորակոչային հանձնաժողովները կոչվում են տեղական և մարզային կամ Երևանի քաղաքային, իսկ «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՊՆ հրամանում նշվում է *տարածքային գորակոչային հանձնաժողով*:

«Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով լրացուցիչ արձակուրդ տրամադրելու հիմքերը և դեպքերը նույնը չեն: Ի լրումն առաջին օրենքով նախատեսված հիմքերի՝ երկրորդը նշում է նաև *պաշտպանության նախարարի կողմից նախատեսված դեպքերը*:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային ծառայություն կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը: Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափով: Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի ամսական դրամական բավարարման իրավունքը սահմանվում է «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում, որի համաձայն՝ զինծառայողները (տվյալ դեպքում պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի) պետական բյուջեից ստանում են դրամական բավարարում, ինչպես նաև պարենային և հանդերձանքի ապահովություն: Օրենքի համաձայն՝ դրամական բավարարում, պարենային և հանդերձանքի ապահովություն ստանալու կարգը և պայմանները սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սակայն հասանելի աղբյուրներում սույն հարցը կարգավորող Կառավարության որոշումը չհայտնաբերվեց: Հետևաբար, անհստակ է, թե արդյոք այլընտրանքային զինվորական ծառայողները ստանում են նաև պարենային և հանդերձանքի բավարարում, թե ոչ:

«Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով սահմանված որոշակի դրույթներ հակասում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածին: Մասնավորապես, օրենքով սահմանված են սահմանափակումներ առ այն, որ պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայություն (Օրենքի

հողված 3), մինչդեռ Օրենքի 15-րդ հոդվածը այլընտրանքային ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հնարավորություն տալիս է զորակոչվելուց հետո վեց ամսվա ընթացքում հրաժարվել այլընտրանքային ծառայությունից՝ անցնելով պարտադիր զինվորական ծառայություն:

Հակասություններ կան նաև Եվրոպական կոնվենցիայի և Օրենքի 22-րդ հոդվածի միջև: Վերջինս նախատեսում է այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիների՝ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու իրավունք ունենալու սահմանափակումը:

Վերոնշյալ դրույթների և Կոնվենցիայի 9-րդ հոդվածի միջև առկա են հակասություններ, քանի որ Կոնվենցիայով նախատեսված մտքի, խղճի և կրոնի ազատությունը բացարձակ իրավունք է: Այն ներառում է սեփական կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, ինչը, ի տարբերություն կրոնը կամ համոզմունքը դավանելու իրավունքի, ենթակա չէ սահմանափակման: Հետևաբար, նման դրույթների նախատեսումը սահմանափակող նշանակություն է ունենում սեփական կրոնը կամ համոզմունքը փոխելու, ընտրելու՝ անձի բացարձակ իրավունքի վրա:

«Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ պարտադիր զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին յուրաքանչյուր դիմումի առնչությամբ կայացնում է որոշում (հոդված 8): Սակայն օրենքը չի նախատեսում հանձնաժողովի որոշումը դիմումատու քաղաքացուն տրամադրելու կարգը, այլ միայն սահմանում է, որ դիմումը մերժելու դեպքում քաղաքացուն 10 օրվա ընթացքում տրամադրվում է հանրապետական հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածք, որտեղ նշվում են դիմումը մերժելու պատճառները (հոդված 9): Միաժամանակ, օրենքով հնարավորություն է հանձնաժողովի կողմից **դիմումը մերժելու մասին որոշումը** բողոքարկել դատական կարգով այն ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում (հոդված 11): Այսպիսով, օրենքով չի կարգավորվում, թե ինչ ժամկետներում է դիմում ներկայացրած անձին տրամադրվում հանձնաժողովի որոշումը՝ ի ապահովումն նրա բողոքարկման իրավունքի իրականացման, միաժամանակ, օրենքը սահմանափակվում է միայն դիմումը մերժելու մասին որոշման բողոքարկման հնարավորության ընձեռմամբ՝ բացառելով բավարարված դիմումի առանձին դրույթների բողոքարկման հնարավորությունը:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի ընդունումից հետո կարգապահական մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժը փոխարինվեց կարգապահական վաշտ ուղարկելով: Այն որպես կարգապահական պատիժ կարող է նշանակվել տաս օրից մինչև երկու ամիս ժամկետով մեկից ավելի անգամ դիտավորությամբ կարգապահական խախտումներ թույլ տալու համար կարգապահական տույժերի ենթարկված կամ մեկ կոպիտ խախտում

թույլ տված զինճառայողի նկատմամբ: Կարգապահական վաշտ ուղարկելը կարգապահական տույժը տրվում է զորամասի հրամանատարից ոչ ցածր պաշտոն զբաղեցնող հրամանատարի/պետի հրամանով: Կարգապահական վաշտերը ստեղծվում են կայազորային սկզբունքով, որտեղ զինճառայողները ենթարկվում են օրվա խստացված կարգացուցակով ծառայության: Ծառայության կարգացուցակը սահմանվում է պաշտպանության նախարարի հրամանով: Այսպիսով, օրենքով հստակ կարգավորված չէ, թե մեկուսացման ինչպիսի պայմաններում է անցնում խստացված կարգացուցակով ծառայությունը կարգապահական վաշտում, արդյոք զինճառայողները կարգապահական վաշտում ծառայության ընթացքում զինճառայողները կրում են նույն իրավունքները, ինչ սովորական ծառայության պայմաններում, թե ոչ, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ ոչ նախարարի հրամանով:

Իրավական տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է քրեական գործերով հետաքննություն իրականացնող զորամասերի, զորամիավորումների հրամանատարների և զինվորական հիմնարկների պետերի և ռազմական ոստիկանության իրավասությունների տարանջատման և սահմանների հստակեցման հարցը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմիններ են ...2. զորամասերի, զորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինճառայողներին, 2.1 ռազմական ոստիկանությունը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով:

«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռազմական ոստիկանությունը, օրենքին համապատասխան, ապահովում է ...հետաքննության իրականացումը զինված ուժերում՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինճառայողներին:

Օրենսդրական նման կարգավորումից բխում է, որ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային զինճառայողին, հետաքննություն իրականացվում է երկու մարմինների

կողմից, և դրանց լիազորությունների և գործառույթների միջև հստակ տարանջատում օրենսդրորեն ամրագրված չէ:

«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական ոստիկանությունը հետաքննություն իրականացնելիս գործում է օրենքով հետաքննության մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակում<sup>131</sup>:

Միաժամանակ, «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով» սահմանված է, որ հետաքննության իրականացման ժամանակ, երբ հետաքննող մարմինը զորամասի հրամանատարն է, նա ղեկավարվում է ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ<sup>132</sup>:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը սահմանում է, որ երբ կարգապահական զանցանքի քննության ժամանակ պարզվում է, որ զինծառայողի զանցանքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, ապա զորամասի հրամանատարը տեղյակ է պահում կայազորի զինվորական դատախազին, անհրաժեշտության դեպքում քրեական գործ է հարուցում և նշանակում հետաքննություն<sup>133</sup>, որի իրականացման պարտականությունը հրամանատարի ցուցումով դրվում է հրամանատարի՝ սոցիալ-իրավական հարցերի գծով տեղակալի վրա, ով նաև ղեկավարում է հետաքննիչների աշխատանքը<sup>134</sup>:

Նման օրենսդրական կարգավորումը չի տարանջատում զորամասերի, զորամիավորումների և զինվորական հիմնարկների պետերի և ռազմական ոստիկանության լիազորությունների և գործառույթների սահմանները զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննություն իրականացնելիս՝ առաջացնելով անհստակություն երկու մարմինների գործունեության ընթացքում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ քաղաքացին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է ստանում նաև այն դեպքում, եթե մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն 5 տարի առաջ, և առկա է ընտանեկան դրության բերումով գորակոչիկին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու որևէ հիմք: Սույն պայմաններում օրենսդրական ձևակերպումն անհասկանալի է, քանի որ եթե անձն արդեն իսկ ունի ընտանեկան դրության բերումով պարտադիր զինվորական հերթական գորակոչից տարկետում ստանալու իրավունքի հիմք, ապա ինչ նշանակություն ունի գորակոչիկի՝

<sup>131</sup> Հայաստանի Հանրապետությունում հետաքննություն իրականացնող մարմինների իրավասության և լիազորությունների շրջանակը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

<sup>132</sup> «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», հոդված 77:

<sup>133</sup> «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրություն», կետ 91:

<sup>134</sup> Նույն տեղում, հոդված 104: Սույն օրենսդրական կարգավորումից հստակ չէ, թե ովքեր են ներգրավվում որպես հետաքննիչներ, իսկ ռազմական ոստիկանության հետաքննիչների աշխատանքի ղեկավարումն իրականացնում է համապատասխան ստորաբաժանման պետը:

ատնվագն հինգ տարի որդեգրված լինելու կամ նրա ծնողների՝ ատնվագն հինգ տարի ամուսնալուծված լինելու հանգամանքը:

### **Օրենսդրական բացեր**

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ ատենախոսությունը պաշտպանած, բայց ԲՈՂ-ի հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կարգը սահմանում է Կառավարությունը: Համաձայն Կառավարության 2002 թ. դեկտեմբերի 28-ին ընդունված համապատասխան որոշման՝ ատենախոսությունը պաշտպանած, բայց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում ատենախոսության պաշտպանության օրվանից 2 ամիս հետո, իսկ ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում հայտարարված զորակոչի ընթացքում:

Կառավարության վերոնշյալ որոշումը պարունակում է մի շարք անհստակություններ: Մասնավորապես, ՀՀ կառավարության՝ Հայաստանի Հանրապետությունում զիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին որոշմամբ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ատենախոսության հաստատման ժամկետները սահմանված չեն, ինչը ենթադրում է, որ ատենախոսության հաստատման ընթացակարգը կարող է ավելի երկար տևել, քան երկու ամիսն է: Օրենսդրական նման կարգավորումը չի բացառում ԲՈՂ-ի կողմից հնարավոր կամայականությունների և այլ ռիսկերի առկայությունը:

Միաժամանակ, սույն կարգավորումը չի հստակեցնում այն դեպքերը, երբ ատենախոսության պաշտպանության ամսաթիվը համընկնում է հայտարարված զորակոչի ընթացքին: Մասնավորապես, արդյոք անձը ստանում է ատենախոսությունը պաշտպանած, սակայն ԲՈՂ-ի որակավորումը դեռ չստացած անձի կարգավիճակ, եթե մինչև զորակոչվելը պաշտպանում է ատենախոսությունը, թե նա ենթակա է զորակոչման նախքան ատենախոսության պաշտպանության օրը:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, սահմանելով հանրապետական զորակոչային հանձնաժողովի իրավասությունը՝ քննարկելու տեղական և մարզային (քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների դեմ բերված բողոքները, չի նախատեսում բողոքարկման ենթակա որոշումների ցանկը, բողոք

ներկայացնող սուբյեկտների կազմը, բողոքը ներկայացնելու ժամկետները, ընթացակարգը և այլ հարցեր, որոնք բաց են մնում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքում չեն արտացոլվում տեղական գորակոչային հանձնաժողովների գործառույթները՝ կապված այլընտրանքային ծառայության հետ: Դրանք սահմանվում են միայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներով:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կարգապահական գումարտակում և ազատազրկման վայրերում պատիժը կրած անձինք (բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի) ուղարկվում են պարտադիր զինվորական ծառայության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով շարունակելու չճանաչված ժամկետը: «Օրենսդրությամբ սահմանված կարգ» արտահայտությունը հստակ չէ, և միակ օրենսդրական դրույթը, որը վերաբերում է տվյալ խնդրին, արտացոլված է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում, որի համաձայն՝ զինվորական ծառայության և ազատազրկման ձևով (օրենքը լռում է կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի դատապարտված անձանց մասին) պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ<sup>135</sup>: Այլ հասանելի օրենսդրական կարգավորում գոյություն չունի:

Թերևս օրենսդրական այս բացը լրացնելու կապակցությամբ Կառավարության կողմից Ազգային ժողովին է ներկայացվել «Զինապարտության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրինագիծ, որի 10-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 23-րդ հոդվածը վերաշարադրել և սահմանել. «Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտված անձինք դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են գորամասի անձնակազմի ցուցակներից և հաշվառվում են իրենց գորակոչն իրականացրած զինվորական կոմիսարիատի գորակոչային բաժնում, իսկ ազատազրկման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչման՝ պարտադիր զինվորական ծառայության չճանաչված ժամկետը շարունակելու՝ բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված դեպքերի, ինչպես նաև եթե չեն օգտվում սույն օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական

<sup>135</sup> Ավելին, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձի կողմից պատժից ազատվելու պահից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում առանց հարգելի պատճառների պարտադիր զինվորական ծառայության չճանաչված ժամկետը շարունակելու նպատակով հաշվառման կամ փաստացի բնակության վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալուց խուսափելը համարվում է հանցագործություն ՀՀ քրեական օրենսգրքի 327.5 հոդվածով:

ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով կամ առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու իրավունքից, որոնց առկայության պարագայում հաշվառվում են պահեստագորում՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով»<sup>136</sup>:

Անհասկանալի է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի ձևակերպումը, որի համաձայն այլընտրանքային ծառայությունը փոխարինվում է պարտադիր զինվորական ծառայությամբ, եթե այլընտրանքային ծառայողն այդ մասին դիմում է ներկայացնում զորամասի հրամանատարին՝ զորակոչվելուց վեց ամսվա ընթացքում: Սույն ձևակերպմամբ, փաստորեն, այլընտրանքային ծառայությունը փոխարինելու իրավունքից օգտվում են միայն այլընտրանքային զինվորական ծառայություն անցնող անձինք, քանի որ այլընտրանքային ծառայությունը փոխարինելու վերաբերյալ դիմումը հանձնվում է զորամասի հրամանատարին, մինչդեռ այլընտրանքային աշխատանքային ծառայողները ընդգրկված են այլընտրանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակում և որևէ զորամասի հետ չեն առնչվում: Հետևաբար, օրենքով կարգավորված չէ այլընտրանքային աշխատանքային ծառայողների՝ ծառայությունը փոխարինելու ընթացակարգը, մինչդեռ Օրենքը նման հնարավորություն ընձեռում է այլընտրանքային ծառայություն անցնող անձանց՝ առանց մասնավորեցնելու:

«Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով կարգավորվում է զինծառայողներին արձակուրդ տալը, իսկ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխում՝ արձակուրդ տալու կարգը: Առաջին օրենքի 32-րդ հոդվածը հակիրճ ներկայացնում է զինծառայողներին տրամադրվող արձակուրդների տեսակները, ժամկետները և հիմքերը: Այդուամենայնիվ, որպես ժամկետային պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին տրամադրվող լրացուցիչ արձակուրդի հիմք՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի 32-րդ հոդվածում չի նշվում պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի կողմից նախատեսված այլ դեպքերի մասին: Նույն կերպ, օրենքը չի անդրադառնում հիվանդության պատճառով տրամադրվող արձակուրդին:

<sup>136</sup> «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Կ-1214-22.07.2011-ՊԱ-010/0:

## **ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ**

1. «Ազատագրկման դատապարտված և ազատագրկման վայրերում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստագործում հաշվառելու կարգը» հաստատելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի հրաման

Ընդունվել է 2008 թ. դեկտեմբերի 9-ին:

2. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք

Ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելու և անցկացնելու կարգը:

3. «Ատենախոսությունը պաշտպանած, բայց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ընդունվել է 2002 թ. դեկտեմբերի 26-ին:

4. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք

Ընդունվել է 2012թ. մարտի 21-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու հիմքերը, արտակարգ դրություն հայտարարելու կարգը, արտակարգ դրության ժամանակ իրականացվող միջոցառումները, դրանց ապահովման համար ներգրավվող ուժերը, արտակարգ դրության ժամանակ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների երաշխիքները:

5. «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» հաստատելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի հրաման

Ընդունվել է 2010 թ. փետրվարի 26-ին:



**6. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 1998 թ. սեպտեմբերի 16-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, գորակոչը, պահեստագործում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

**7. «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին: Կարգավորում է զինծառայողների և վարժական հավաքների կանչված քաղաքացիների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս գորամասի գույքին պատճառված վնասի դիմաց նյութական պատասխանատվության պայմանների, ինչպես նաև այդ վնասի հատուցման չափի ու կարգի հետ կապված հարցերը:

**8. Զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում**

Ընդունվել է 2011 թ. մայիսի 5-ին:

**9. «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 1998 թ. հոկտեմբերի 27-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետության զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական հարցերը:

**10. «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշում**

Ընդունվել է 2000 թ. նոյեմբերի 27-ին: Սահմանում է զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության իրավունքներն ու երաշխիքներն ապահովելուն ուղղված միջոցառումները:

**11. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2002 թ. հուլիսի 3-ին: Կարգավորում է խաղաղ պայմաններում ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայություն անցնելու կարգը, զինծառայողներին զինվորական պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, տեղափոխելու և գործուղելու, որակավորելու, զինվորական կոչում շնորհելու, դրանից զրկելու և վերականգնելու, արձակուրդ տրամադրելու, ծառայությունից արձակելու հետ կապված հարաբերություններ:

**12. «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»**  
ՀՀ օրենք

Ընդունվել է 1993թ. մարտի 3-ին: Կարգավորում է զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված հարաբերությունները:

**13. «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»**  
ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության որոշում

Ընդունվել է 2001 թ. դեկտեմբերի 1-ին:

**14. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրություն»**

Հաստատվել է 1996 թ. օգոստոսի 12-ին ՀՀ կառավարության որոշմամբ: Սահմանում է զինվորական կարգապահության էությունը, զինծառայողների պարտականությունները կարգապահության նորմերի պահպանման գործում, խրախուսանքների և կարգապահական տույժերի տեսակները, հրամանատարների (պետերի) իրավունքները դրանց կիրառման ուղղությամբ, ինչպես նաև առաջարկությունների, դիմումների ու բողոքների (զանգատների) ներկայացման և քննարկման կարգը:

**15. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք»** ՀՀ օրենք

Ընդունվել է 2012թ. մարտի 21-ին: Սահմանում է զինվորական կարգապահություն հասկացությունը, սկզբունքները, զինվորական կարգապահության պահպանման հետ կապված զինծառայողների պարտականությունները, զինծառայողներին տրվող խրախուսանքի և կարգապահական տույժերի տեսակները, դրանք կիրառելու կարգն ու պայմանները, հրամանատարների (պետերի) և այլ պաշտոնատար անձանց իրավունքները դրանց կիրառման գործում, ինչպես նաև կարգավորում է զինվորական կարգապահության ամրապնդման հետ կապված այլ հարաբերություններ:

**16. «Հայաստանի Հանրապետության ռազմական գլխավոր տեսչության մասին» ՀՀ Նախագահի կարգադրությունը**

Ընդունվել է 2008 թ. հուլիսի 10-ին: Կարգավորում է ռազմական գլխավոր տեսչության ստեղծման կարգը, կառուցվածքը, խնդիրները, գործառույթները, աշխատանքի կազմակերպումը, ֆինանսավորման և նյութատեխնիկական ապահովման կարգը:

**17. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»**

Հաստատվել է ՀՀ Նախագահի հրամանագրով 2007 թ. դեկտեմբերի 25-ին: Սահմանում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակարգը:

**18. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 1998 թ. դեկտեմբերի 2-ին: Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական պաշտպանության կազմակերպչական, տնտեսական և իրավական հիմքերը:

**19. «Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2000 թ. ապրիլի 3-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման շրջանակում ծագող հարաբերությունները, սահմանում այդ ոլորտի պետական քաղաքականության հիմնարար դրույթները, կառավարության լիազորած մարմնի գործունեության իրավական-կազմակերպական հիմքերն ու հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման միջոցառումների իրականացման ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովման կարգն ու պայմանները:

**20. «ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք»**

Հաստատվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ի օրենքով: Կարգավորում է կայազորային և պահակային ծառայություններ կազմակերպելու և անցկացնելու կարգը, նշանակությունը, այդ ծառայությունն իրականացնող պաշտոնատար անձանց և զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կանոնակարգում է զորքերի մասնակցությամբ կայազորային միջոցառումներ իրականացնելու կարգը:

**21. «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք»**

Հաստատվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ի օրենքով: Կարգավորում է զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարաբերությունները, գնդի և դրա ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանոնը:

**22. «Նախագորակոչային և գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում**

Ընդունվել է 2008 թ. հուլիսի 10-ին:

**23. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2008 թ. նոյեմբերի 27-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության հիմքերը, կազմակերպումը, ՀՀ զինված ուժերի կառուցվածքը, կազմակերպման և գործունեության սկզբունքները, գործառույթները, դրանց կառավարման, ղեկավարման, տեղակայման և օգտագործման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, կազմակերպությունների գործառույթները, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

**24. «Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը»**

Հաստատվել է 2007 թ. հոկտեմբերի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ: Սահմանում է պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված՝ ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի զորամասերի և զինվորական հիմնարկների հրամանատարների իրավունքներն ու պարտականությունները, զինծառայողների հաշվառման և նրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը:

**25. «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2010 թ. դեկտեմբերի 22-ին: Կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները,

կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

**26. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին: Կարգավորում է տեղեկությունը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, այն վնասազերծելու և պաշտպանելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները, սահմանում է պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, գաղտնիության աստիճանը, գաղտնիք կազմող տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքների շարքին դասելու, պահպանելու, գաղտնազերծելու, օգտագործելու իրավական հիմքերը, գաղտնիքին առնչվող հարաբերություններում պետական մարմինների լիազորությունները:

**27. «Ռազմական դրության մասին» ՀՀ օրենք:**

Ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին: Կարգավորում է ռազմական դրություն հայտարարելու հիմքերն ու նպատակները, կարգն ու ռազմական դրության իրավական ժեխմի առանձնահատկությունները, այն ապահովող մարմինների իրավասությունները, ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում պետական և տեղական ինքակառավարման մարմինների լիազորություններն ու գործունեության առանձնահատկությունները, ռազմական դրության պայմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի երաշխիքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը:

**28. «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում**

Ընդունվել է 2009 թ. նոյեմբերի 12-ին:

**29. «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2006 թ. դեկտեմբերի 21-ին: Կարգավորում է ռազմական ոստիկանության խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորություններն ու կառուցվածքը, ռազմական ոստիկանության ծառայողի իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաև ռազմական ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության վերահսկման կարգը:

**30. «Սահմանապահ գորքերի մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2001 թ. նոյեմբերի 20-ին: Սահմանում է Հայաստանի Հանրապետության սահմանապահ գորքերի հասկացությունը, գործունեության իրավական հիմքը, սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները, սահմանապահ գորքերի անձնակազմի և պետական սահմանի պահպանությանը մասնակցող քաղաքացիների ու նրանց ընտանիքների անդամների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը, սահմանապահ գորքերի ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը:

**31. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին:

**32. «Քաղաքացիական ծառայության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենք**

Ընդունվել է 2004 թ. մարտի 31-ին: Կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության ստորաբաժանումների համալրման, նախապատրաստման, մարտական կիրառման կարգը, իրավասությունը և կազմակերպական հիմքերն ու գործունեության սկզբունքները:

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Treaty on Conventional Armed Forces in Europe (Համաձայնագիր Եվրոպայում պայմանագրային զինված ուժերի վերաբերյալ)

2. Convention on the Reduction of Cases of Multiple Nationality and on Military Obligations in Cases of Multiple Nationality (Կոնվենցիա բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման և բազմաքաղաքացիության պայմաններում զինվորական ծառայությունն անցնելու մասին)

3. Additional Protocol to the Convention on the Reduction of Cases of Multiple Nationality and Military Obligations in Cases of Multiple Nationality (Լրացուցիչ արձանագրություն բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման և բազմաքաղաքացիության պայմաններում զինվորական ծառայությունն անցնելու մասին կոնվենցիայի վերաբերյալ)

4. Human rights of members of the armed forces, Recommendation 1742 (2006), Parliamentary Assembly, Զինծառայողների մարդու իրավունքները, Հանձնարարական 1742 (2006), Խորհրդարանական վեհաժողով

5. “Human rights of members of the armed forces” Report, 24 March, 2006, Parliamentary Assembly («Զինծառայողների մարդու իրավունքները», Զեկույց, 24 մարտի, 2006, Խորհրդարանական վեհաժողով)

6. Report on the right to association for members of the professional staff of the armed forces, 12 April, 1988, Parliamentary Assembly (Զինված ուժերի մասնագիտացված անձնակազմի միավորման իրավունքի վերաբերյալ զեկույց, 12 ապրիլի, 1988, Խորհրդարանական վեհաժողով)

7. Reply from the Committee of Ministers to Recommendation 1742 (2006) on Human rights of members of the armed forces, 28 March 2007, Committee of Ministers (Նախարարների կոմիտեի պատասխանը Խորհրդարանական վեհաժողովի 1742 (2006) հանձնարարականին, 28 մարտի, 2007)

8. Recommendation 1518 (2001) Exercise of the right of conscientious objection to military service in Council of Europe member states, Parliamentary Assembly (Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի իրականացում, Հանձնարարական 1518 (2001))

9. Code of Conduct on Politico-Military Aspects of Security. 3 December 1994. OSCE.

10. Resolution 337 (1967) on the right of conscientious objection, Parliamentary Assembly, (Համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի վերաբերյալ բանաձև 337 (1967), Խորհրդարանական վեհաժողով)

11. Recommendation 816 (1977) on the right of conscientious objection to military service, Committee of Ministers (Համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի վերաբերյալ հանձնարարական 816 (1977), Նախարարների կոմիտե)

12. Recommendation No. R (87) 8 regarding conscientious objection to compulsory military service, Committee of Ministers (Պարտադիր զինվորական ծառայությունից համոզմունքների հիման վրա հրաժարվելու իրավունքի վերաբերյալ հանձնարարական R (87) 8, Նախարարների կոմիտե)

13. Democratic Control of the Armed Forces and OSCE Code of Conduct (4 November, 2002)

14. Vienna Document 1999 of the Negotiations on Confidence and Security Building Measures, OSCE, 16 November 1999.

15. Vienna Document 2011 on Confidence and Security Building Measures, OSCE, 30 November 2011.



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ԶԻՆՎԱԾ ՌԻՇԵՐԻՆ  
ԱՌՆՉՎՈՂ ՎՃԻՌՆԵՐԸ**

Վավերացնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն հետևելու և կիրառելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված է, որ «որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ...Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»<sup>137</sup>:

Այս առումով առանձնացվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ, որոնք վերաբերում են զինված ուժերին և զինծառայողների իրավունքներին և կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում զինծառայողների իրավունքների պաշտպանության համար: Դրանք են.

1. Case of Abdullah Yilmaz v. Turkey, app. no 21899/02, judgment 17 June 2008
2. Case of Beker v. Turkey, app. no. 27866/03, judgment 24 March 2009
3. Case of Angel and others v. Netherlands, app. nos. 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, judgment 8 June 1976
4. Case of Attaman v. Turkey, app. no. 46252/99, judgment 27 avril 2006
5. Case of Nachova and others v. Bulgaria, app. nos. 43577/98 and 43579/98, judgment 6 July 2005
6. Case of Bayatyan v. Armenia, app. no. 23459/03, judgment 7 July 2011
7. Case of Thlimmenos v. Greece, app. no. 34369/97, judgment 6 April 2000
8. Case of Soltysyak v. Russia, app. no. 4663/05, judgment 10 February 2011
9. Case of Grigoriades v. Greece, app. no 121/1996/740/939, judgment 25 November 1997
10. Case of Al-Jedda v. The United Kingdom, app. no. 27021/08, judgment 7 July 2011
11. Case of Ahmet Ozkan and others v. Turkey, app. no. 21689/93, judgment 6 April 2004
12. Case of Aydin v. Turkey, app. 57/1996/676/866, judgment 25 September 1997
13. Case of Makharbiyeva and others v. Russia, app. no. 26595/08, judgment 21 June 2011
14. Case of Al-Sleini and others v. The United Kingdom, app. No. 55721/07, judgment 7 July 2011
15. Case of Kilic v. Turkey, app. no. 22492/93, judgment 28 March 2000

<sup>137</sup> ՀՀ դատական օրենսգիրք, 15-րդ հոդված, 4-րդ մաս:

16. Case of Aytekin v. Turkey, app. 102/1997/886/1098, judgment 23 September 1998
17. Case of Kakoulli v. Turkey, app. no 38595/97, judgment 22 November 2005
18. Case of Serdar Yigit and others v. Turkey, app. no. 20245/05, judgment 9 November 2010
19. Case of Nikolenko v. Russia, app. no. 38103/04, judgment 26 March 2009
20. Case of Stere and others v. Romania, app. no. 25632/02, judgment 23 February 2006
21. Case of Levishchev v. Russia, app. no. 34672/03, judgment 29 January 2009
22. Case of Nejdhet Sahin and Perihan Sahin v. Turkey, app. no. 13279/05, judgment 27 May 2010
23. Case of Stingaciu and Tudor v. Romania, app. no. 21351/03, judgment 3 October 2006
24. Case of Said v. Netherlands, app. no. 2345/02, judgment 5 July 2005
25. Case of Ulke v. Turkey, app. no. 39437/98, judgment 24 January 2006

Վերը բերված ցանկից ընտրվել են ստորև ներկայացված իրավունքների առնչությամբ առավել ներկայացուցչական վճիռները.

1. Զինձառայողների կյանքի իրավունքը,
2. Զինձառայողների խոշտանգումների և դաժան, անմարդկային վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը,
3. Զինձառայողների ազատության իրավունքը,
4. Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելը,
5. Զինձառայողների իրավունքների սահմանափակումները:

### **Արդուլահ Յիզմահն ընդդեմ Թուրքիայի<sup>138</sup>**

Սույն գործի շրջանակներում քննարկվել է քսանամյա ժամկետային զինձառայողի ինքնասպանության առթիվ պետության պատասխանատվության հարցը:

Զինձառայողի դասակը գտնվել է միջնակարգ կրթությամբ, կրտսեր սպայական կոչում ունեցող և կարգապահական զանցանքների համար երեքանգամյա կալանք կրած 29-ամյա սպայի հրամանատարության ներքո: Դեպքի օրը հրամանատարը հրամայել է զինվորին թեյ պատրաստել, ով դանդաղել է հրամանի կատարման մեջ: Հրամանատարը նրան պատժել է: Նույն հրամանը կրկնվել է կեսօրին, այս անգամ զինվորը պատժվել է թեյը չափազանց թունդ պատրաստելու համար: Հրամանատարը այլ զինվորների և սերժանտի ներկայությամբ հայիոյելով ոտքերով և ձեռքերով հարվածել է զինվորին, ով կորցրել է գիտակցությունը: Հրամանատարը նրան ուշքի է բերել՝ վրան սառը ջուր լցնելով: Այնուհետև կանչել է իր մոտ, տվել է նրան մի քանի խորհուրդներ և դարձյալ սկսել վիրավորել զինվորին: Այդ միջադեպից 10 րոպե անց զինվորը, պահելով հրացանի

<sup>138</sup> Abdullah Yilmaz v. Turkey, no. 21899/02, 17 June 2008.

փողը իր ստամոքսի շրջանում, հուզված քայլել է: Կանգնելով հրամանատարի դիմաց՝ նա սպառնացել է սպանել իրեն: Վախենալով, որ զինվորը կհարձակվի իր վրա, հրամանատարը իր զենքն ուղղել է վերջինիս կողմը: Ջինվորը այդ պահին ինքնասպան է եղել:

Դիակի գննությամբ պարզվել է, որ մահը վրա է հասել մոտ տարածությունից տեղի ունեցած մեկ կրակոցի հետևանքով, և որ դասական դատաբժշկական փորձաքննության անհրաժեշտություն չկա: Ջորամասի զինվորական հետաքննչական հանձնաժողովի կողմից իրականացված կարգապահական քննությունը պարզել է, որ զինվորը խնդիրներ ունեցել՝ պայմանավորված իր քրոջ ամուսնական վիճակով, ինչի մասին նույն օրն առավոտյան հայտնած է եղել հրամանատարին և այլ լեյտենանտի: Ջեկույցում նշվում է, որ նա ինքնասպան է եղել, ինչը, սակայն, հրահրվել է հրամանատարի կողմից:

Հրամանատարի դեմ երկու փաստերի առթիվ քրեական հետապնդում է հարուցվել: Առաջին դեպքում նա պատասխանատվության է ենթարկվել մարմնական վնասվածքներ պատճառելու համար և դատապարտվել ազատազրկման հինգ ամիս ժամկետով, որը դադարեցվել է լավ պահվածքի համար:

Ջինվորի մահվան հետ կապված քննությունը կարճվել է, քանի որ զինվորական դատախազությունը գտել է, որ չկա պատճառահետևանքային կապ հրամանատարի գործողությունների և զինվորի ինքնասպանության միջև: Ջինվորի հարազատները բողոքարկել են քրեական գործով վարույթը կարճելու որոշումը՝ հիմնվելով քննության թերությունների վրա, առ այն, որ չի հետազոտվել՝ արդյոք զինվորի մահը պատճառած զենքը նույնական է ներկայացված զենքի հետ, չեն ստուգվել դրա վրա առկա մատնահետքերը: Սակայն բողոքները արդյունք չեն տվել:

Դատարանի իրավական գնահատականը հանգել է հետևյալին. հաշվի առնելով գործով ներկայացված բոլոր ապացույցները՝ հնարավոր չէ վիճարկել զինվորի ինքնասպան լինելու հարցը: Խնդիրն այն է, թե արդյոք զինվորական իշխանությունները գիտեին կամ կարող էին իմանալ, որ զինվորը ինքնասպան կլինի, և արդյոք ձեռնարկվել են բոլոր միջոցառումները՝ պաշտպանելու նրա կյանքը:

Հաստատվել է, որ մինչև նշված օրվա իրադարձությունները զինվորի վարքագծում որևէ արտառոց շեղում չի նկատվել: Դատարանը հիմնվել է հրամանատարի ցուցմունքի վրա, ով հայտնել է, որ խնդրել է զինվորին թեյ պատրաստել՝ ազատելու նրան ծանր պարտականությունների կատարումից՝ հաշվի առնելով նրա հոգեբանական վիճակը: Այսինքն՝ հրամանատարը արդեն իսկ տեղյակ է եղել զինվորի հոգեկան լարված վիճակի մասին: Դատարանը հաստատել է, որ օրվա երկրորդ կեսին հրամանատարի գործողությունները երիտասարդի նկատմամբ՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ բանավոր, դարձել են ավելի կոպիտ:

Դատարանը գտել է, որ չնայած հնարավոր չէր գնահատել տեղի ունեցած իրադարձությունների բնույթը և ազդեցության աստիճանը զինվորի հոգեկան վիճակի

վրա, անվիճելի է, որ նման գործողությունների անխուսափելիությունը եղել է հրամանատարի անպատասխանատու գործողությունների հետևանք: Այս կապակցությամբ դատարանը կասկածի տակ չի դնում գորամասի զինվորական հետաքննչական հանձնաժողովի քննությունը առ այն, որ չնայած դիտավորության բացակայությանը՝ ինքնասպանությունը հրահրված է եղել հրամանատարի կողմից, և որ նա գործել է իրավիճակի իմացությամբ: Դատարանը եզրահանգել է, որ քննարկված փաստերը ցուցադրում են հրամանատարի անկարողությունը՝ կատարելու զինծառայողի իր պարտականությունները, այն է՝ պաշտպանել իր հրամատարության տակ գտնվող զինվորների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը:

Հետևապես, դատարանը գտել է, որ պետությունը չի ապահովել համապատասխան կարգավորում՝ պայմանավորված հրամանատարի մասնագիտական կարողություններով, որը կսահմաներ նրա պարտականությունները և պատասխանատվությունը այնպիսի նուրբ իրավիճակներում, ինչպիսին այս դեպքն է: Հետևաբար, պետությունը չի կատարել իր պարտականությունը՝ ապահովելու իր իրավասության տակ գտնվող անձի կյանքի պաշտպանությունը իր վերադասների ոչ պատշաճ վարքագծից:

Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

### **Բեկերն ընդդեմ Թուրքիայի<sup>139</sup>**

Մուստաֆա Բեքերը, հայտնաբերվելով գորամասում ձախ քունքային շրջանում հրազենային վնասվածքով, հիվանդանոցի ճանապարհին մահացել է:

Նույն օրը կատարված դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է, որ մահը վրա է հասել դիմահար կրակոցի արդյունքում ուղեղի կենսական ֆունկցիաների սուր խանգարման հետևանքով: Դիակից որոշ հեռավորության վրա հայտնաբերված հրազենի փորձաքննությամբ պարզվել է, որ կատարվել է երկու կրակոց, և երրորդ կրակոցի փորձն է կատարվել: Պարզվել է, որ Մուստաֆան հրազենը գողացել է ծառայակցի պահարանից՝ փայտով կոտրելով դրա կողպեքը: Կրակոցի ժամանակ սենյակում գտնվող չորս ծառայակիցները հարցաքննվել են, նրանք բոլորը հայտնել են, որ չեն տեսել կրակոցի պահը: Ներկաներից մեկը, ով գտնվել է Մուստաֆայից հինգ մետր հեռավորության վրա, հայտնել է, որ չի տեսել կրակոցը, քանի որ շոկի մեջ փակել է դեմքը ձեռքերով: Քրեական գործով քննությունը դադարեցվել է այն հիմքով, որ Մուստաֆան ինքնասպան է եղել՝ կրակելով աջ քունքին, քանի որ իր մայրը դեմ է եղել իր ամուսնությանը: Վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է հրապարակել

<sup>139</sup> Beker v. Turkey, no. 27866/03, 24 March 2009.

քննության հետ կապված որևէ փաստաթուղթ: Դիմումատուի՝ գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ դիմումը անհետևանք է մնացել:

Դատարանը սույն գործով փաստել է, որ Մուստաֆա Բեքերը մահացել է զորամասում, և բոլոր ականատեսները եղել են զինծառայողներ: Գործով քննությունն իրականացվել է զինվորական իշխանությունների կողմից, և նրա ընտանիքի անդամները չեն մասնակցել քննությանը: Հետևաբար, միայն զինվորական իշխանություններն են օժտված եղել մահվան պատճառները վեր հանելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ: Պետության անմիջական վերահսկողության տակ գտնվող տարածքում մահվան կապակցությամբ պետությունը պետք է ողջամիտ բացատրություն տա պատահարի վերաբերյալ: Դատարանը գտել է, որ առկա են լուրջ բացթողումներ Մուստաֆայի մահվան քննության առնչությամբ, որի պայմաններում վստահելի բացատրություն տրված չէ: Դա բացատրվել է հետևյալով, նախ, համաձայն քննության՝ Մուստաֆան մահացել է կատարված երկրորդ կրակոցից, ինչպե՞ս է նախապատրաստվել երրորդ կրակոցը: Երկրորդ, Մուստաֆան, լինելով աջիկ, չէր կարող կրակել ձախ կողմից, և ինչպե՞ս են իշխանությունները եզրակացրել, որ կրակոցը եղել է աջ կողմից, եթե դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է, որ հրազենի մուտքի անցքը եղել է ձախ քունքային շրջանում: Երրորդ, տեղի չի ունեցել հրազենի և դրա կրակող մասի փորձաքննություն՝ ստուգելու մատնահետքերի առկայությունը: Չորրորդ, դատարանը չի ընդունում, որ չորս պատրաստված զինծառայողները, գտնվելով սենյակում, որտեղ երկու կրակոց է արձակվել, չտեսնեն այն կամ շոկից փակեն իրենց դեմքերը: Ավելին, դատարանը նկատել է, որ գործը քննող մարմինների կողմից որևէ փորձ չի կատարվել՝ պարզելու ճշմարտությունը:

Հետևաբար, իշխանությունների կողմից կատարված քննությունն անարդյունավետ էր և թողնում էր բազում անպատասխան հարցեր, և դատարանը անընդունելի է համարել Մուստաֆայի կողմից կատարված ինքնասպանությունը: Իրապես, նման անփութությունը, գործի քննությունը վերսկսելու անպատրաստակամությունը կարող են վկայել ավելի ծանր հանցագործության պարտական մասին:

Դատարանը գտել է, որ Կառավարությունը ողջամիտ բացատրություն չի տվել Մուստաֆա Բեքերի մահվան կապակցությամբ, և հետևաբար, պետությունը պատասխանատու է միջադեպի համար՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով:

## Կիլինսը և այլոք ընդդեմ Թուրքիայի<sup>140</sup>

Սույն գործի շրջանակներում քննարկվել են տուժողի կյանքի իրավունքը պաշտպանելու առնչությամբ պետության պարտավորությունները: Մինչև զինվորական ծառայության հաշվառվելը Պրն Կիլինսը տառապել է աստիպիկ դեպրեսիայով և հիվանդության բացահայտման օրվանից գտնվել է բժշկական հսկողության ներքո: 1994 թվականին զինվորական բյուրոյի կողմից անցած բուժզննությունից հետո որոշում է կայացվում զինծառայության անցնելու մասին: Ծառայության ընթացքում Պրն Կիլինսը կարճաժամկետ հոգեբուժական խնամք է ստացել, ինչից հետո, կայագործի հրամանատարի պահանջով, հատուկ զննության է ենթարկվել, որի ժամանակ դիտարկվել է վերջինիս հոգեկան խանգարումն ու նյարդային ճգնաժամը: 1995 թվականի փետրվարի 22-ին Պրն Կիլինսը տեղափոխվում է Իսպարտայի զինվորական հիվանդանոց, որտեղ էլ նրա մոտ ախտորոշվում է նյարդային խանգարում: Մինչ կայագործ վերադառնալու հրաման արձակելը հրամանատարությունը որոշում է կայացնում Պրն Կիլինսին դեղամիջոցներով բուժում և եռօրյա հանգիստ տրամադրելու մասին:

Ավելի ուշ՝ մայիսի 15-ին, Պրն Կիլինսը ընդգրկվում է կայագործի բանտի պահակախմբի աշխատանքների մեջ: Իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար վերջինիս տրամադրում են Կալաշնիկով հրացան/հրաձիգ: Նույն օրը Պրն Կիլինսը տրամադրված հրաձիգով ինքնասպանություն է գործում:

Դեպքի առիթով զինվորական դատարանը հրամանատարին պատասխանատվության է ենթարկում անփութությամբ հանցանք գործելու համար:

Դիմողները՝ մահացածի ընտանիքի անդամները, պնդում են, որ զինվորական ծառայության ընթացքում Պրն Կիլինսի ինքնասպանությունը հանգեցրել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պաշտպանվող կյանքի խախտմանը:

Սույն գործով Դատարանը հաստատել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը դրական պարտականություն է նախատեսում պետությունների համար՝ ձեռնարկելու կանխարգելիչ բոլոր անհրաժեշտ միջոցները անձանց իրենք իրենցից կամ երրորդ անձանցից պաշտպանելու համար:

Դատարանի կարծիքով հրամանատարության անփութությունը ավելին է եղել, քան սովորական անզգուշությունը կամ առողջապահության մասնագետների վատ համակարգման հետևանքները: Ներկայացված անփութությունը հանգեցրել է Պրն Կիլինսի մահվանը, ինչը հաստատում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման փաստը:

<sup>140</sup> Kılınç and Özsoy v. Turkey, no. 40145/98 (Sect. 2) (fr) – (7.6.05).

## Նաչովան ընդդեմ Բուլղարիայի<sup>141</sup>

Սույն գործը վերաբերում է ռազմական ոստիկանության ներկայացուցիչների կողմից երկու զինծառայողների սպանությանը:

Զինվորները եղել են ժամկետային զինծառայողներ: Նախկինում երկուսն էլ դատապարտված են եղել գողության համար: 1996 թ. իրականացրել են փախուստ, թաքնվել են իրենցից մեկի տատիկի տանը և զինված չեն եղել: Երիտասարդներին ձերբակալելու համար ռազմական ոստիկանության կողմից ուղարկվել են չորս ոստիկաններ, որոնցից յուրաքանչյուրն իմացել է նրանցից առնվազն մեկին: Ոստիկաններին հրամայվել է «կանոնների համաձայն» պահել իրենց հրազենները և հագնել զրահաբաճկոն, քանի որ երիտասարդները «հանցավոր տարրեր» են՝ նկատի ունենալով այն անձանց, ովքեր ունեն դատվածություն կամ կասկածվում են հանցագործության կատարման մեջ, և որ նրանք փախել են կալանքից: Ոստիկաններին հրամայվել է ամեն գնով ձերբակալել նրանց:

Երբ ոստիկանները հասել են զինծառայողների թաքստոց հանդիսացող տուն, վերջիններս փորձել են դիմել փախուստի, սակայն ոստիկան Գ-ն՝ զգուշացնելով, որ չհանձնվելու դեպքում կկրակի, կրակ է բացել նրանց վրա: Զինծառայողներին տեղափոխել են հիվանդանոց, որտեղ նրանք մահացել են: Քրեական գործի քննությամբ պարզվել է, որ երիտասարդները մահացել են տարածությունից կատարված հրազենային վնասվածքներից: Երիտասարդներից մեկը մահացել է կրծքին, մյուսը՝ մեջքին ստացած վնասվածքներից: Քննությամբ հաստատվել է, որ ոստիկան Գ-ն առաջնորդվել է ռազմական ոստիկանության 45-րդ կանոնով: Նա մի քանի անգամ զգուշացրել է, հետո կրակել օդ: Ոստիկանը կրակել է զինծառայողների վրա, քանի որ նրանք չեն հանձնվել, և վտանգ է եղել, որ նրանց կհաջողվի փախչել, և նա փորձել է զերծ մնալ մահացու վնասվածքներ պատճառելուց: Այլևս ոչ ոք չի տուժել: Այս հիմքով իշխանությունները ռազմական ոստիկաններին չեն հետապնդել:

Սույն գործով դատարանը փաստել է, որ իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունը՝ նվազագույնի հասցնելու անձի կյանքին սպառնացող վտանգը, քանի որ ոստիկաններին հրահանգված է եղել ամեն գնով ձերբակալել երիտասարդներին՝ չնայած այն հանգամանքին, որ վերջիններս զինված չեն եղել և վտանգ այլ անձանց կյանքին կամ առողջությանը չեն ներկայացրել: Քննության ընթացքում որևէ հիմնավորում չի ստացվել, թե երիտասարդներից մեկը ինչու է վնասվել կրծքից, քանի որ վերջին րոպեին հնարավոր է՝ նա հանձնվելու համար թեքվել է:

<sup>141</sup> Nachova and Others v. Bulgaria [GC], nos. 43577/98 and 43579/98, ECHR 2005-VII.

Հետևաբար, դատարանը գտել է, որ պետությունը չի կատարել իր պարտականությունը՝ պաշտպանելու անձանց կյանքը, և կիրառված մահացու ուժը չի համապատասխանել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

### **Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի<sup>142</sup>**

2000 թ. դեկտեմբերին դիմողը հետագուովել է երկու բժշկական հանձնաժողովների կողմից և ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար: Ծառայության երկրորդ ամսից՝ 2001 թ. փետրվարից, տառապել է ծնկի ցավերից: Ծնկի վիճակի կապակցությամբ նրա անմիջական պետը նրան ազատել է ֆիզիկական վարժանքներից և շարային վարժություններից: Պարզվել է նաև, որ ծնկի վիճակից ելնելով՝ դիմողը մի քանի անգամ բուժում է ստացել զորամասի բուժկետում:

2001 թ. մարտին կրտսեր սերժանտ Չ-ն դիմողի անմիջական պետի ներկայությամբ հրամայել է դիմողին և այլ զինվորներին կատարել ծնկի 350 վարժություն՝ որպես պատիժ բարաքները չմաքրելու համար: Դիմողն ուժասպառ է եղել վարժության ընթացքում և տարվել հոսպիտալ՝ շտապ օգնություն ստանալու նպատակով: Զինծառայողը տեղափոխվել է քաղաքացիական հիվանդանոց, որտեղ ստացել է բուժում, ինչից հետո ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, զորացրվել՝ ճանաչվելով երկրորդ կարգի հաշմանդամ:

Սույն գործով դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խստիվ պահպանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմաններում վատ վերաբերմունքը պետք է ունենա լրջության նվազագույն մակարդակ: Այդ նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, որոշ դեպքերում՝ զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Կիրառված խոշտանգումն ու անմարդկային վերաբերմունքը ցանկացած դեպքում պետք է դուրս գան օրինական վերաբերմունքի կամ պատժի հետ կապված տառապանքի և նվաստացման անխուսափելի տարրերի սահմաններից: Պարտադիր զինվորական ծառայությունը հաճախ ներառում է այնպիսի տարր, ինչպիսին է անձին ազատությունից զրկելու միջոցը: Այդուհանդերձ, շատ գործողություններ, որոնք կարող են առաջացնել բանտարկյալների նկատմամբ նվաստացնող կամ անմարդկային

<sup>142</sup> Chamber v. Russia, no. 7188/03, ECHR 2008.



վերաբերմունք, չեն կարող անցնել վատ վերաբերմունքի սահմանը, երբ դրանք իրականացվում են զինված ուժերում, պայմանով, որ դրանք կատարեն հատուկ առաքելություն զինված ուժերում, երբ, օրինակ, դրանք հանդիսանում են կռվի դաշտի համար սահմանված վարժանքների մի մասը:

Այդուհանդերձ, պետությունը պարտավոր է ապահովել, որ անձը զինվորական ծառայություն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պահպանված են՝ տրամադրելով նրան համապատասխան բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլև մարդկային տարրի պատճառով, երբ պետությունը քաղաքացիներին գորակոչում է զինվորական ծառայության:

Համաձայն դատարանի մոտեցման՝ վերաբերմունքը համարվում է «անմարդկային», եթե այն կանխամտածված է, կատարվում է ժամկետով և պատճառում է կա՛մ փաստացի մարմնական վնասվածքներ, կա՛մ ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Այն հարցը, թե արդյոք վերաբերմունքի նպատակը եղել է անձին տառապանք պատճառելը, հաշվի է առնվում հետագայում, սակայն նման որևէ նպատակի բացակայությունն արդյունքում չի կարող բացառել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը:

Այսպես, հիշյալ սկզբունքները կոնկրետացնելով գործի փաստերին՝ դատարանը գտնում է, որ դիմողին հրամայված է եղել կատարել հատուկ հանձնարարություն՝ կքանիստ վարժություններ՝ որպես պատիժ բարաքները ոչ պատշաճ մաքրելու համար: Այդ հրամանը տրվել է նրա ժամանավոր հրամանատարի կողմից, սակայն դրան լռելյայն համաձայնել է վերադաս հրամանատարը, ով ներկա է եղել և չի առարկել հրամանին: Հետևաբար, այդ վերաբերմունքը դիմողի նկատմամբ իրականացվել է դիտավորությամբ: Դիմողն ուժասպառ է եղել և չի կարողացել կառավարել ոտքերը: Չնայած որ նա և՛ զինվորական, և՛ քաղաքացիական հիվանդանոցում ստացել է բժշկական օգնություն, հասցված վնասվածքը հանգեցրել է առողջության երկարատև քայքայման: Դիմողն ազատվել է զինվորական ծառայությունից և դարձել է երկրորդ կարգի հաշմանդան:

Դատարանը գտել է, որ տվյալ գործով դիմողը ենթարկվել է ֆիզիկական վարժությունների հարկադիր կատարման, որոնք նրան հասցրել են ֆիզիկական ուժասպառության: Այս պատիժն իրականացվել է դիտավորությամբ՝ դիմողի հրամանատարների կողմից, որոնք հստակ իմացել են նրա առողջական խնդիրների մասին, ինչպես նաև այն իրականացվել է առանց որևէ ծառայողական

անհրաժեշտության, որը կարդարացներ այդ գործողությունները: Հետևաբար, նման հանգամանքներում այդ պատիժը դիմողին պատճառել է ֆիզիկական մեծ տառապանք և անցել լրջության նվազագույն աստիճանի սահմանները:

Հետևաբար, դիմողը ենթարկվել է անմարդկային պատժի՝ հանգեցնելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

### **Կայանկինն ընդեմ Ռուսաստանի<sup>143</sup>**

Սույն գործի շրջանակներում դիմողը առաջին անգամ զինվորական կոմիսիայի կողմից բուժզննության է ենթարկվել 1977 թվականի փետրվարի 12-ին, ինչի արդյունքում զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել: Երկրորդ անգամ բժշկական զննություն կատարվել է 1988 թվականի հոկտեմբերին, իսկ մեկ տարի անց կատարված զննության արդյունքում դիմողը ծառայության համար պիտանի է ճանաչվել: Բժշկական զննության արդյունքների հետ համաձայն լինելով՝ դիմողը սկսում է ծառայությունը 1999 թվականի հունիսի 3-ին: Հինգ ամիս անց վերջինս կրկին բժշկական զննություն է անցնում՝ բողոքելով բանակում վատ վերաբերմունքի արդյունքում ծագած առողջական խնդիրներից: Հերթական բժշկական զննությունը դիմողի մոտ հայտնաբերել է ուղեղի սուր վնասվածքներ:

Նույն տարվա դեկտեմբեր ամսին դիմողը ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել, և լրացուցիչ զննության արդյունքում պարզ է դարձել, որ ուղեղի վնասվածքները ի հայտ են եկել զինվորական հաշվառումից առաջ, իսկ ֆիզիկական կոնկրետ ախտանշաններ չեն հայտնաբերվել:

Դիմողը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում բարձրացրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պաշտպանվող իր իրավունքի խախտման հարցը՝ այն հիմնավորելով իր զինվորական հաշվառման, բանակում վատ վերաբերմունքի արժանանալու և բանակային իշխանությունների կողմից համապատասխան քննություն չիրականացնելու հանգամանքներով:

Սույն գործի շրջանակներում Դատարանը ապացուցված է համարել այն հանգամանքը, ըստ որի՝ իշխանությունները լուրջ հիմքեր չեն ունեցել հավատալու, որ զինվորական ծառայության անցնելով՝ դիմողը կենթարկվի Կոնվենցիայի երրորդ հոդվածով նախատեսված վերաբերմունքին: Այս ամենը բացատրվել է հետևյալով. բժշկական զննության ժամանակ դիմողը իր առողջական վիճակի վերաբերյալ զանգատներ չի ունեցել, բացի այդ, սովորական բժշկական զննությունը դիմողի հիվանդությունը չի արձանագրել:

<sup>143</sup> Kayankin v. Russia, no. 24427/02, 11 February 2010.

Հետևաբար, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում չի կատարվել: Դատարանը իր որոշումը հիմնավորել է հետևյալով՝

- դիմողի ներկայացրած ապացույցները հակասական են եղել,
- բավարար ապացույցներ չեն ներկայացվել, որոնք կհավաստեին բանակում դիմողի նկատմամբ առկա վատ վերաբերմունքը,
- ներկայացված հանգամանքների վերաբերյալ իրականացված ներքին հետաքննությունը արդյունավետ է ճանաչվել:

Չնայած այն հանգամանքին, որ սույն գործով Դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, այնուհանդերձ առանձին մեկնաբանությամբ նշվել է, որ դիմողը զինծառայության հաշվառվելիս հիվանդ է եղել, և բանակում նրա կրած հնարավոր տանջանքները, ենթադրվում է, որ կարող էին հասցնել հոդված 3-ով արգելված վերաբերմունքի աստիճանին:

### **Բայաթյանն ընդդեմ Հայաստանի<sup>144</sup>**

Սույն գործի շրջանակներում քննվել է Եհովայի վկա հանդիսացող անձի կրոնի ազատության իրավունքի խախտման փաստը:

Քաղաքացի Բայաթյանը հրաժարվել էր անցնել պարտադիր զինվորական ծառայություն, սակայն համաձայնել էր անցնել այլընտրանքային ծառայություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում տվյալ ժամանակաշրջանում այլընտրանքային ծառայության մասին օրենք ընդունված չէր՝ անձը ենթարկվել էր քրեական պատասխանատվության՝ դատապարտվելով ազատազրկման: Միննույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, 2001 թ. դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ, պարտավորվել էր երեք տարվա ընթացքում ընդունել նման օրենք, իսկ այդ ժամանակաշրջանում ներում շնորհել բոլոր հրաժարվողներին՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով:

Պալատի վճռով սույն գործով Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չէր ճանաչվել՝ հաշվի առնելով հանձնաժողովի և դատարանի նախադեպային իրավունքը՝ սույն հարցը դիտելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը 4-րդ հոդվածի (ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում) հետ համակցությամբ, որը համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը թողնում է պետությունների հայեցողությանը: Դատարանը, ի դեմ Պալատի, հանգել էր եզրակացության, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը չի երաշխավորում զինվորական ծառայությունից

<sup>144</sup> Bayatyan v. Armenia [GC], no. 23459/03, ECHR 2011.

հրաժարվելու իրավունքը՝ կրոնական համոզմունքների հիման վրա, հետևաբար, Բայաթյանի կրոնի ազատության իրավունքի խախտում առկա չէ:

Սակայն դատարանի Մեծ պալատը փաստեց, որ Կոնվենցիան պետք է դիտել որպես կենդանի օրգանիզմ և այն մեկնաբանել իրավունքի առկա զարգացումների լույսի ներքո: Դատարանը գտել է, որ Բայաթյանին քրեական պատասխանատվության ենթարկելու շրջանում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը (բացառությամբ միայն 4-ի) իրենց ներպետական իրավունքում և պրակտիկայում ճանաչել էին համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, հետևաբար, այն ճանաչել էր նաև ՀՀ-ն: 2002-2003 թթ. այդ հարցի առնչությամբ, պետությունների ներպետական իրավական կարգավորումներով և միջազգային համաձայնագրերով պայմանավորված, գոյություն ուներ հաստատված կոնսենսուս Եվրոպայի և հարևան պետությունների միջև: Հետևաբար, Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սույն հարցի առնչությամբ այլևս չպետք է դիտարկվի 4-րդ հոդվածի լույսի ներքո:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը որպես այդպիսին չի ճանաչում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Սակայն Մեծ պալատը փաստել է, որ զինվորական ծառայության մերժման պայմաններում, պայմանավորված անձի զինվորական ծառայություն անցնելու պարտականության և բավարար հաստատվածություն, լրջություն և կարևորություն ունեցող կրոնական կամ այլ համոզմունքի միջև լուրջ և անհաղթահարելի կոնֆլիկտով, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի երաշխիքները գործում են:

Մեծ պալատի գնահատմամբ՝ Բայաթյանի կողմից զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելը հանդիսացել է նրա կրոնական համոզմունքների արտահայտման միջոց: Դատարանը քննարկել է այն հարցը, թե արդյոք դիմումատուի դատապարտումը եղել է օրինական: Այն նախատեսված է եղել օրենքով, սակայն դատարանը չի քննարկել դրա հետապնդող նպատակի իրավաչափության հարցը, այն է՝ հասարակական կարգը և այլոց իրավունքների պաշտպանությունը: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության հարցին պատասխանելիս դատարանը փաստել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը ճանաչում է համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Դիմումատուն, լինելով Եհովայի վկա, հրաժարվել է զինվորական ծառայություն անցնելուց ոչ թե մասնավոր շահ հետապնդելով, այլ հիմնված իր կրոնական համոզմունքների վրա: Դատարանը փաստում է, որ պարտադիր զինվորական ծառայությունը քաղաքացու վրա դնում է ծանր պարտականություն: Հետևաբար, պետությունը պարտավոր է ապահովել դրան այլընտրանք: Մինչդեռ Բայաթյանի դատապարտումը եղել է այն շրջանում, երբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն՝

ընդունելու այլընտրանքային ծառայության մասին օրենք և այդ ընթացքում ներում չնորհել զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով: Այսինքն՝ պետությունը, չկատարելով իր միջազգային պարտավորությունը, քրեական պատախաճանատվության է ենթարկել քաղաքացուն: Հետևաբար, դիմումատուի դատապարտումը չի հետապնդել սոցիալական հրատապ անհրաժեշտություն՝ խախտելով նրա՝ կրոնի ազատության իրավունքը:

### **Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի<sup>145</sup>**

Սույն գործը վերաբերում էր Եհովայի վկայի, ում հնարավորություն չի տրվել նշանակվել արտոնագրված հաշվապահի պաշտոնում՝ հաշվի առնելով նրա նախկին դատվածությունը՝ պայմանավորված նրա կողմից իր կրոնական և այլ համոզմունքներից ելնելով զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելով: Դիմումատուն պնդում էր, որ իրեն մերժելը պայմանավորված է եղել խտրականությամբ՝ իր կրոնական պատկանելության առնչությամբ:

Դատարանը հայտնել է, որ անձի՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքների առանց խտրականության իրականացումը երաշխավորող Կոնվենցիայի 14-րդ հոդվածը խախտված կլինի, եթե միևնույն իրավիճակներում անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում՝ առանց օբյեկտիվ և ողջամիտ բացատրության: Միևնույն ժամանակ Դատարանը հաստատել է, որ խտրականության չենթարկվելու իրավունքը խախտված կլինի նաև այն դեպքում, երբ ողջամիտ և օբյեկտիվ բացատրություն չի տրվում, երբ նույն մոտեցումն է դրսևորվում տարբեր հանգամանքներում գտնվող անձանց նկատմամբ:

Դատարանը սույն գործով ճանաչել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 9-րդ հոդվածի համակցությամբ: Դատարանը փաստել է, որ իշխանությունները դիմումատուի հետ չեն վարվել այլ կերպ՝ ի համեմատություն ծանր հանցագործությունների համար դատված այլ անձանց: Պետությունը դիմումատուի նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորել՝ չնախատեսելով համապատասխան բացատրություններ ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց՝ արտոնագրված հաշվապահների նշանակման արգելման կանոնից: Դիմումատուի հանցագործությունը տարբերվել է մյուսներից, քանի որ հանդիսացել է նրա կրոնական համոզմունքների ցուցադրման միջոց և ի տարբերություն այլ ծանր հանցագործությունների՝ չէր կարող

<sup>145</sup> Thlimmenos v. Greece [GC], no. 34369/97, ECHR 2000-IV.

ենթադրել նրա կողմից որևէ անազնվություն կամ բարոյալքություն՝ թուլացնելու իր աշխատանքային պարտականությունների կատարման հնարավորությունը:

### **Էնգելն ու այլք ընդդեմ Նիդեռլանդների<sup>146</sup>**

Սույն գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել էր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում կարգապահական պատախանատվության և հատկապես ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման համապատասխանությունը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին:

**Դատարանի իրավական գնահատականը.** Դատարանը փաստել է, որ պետությունների զինված ուժերում կարգապահության պահպանման համակարգը օբյեկտիվորեն ենթադրում է զինծառայողների որոշ իրավունքների սահմանափակումներ: Նման համակարգի գոյությունը չի հակասում պետությունների պարտականություններին: Զինվորական կարգապահությունը, սակայն, դուրս չի մնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներից՝ Կոնվենցիայի 1-ին և 14-րդ հոդվածների համաձայն: Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն օժտված է որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու զինվորական կարգապահության իր համակարգը: Կարգապահական պատիժները, որոնք կարող են դիտվել որպես ազատությունից զրկում քաղաքացիների կամար, կարող են չունենալ նույն բնույթը զինծառայողների նկատմամբ կիրառվելու դեպքում: Այդուհանդերձ, զինծառայողների դեպքում Կոնվենցիայի 5-րդ հոդվածը կիրառելի է, կարգապահական պատիժը կրում է այնպիսի բնույթ, որը ակնհայտորեն տարբերվում է զինված ուժերում կյանքի սովորական պայմաններից:

Դիմումատուներից Էնգելը կատարված իրավախախտման համար ենթարկվել էր նախնական երկօրյա խիստ ռեժիմում մեկուսացման: Հետագայում նրա նկատմամբ ընդունվել է կարգապահական պատիժ նույն ժամկետով, որը բողոքարկման հետևանքով անփոփոխ էր թողնվել նաև զինվորական դատարանի կողմից: Խիստ ռեժիմում մեկուսացման ձևով կարգապահական պատիժը ենթադրել է սերժանտների և շարքային զինծառայողների մեկուսացումը խցում պատժի ողջ ընթացքում, և հետևաբար՝ նրանք չեն կատարել իրենց բուն պարտականությունները: Նման մեկուսացման հնարավորությունը եղել է 1-14 օրվա ընթացքում: Դատարանը փաստել է, որ չնայած իր կարճ ժամկետին՝ Էնգելի նկատմամբ կիրառված պատիժը կրել է ազատությունից զրկելու բնույթ:

Խիստ ռեժիմում մեկուսացումը՝ որպես կարգապահական պատիժ, նախատեսված է եղել զինծառայողների նկատմամբ, ովքեր կատարել են այնպիսի արարք, որը կոպիտ

<sup>146</sup> Engel and Others v. the Netherlands (Article 50), 23 November 1976, Series A no. 22.

կերպով խախտել է զինվորական կարգապահությունը: Քանի որ այն նախատեսվել է որևէ արարքի կատարումից հետո, հետևաբար կրել է պատժիչ բնույթ: Հետևաբար, այն չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Դատարանում կառավարությունը հայտնել էր, որ կրած պատիժը հաշվանցվել է հետագայում ստացած կարգապահական տույժի կրման մեջ, և նա ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Սույն փաստի առթիվ Դատարանը հայտնել է, որ կայացված դատավճռում նախնական քննության ընթացքում ազատությունից զրկված ժամկետի հաշվանցելը չի վերացնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտումը, սակայն կարող է հետևանքներ ունենալ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառման դեպքում, քանի որ այդ միջոցը սահմանափակում է պատճառված վնասի չափը: Այսպիսով՝ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### **Թիոլիսն ու Կուլումպասն ընդդեմ Հունաստանի<sup>147</sup>**

Սույն գործը վերաբերվում է երկու Եհովայի վկաների, ովքեր, հանդիսանալով տարածված կրոնական ուղղության հետևորդներ, հրաժարվել են զինծառայության անցնել և զինվորական համազգեստ կրել՝ պայմանավորված իրենց կրոնական համոզմունքներով: Դիմողների՝ զինվորական ծառայությունից ազատվելու դիմում-խնդրանքի հիմքում ընկած է եղել «1988 թվականի օրենքը», որը հնարավորություն է տալիս տարածված կրոնների բոլոր պատվիրակներին ազատվել զինվորական ծառայությունից: Վարչական գործերով Գերագույն դատարանը բազմիցս հավաստել է, որ Եհովայի վկաները ևս տարածված կրոն են հանդիսանում, և դրա հետևորդները պետք է ազատվեն զինվորական ծառայությունից:

Զինվորական կոմիսարիատի կողմից դիմողների դիմում-խնդրանքները մերժվել են, իսկ զինվորական համազգեստ չկրելու և ծառայությունից հրաժարվելու համար նրանք ձերբակալվել են անհնազանդության հիմքով և անազատության մեջ պահվել մինչև դատաքննությունը:

Դիմելով Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ դիմողները նշել են, որ իրենց ձերբակալությունը օրինական չի եղել և հանգեցրել է խտրականության՝ պայմանավորված իրենց կրոնական համոզմունքներով, ինչը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը: Ավելին, նրանք նշել են, որ ենթարկվել են անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, հնարավորություն չեն ունեցել անօրինական ձերբակալության համար արդար դատաքննություն և փոխհատուցում ստանալ, ինչը հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների խախտմանը:

<sup>147</sup> Tsirlis and Kouloumpas v. Greece, 29 May 1997, Reports of Judgments and Decisions 1997-III.

Սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատված է համարել, որ ազատությունից զրկման ցանկացած դեպք պետք է համապատասխանի Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների հետ՝ դրանով բացառելով անհիմն ձերբակալությունները: Այնուհետ Դատարանը նշել է, որ անհնազանդության հիմքով դիմողների ձերբակալությունները ներքին օրենսդրությամբ որևէ հիմնավորում չեն ունեցել և անօրինական են եղել: Հետևաբար, ձերբակալությունը դեմ է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակային նշանակությանը և խախտել է դրա դրույթները:

Այսպիսով՝ Դատարանը հաստատել է միայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումը, իսկ դիմողների նշած մնացած հոդվածների խախտման հանգամանքը հաստատված չի համարել:

### **«Դեր Իգել»-ն ու Գուբին ընդդեմ Ավստրիայի<sup>148</sup>**

Սույն գործի շրջանակներում քննվել է պետության կողմից հրատարակության և զինճառայողի արտահայտվելու ազատության սահմանափակման օրինականության և հիմնավորվածության հարցը:

Դիմողներից առաջինը՝ «Vienna-based association»-ը, ավստրիական բանակում ծառայող զինվորների համար նախատեսված ամսագրի («Դեր Իգել») հրատարակությունն է: Բանակային կյանքի վերաբերյալ վերջինիս հոդվածները հաճախ քննադատական բնույթ ունենին և ըստ այդմ այդ բնույթի տեղեկություններ էին պարունակում:

1987 թվականի հուլիսի 27-ին ընկերությունը դիմել է պաշտպանության նախարարին՝ «Դեր Իգել»-ը գործող երկու այլ զինվորական ամսագրերի հետ զորանոցներում տարածելու խնդրանքով: Հրատարակության կողմից ներկայացված խնդրանքին որևէ պատասխան չի տրվել: Միայն 1989 թվականի մարտի 10-ի նամակով հաստատվել է, որ «Դեր Իգել»-ի տարածումը զորանոցներում արգելվում է:

Զինված ուժերի վերաբերյալ Ակտի 46-րդ բաժնի /3/ համաձայն՝ զինված ուժերի ողջ անձնակազմը առանց որևէ սահմանափակման հանրությանը հասանելի բոլոր միջոցներով քաղաքական իրադարձությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու իրավունք ունի: Այնուհանդերձ, թույլատրվում էր միայն այն հրապարակումների օգտագործումը, որոնք ուղղված չէին բանակի հեղինակության դեմ ու քաղաքական կուսակցություններին քարոզչության տարածք չէին տրամադրում: Նախարարության մեկնաբանության համաձայն՝ «Դեր Իգել»-ը չէր համապատասխանում այս պահանջներին:

<sup>148</sup> Vereinigung demokratischer Soldaten Österreichs and Gubi v. Austria, 19 December 1994, Series A no. 302.



Երկրորդ դիմողը, ով «Ժողովրդավարական զինվորների միության» անդամ էր, 1987 թվականի հուլիսի 1-ին անցել է զինվորական ծառայության: Երդման արարողության ժամանակ նա հանրապետության նախագահի նկատմամբ բողոքով է հանդես եկել, ինչից հետո վերջինիս նկատմամբ նշանակվել են տաժանակիր մի շարք պարտականություններ, ինչի կապակցությամբ էլ դիմողը բազմիցս բողոքներ և խնդրագրեր է ներկայացրել:

1987 թվականի դեկտեմբերի 29-ին գորանոցում «Դեր Իգել»-ի հերթական համարը տարածելիս դիմողը սպայի կողմից այդ գործողությունը դադարեցնելու հրաման է ստացել: Ավելի ուշ դիմողը բողոքարկել է արգելման որոշումը, որը բանակի ներքին իրավական օրենսդրական կարգավորման համաձայն մերժվել է:

Դատարանի իրավական գնահատականը հանգել է հետևյալին. պաշտպանության նախարարության կողմից կիրառված իրավական ակտերը բավարար օրենսդրական հիմք են հանդիսացել հրատարակության հողվածների տարածումը մերժելու համար: Ըստ էության, արտահայտման իրավունքի սահմանափակումը սահմանված է եղել օրենքով: Ինչ վերաբերում է ազատության սահմանափակման և դրա միջամտության համար առկա օրենքով նախատեսված նպատակներին, ապա Դատարանը հաստատել է, որ կիրառված սահմանափակումը օրենքով նախատեսված նպատակների համեմատ անհամաչափ է:

Պաշտպանության նախարարության կողմից կիրառված սահմանափակումը անհրաժեշտ է եղել գորանոցում կարգ ու կանոնի պահպանման համար, սակայն հրատարակության կողմից ինֆորմացիայի տարածման եղանակներին ու միջոցներին նախարարության կողմից ճիշտ գնահատական չի տրվել: Դատարանը վերահաստատել է նաև, որ ժողովրդավարական հասարակության մեջ, բազմակարծության և հանդուրժողականության պահանջներից ելնելով, արտահայտման ազատության տակ պետք է հասկանալ նաև ցանկացած տեղեկություն, որը հուզում և անհանգստություն է առաջացնում բնակչության մոտ:

Ավելին, Դատարանը գտել է, որ «Դեր Իգել»-ում պարունակվող տեղեկությունները բռնության, անհնազանդության կամ օրենքի խախտման խթան չեն հանդիսացել և, հետևաբար, իրավունքի սահմանափակումը հանրության համար անհրաժեշտ չի եղել:

Այսպիսով՝ առաջին դիմողի մասով Դատարանը հավաստել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման փաստը:

Երկրորդ դիմողի վերաբերյալ Դատարանը հաստատել է իրավունքի իրականացմանը միջամտելու հանգամանքը, որի նպատակը, ինչպես առաջին դեպքում, գորանոցում կարգուկանոնի հաստատումն էր: Մակայն այս դեպքում ևս Դատարանը փաստել է, որ երկրորդ դիմողի կողմից տպագրված հողվածների տարածումը զինվորական կարգուկանոնի համար վտանգ չի ներկայացնում, հետևաբար կիրառված սահմանափակումները պաշտպանվող նպատակի համեմատ անհամաչափ են եղել:

Սույն գործի կապակցությամբ Դատարանը հաստատել է երկու դիմողների նկատմամբ արտահայտվելու ազատության խախտման փաստը:

### **Բեքը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության<sup>149</sup>**

Սույն գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել է դիմողների ներկայացված բողոքը, որի համաձայն՝ վերջիններիս սեռական կյանքին միջամտությունն ու զինված ուժերից նրանց պաշտոնանկությունը առաջացրել է Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում: Դիմողները պնդել են նաև, որ ներպետական դատական ատյաններում զրկված են եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից:

Երեք դիմողներն էլ ընդգրկված են եղել Թագավորության օդային զինված ուժերի կազմում և երկար տարիներ աշխատանքային պարտականություններում հաջողությամբ են հանդես եկել: Սակայն նրանց համասեռամոլության փաստը հաստատվելուց հետո մի շարք հարցազրույցներ են տրվել նրանց մասնավոր կյանքի մանրամասների վերաբերյալ, ինչից հետո նրանք ազատվել են աշխատանքից:

Դատարանը սույն գործով նշել է, որ դիմողների անձնական կյանքի հետաքննությունն ու համասեռամոլության հիմքով նրանց աշխատանքից ազատելը որակվում է որպես մասնավոր կյանքի միջամտություն, ինչը խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը և չի համապատասխանում ժողովրդավարական հասարակության պահանջներին:

Դատարանը նշել է նաև, որ կատարվածը կարող է որակվել նաև որպես դիմողների արտահայտվելու ազատության միջամտություն, սակայն սույն գործով արտահայտվելու ազատությունը մասնավոր կյանքը հարգելու իրավունքի համեմատ երկրորդական է: Հետևաբար Դատարանը անհրաժեշտ չի համարել փաստերը քննարկել հոդված 10-ի ներքո: Հաստատվել է նաև դիմողների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայության հանգամանքը:

Այսպիսով՝ Դատարանը գտել է, որ պետությունը չի կատարել իր պարտականությունը՝ պաշտպանելու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովման առումով, ինչի արդյունքում խախտվել են Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածները:

### **Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների**

<sup>149</sup> Beck and Others v. the United Kingdom, nos. 48535/99, 48536/99 and 48537/99, 22 October 2002.

Կոնվենցիան կիրառելի է ոչ միայն քաղաքացիական անձանց, այլև զինձառայողների նկատմամբ: Այն իր 1-ին և 14-րդ հոդվածներում ամրագրում է, որ պայմանավորվող պետությունների «իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք» պետք է «առանց խտրականության» օգտվի Կոնվենցիայի 1-ին բաժնում սահմանված իրավունքներից... Այնուամենայնիվ, կոնվենցիայի նորմերը սույն գործով մեկնաբանելիս և կիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինձառայողների համար դրա ունեցած ազդեցությունը:

Բանակի պատշաճ գործունեությունը դժվար է պատկերացնել առանց իրավական այնպիսի նորմերի, որոնք մշակվում են զինձառայողների կողմից զինվորական կարգապահությունը խախտելը կանխելու համար:

### **Լարիսիսը և այլոք ընդդեմ Հունաստանի<sup>150</sup>**

Դատարանը սույն գործով հաստատել է, որ Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքները վերաբերում են զինված ուժերի ներկայացուցիչներին այնպես, ինչպես այլ քաղաքացիների: Սակայն աստիճանակարգված հարաբերությունները, որոնք զինված ուժերի կյանքի առանձնահատկությունն են և որոշիչ ազդեցություն ունեն զինձառայողների հարաբերությունների վրա, և ստորադաս զինձառայողների համար բարդ է պատասխանել կամ հրաժարվել վերադաս զինձառայողների նախաձեռնած խոսակցություններից: Հետևաբար, զինված ուժերում խոսքի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել՝ գերծ պահելու ենթակա զինձառայողներին վերադասների անցանկալի ազդեցությունից, դիցուք՝ ստորադաս զինձառայողների հետ կրոնական թեմաներով խոսակցություններ:

---

<sup>150</sup> Larissis and Others v. Greece, 24 February 1998, Reports of Judgments and Decisions 1998-I.

## ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն,**  
Geneva Centre for the Democratic Control of the Armed Forces, [www.dcaf.ch](http://www.dcaf.ch)

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոնը միջազգային հիմնադրամ է, որը ստեղծվել է 2000 թվականին Շվեյցարական Համադաշնության նախաձեռնությամբ: Կենտրոնը կոչված է նպաստելու անվտանգության ոլորտի կառավարմանը՝ ոլորտում բարեփոխումների ընդունման միջոցով: Կենտրոնի գործունեությունն ուղղված է պետությանը և իր քաղաքացիներին հաշվետու անվտանգության կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Առանցքային գաղափարն այն է, որ անվտանգությունը, բնականոն զարգացումը և օրենքի գերակայությունը հանդիսանում են խաղաղության հիմնարար նախապայմաններ: Կենտրոնը տիրապետում է կոնցեպտուալ, վերլուծական և գործառնության կարողությունների, որոնց միջոցով իրականացնում է իր առջև դրված նպատակները: Կենտրոնը մշակում և զարգացնում է ազգային և միջազգային մակարդակով համապատասխան նորմեր և ձևաչափեր, իրականացնում է պաշտպանության ոլորտում քաղաքականության վերաբերյալ հետազոտություններ, ուղղորդում է առաջարկում պետություններին՝ իրենց կարիքներին ու կարողություններին համապատասխանող քաղաքականության մշակման համար, տրամադրում է խորհրդատվություն, ինչպես նաև երկրի ներսում իրականացնում է պաշտպանության ոլորտին աջակցության ծրագրեր:

**Զինվորական ասոցիացիաների եվրոպական կազմակերպություն,** European Organisation of Military Associations, [www.euromil.org](http://www.euromil.org)

Զինվորական ասոցիացիաների եվրոպական կազմակերպությունը (ԶԱԵԿ) նպատակ ունի ներկայացնելու ու պաշտպանելու Եվրոպայում բոլոր աստիճանների զինվորական ծառայողների շահերը: Կազմակերպությունն ամբողջ Եվրոպան ընդգրկող ֆորում է՝ միանման խնդիրների շուրջ համախմբված պրոֆեսիոնալ զինվորական ասոցիացիաների համագործակցության համար: ԶԱԵԿ-ը միավորում է 39 ազգային զինվորական ասոցիացիաներ ու առևտրային միություններ: Բրյուսելում տեղակայված միջազգային քարտուղարության միջոցով ԶԱԵԿ-ն իրականացնում է տեղեկատվության, փորձառության և լավագույն փորձի փոխանակում անդամ ասոցիացիաների միջև: Կազմակերպությունը ձգտում է նպաստել մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և զինվորների սոցիալ-մասնագիտական շահերի պաշտպանությանն ու առաջխաղացմանը՝ Եվրոպայի տարբեր պետություններում մշտադիտարկում ու քարոզչություն իրականացնելու միջոցով:

**Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն**, Organization for Security and Cooperation in Europe, [www.osce.org](http://www.osce.org)

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) սկսել է կազմավորվել դեռևս սառը պատերազմի ժամանակաշրջանից, երբ ստեղծվեց Եվրոպայի պաշտպանության ու համագործակցության համաժողովը՝ որպես Արևելքի և Արևմուտքի միջև երկխոսության ու բանակցությունների ծավալման ֆորում ծառայելու համար: Ներկայումս իր 56 անդամ պետություններով՝ Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից, ԵԱՀԿ-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունը: Այն ձևավորում է ֆորում ուժի գործադրման վտանգի առկայության դեպքում՝ քաղաքական բանակցությունների և որոշումների կայացման, հակամարտությունների կանխարգելման, ճգնաժամային կառավարման և հետկոնֆլիկտային վերականգնման համար և իր դաշտային առաքելությունների լայն ցանցի միջոցով իրականացնում է անդամ պետությունների քաղաքական կամքը: ԵԱՀԿ-ի կողմից անվտանգության տեսլականը ներառում է ռազմաքաղաքական, տնտեսական, շրջակա միջավայրի և մարդկային գործոնները: Արդյունքում՝ կազմակերպությունը զբաղվում է անվտանգության ոլորտին առնչվող հիմնախնդիրների լայն շրջանակով, դրանցից են՝ ուժի գործադրման նկատմամբ վերահսկողությունը, փոխվստահության ու անվտանգության ձևավորման չափանիշների մշակումը, մարդու իրավունքները, ազգային փոքրամասնությունները, ժողովրդավարացումը, հսկողության ռազմավարությունները: Կազմակերպությունը նաև գործառույթներ ունի հակաահաբեկչական, տնտեսական և շրջակա միջավայրի ոլորտներում: ԵԱՀԿ բոլոր 56 անդամներն օգտվում են հավասար իրավունքներից:

**Հյուսիսատլանտյան դաշինք կազմակերպություն**, NorthAtlantic Treaty Organization, [www.nato.int](http://www.nato.int)

Երկրորդ աշխարհամարտի ավարտից և սառը պատերազմի մեկնարկից հետո Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների, Կանադայի ու ԱՄՆ-ի համատեղ ջանքերով ստեղծվեց Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ)՝ նպատակ ունենալով անվտանգության երաշխիքներ ապահովել Խորհրդային Միությունից եկող սպառնալիքների դեմ: ԱՄՆ-ն և իր դաշնակից պետությունները փորձում էին խուսափել ԽՍՀՄ-ի ագրեսիայից, և այդ իսկ պատճառով ստեղծվեց այս ռազմաքաղաքական կառույցը:

Պաշտպանական այս կառույցի նպատակները նախորդ դարից ի վեր որոշակիորեն վերաձևակերպվել են: Դաշինքի համար բեկումնային նշանակություն ունեցավ սառը պատերազմի ավարտը, երբ հակառակորդ գլխավոր ուժի՝ Վարշավյան պայմանագրի կազմակերպության փլուզումը զարկ տվեց Հյուսիսատլանտյան դաշինքի՝ մինչև օրս շարունակվող ընդլայնմանը: 21-րդ դարում ՆԱՏՕ-ի գլխավոր մարտահրավեր է

սահմանված ահաբեկչությունը: ՆԱՏՕ-ի ռազմական հիմնական մարմինը զինվորական կոմիտեն է՝ կազմված անդամ երկրների զինված ուժերի ներկայացուցիչներից: Կոմիտեն պարտավոր է հանձնարարականներ ներկայացնել կազմակերպության քաղաքական կառույցներին՝ պաշտպանության բնագավառում անհրաժեշտ միջոցառումների շուրջ: Կառույցն ունի նաև Խորհրդարանական վեհաժողով. այս ձևաչափում կազմակերպության անդամ երկրների պատգամավորները հնարավորություն ունեն քննարկելու անվտանգության խնդիրներ: ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունները ղեկավարվում են զինվորական կոմիտեի նախագահի կողմից և իրականացվում են ռազմավարական երկու՝ Ատլանտյան ու Եվրոպական հրամանատարությունների միջոցով. վերջիններս գործում են Միացյալ Նահանգների բարձրագույն պաշտոնյայի հրամանատարությամբ:

Որոշումները կառույցում ընդունվում են համընդհանուր համաձայնությամբ՝ կոնսենսուսով: Դաշինքի որոշումներ կայացնող գլխավոր մարմինը Հյուսիսատլանտյան խորհուրդն է, որը գործում է երեք մակարդակներով՝ մշտական ներկայացուցիչների, արտգործնախարարների կամ պաշտպանության նախարարների և պետությունների ղեկավարների: Երեք մակարդակում էլ Խորհուրդը որոշումներ կայացնելու նույն լիազորվածությունն ունի: Որոշումները համարժեք են՝ կարգավիճակով և իրավական ուժով: Հյուսիսատլանտյան խորհրդի հանդիպումները վարում է կազմակերպության գլխավոր քարտուղարը:

**Եվրոպական պաշտպանության գործակալություն**, European Defense Agency, [http://europa.eu/legislation\\_summaries/foreign\\_and\\_security\\_policy/cfsp\\_and\\_esdp\\_implementation/r00002\\_en.htm](http://europa.eu/legislation_summaries/foreign_and_security_policy/cfsp_and_esdp_implementation/r00002_en.htm)

Եվրոպական պաշտպանության գործակալությունը ստեղծվել է 2004 թ. հուլիսի 12-ին՝ Եվրոպական պետությունների առաջնորդների և կառավարությունների միաձայն որոշման հիման վրա: Գործակալության ստեղծման իրավական հիմքը Եվրոպական միության համաձայնագրի 14-րդ հոդվածի հիման վրա Խորհրդի 2004/5 51/CFSP միացյալ որոշումն էր:

Գործակալության նպատակը անդամ երկրներին և Եվրոպայի խորհրդին ճգնաժամային կառավարման ոլորտում աջակցություն ցուցաբերելն է պաշտպանական կարողությունները բարելավելու, ինչպես նաև Եվրոպական անվտանգության ու պաշտպանության քաղաքականության պահպանման ու զարգացման համար:

Եվրոպական պաշտպանության գործակալությունն ունի գործունեության հետևյալ ուղղությունները.

- ճգնաժամային կառավարման ոլորտում Եվրամիության պաշտպանական կարողությունների բարելավում,
- Եվրոպական զինված ուժերի համագործակցության խրախուսում,

– Եվրոպական պաշտպանության ոլորտի արդյունաբերության և տեխնոլոգիական հնարավորությունների ամրապնդում,

– Եվրոպական պաշտպանության ռազմական տեխնիկայի մրցակցային շուկայի ստեղծում,

– աջակցություն պաշտպանության ոլորտում հետազոտությունների իրականացմանը,

– Եվրոպայի արդյունաբերական ու տեխնոլոգիական ներուժի հզորացում:

Երկարաժամկետ հեռանկարում Գործակալությունն իր նպատակներին հասնում է հետևյալ կերպ.

– Խրախուսում է ԵՄ կառավարություններին՝ օգտագործելու պաշտպանության համար նախատեսված բյուջեն ապագա մարտահրավերներին դիմակայելու համար:

– Օգնում է կառավարություններին՝ ոլորտում ընդհանուր կարիքները պարզելու և համագործակցությամբ փոխընդունելի լուծումներ գտնելը խրախուսելու:

Եվրոպական պաշտպանության գործակալությունը հանդիսանում է Եվրամիության գործակալություն, հետևաբար գործում է Խորհրդի ղեկավարման ներքո ու ենթարկվում է նրան: Վերջինս ուղղորդում է Գործակալության գործունեությունը և հաշվետվություններ ստանում Գործակալության բարձրագույն ներկայացուցիչներից, ինչպիսին է, օրինակ, Գործակալության ղեկավարը: Ընթացիկ վերահսկողությունն ու ուղղորդումը Գործակալության ղեկավար կոմիտեի գործառույթն է: Ղեկավար կոմիտեն Գործակալության հիմնական որոշում ընդունող մարմինն է: Այն կազմված է անդամ երկրների պաշտպանության նախարարներից և Եվրոպական հանձնաժողովի մեկ անդամից: Բացի նախարարական ժողովներից, որոնք գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, Ղեկավար կոմիտեն հանդիպումներ է ունենում ազգային մակարդակով սպառազինության ղեկավար անձանց, գիտահետազոտական կենտրոնների ղեկավարների, պաշտպանական դաշտի ազգային կարողությունները համակարգողների և քաղաքականություն մշակող ղեկավարների հետ:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարան**, European Court of Human Rights, [www.echr.coe.int](http://www.echr.coe.int)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական կայք-էջում գտնված են Դատարանի որոշումները: Որոշման արդյունքում հնարավոր է գտնել Եվրոպական դատարանի մի շարք որոշումներ, որոնք վերաբերում են ռազմական գործունեությանն ու զինվորական ծառայությանը:

**ՄԱԿ-ի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար**, Office of the United Nations High Commissioner for Human Rights, [www.ohchr.org](http://www.ohchr.org)

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի պաշտոնական կայք-էջում կարելի է գտնել զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր և հարակից նյութեր:

**Կարմիր խաչի միջազգային կոմիտե,** International Committee of the Red Cross, [www.icrc.org](http://www.icrc.org)

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պաշտոնական կայք-էջում առկա է զինված հարձակումներին կամ հակամարտություններին առնչվող միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի վերաբերյալ խոշոր տեղեկատվական բազա: Կայքում գետեղված են նաև զինված հակամարտությունների, միջազգային քրեական դատավարության, ուժի օգտագործման վերաբերյալ և մարդու իրավունքներին առնչվող տեղեկատվական նյութեր, տեղեկություններ՝ Կարմիր խաչի պաշտպանության տակ գտնվող մարդկանց կարգավիճակի մասին:

**Հոգեկան առողջության հիմնադրամ,** Mental health foundation <http://www.mentalhealth.org.uk/help-information/mental-health-a-z/A/armed-forces/>

Մեծ Բրիտանիայում գործող Հոգեկան առողջության հիմնադրամի կայք-էջում տեղակայված հոգեկան առողջությանն ու դրա պահպանման հիմնահարցերին վերաբերող ծավալուն տեղեկատվության մեջ շոշափվում են նաև զինված ուժերում հոգեկան առողջության հիմնախնդիրները, առաջարկվում են զինվորական ծառայություն իրականացնող անձանց հոգեկան առողջության պահպանման մոտեցումներ:

**ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք,** [www.mil.am](http://www.mil.am)

**ԼՂՀ պաշտպանության բանակ,** [www.nkrmil.am](http://www.nkrmil.am)

**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ,** OSCE Office in Yerevan, [www.osce.org/yerevan](http://www.osce.org/yerevan)

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կայքում (<http://www.osce.org/yerevan/74884>) կարելի է գտնել ՀՀ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության, զինված ուժերի հիմնախնդիրների վերաբերյալ արժեքավոր զեկույցներ:

**Հայկական բանակ,** ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, <http://www.mil.am/magazine>

Ամսագրում ներկայացված են Հայոց ազգային բանակի վերաբերյալ հոդվածներ, ռազմական գործունեությանը, ռազմաքաղաքական, սոցիալ-իրավական ոլորտներին



առնչվող լրատվական հոդվածներ, ինչպես նաև հարակից այլ ոլորտներին առնչվող տեղեկատվություն:

**ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնաթերթ, [www.hayzinvor.am](http://www.hayzinvor.am)**

Կայքում գետեղված են Հայոց ազգային բանակի վերաբերյալ հոդվածներ, ռազմական գործունեությանը, ռազմաքաղաքական, սոցիալ-իրավական ոլորտներին առնչվող լրատվական հոդվածներ, ինչպես նաև հարակից այլ ոլորտների առնչվող տեղեկատվություն:

Կայքն ունի 9 առանձնացված բաժին, որտեղ այցելուն կարող է գտնել իրեն հետաքրքրող տեղեկություններ ռազմաքաղաքական, բանակի և հասարակության կապերի, ինչպես նաև բանակի հոգևոր-մշակութային հարցերի վերաբերյալ:

**ԼՂՀ պաշտպանության բանակի պաշտոնաթերթ, [www.martik.nk.am](http://www.martik.nk.am)**

Կայքում առկա են սպառազինության և ռազմական տեխնիկայի, հայկական ռազմարվեստի և հարակից ոլորտների վերաբերյալ հոդվածներ, լրատվական նյութեր: Տեղադրված են տեղեկություններ հայկական ռազմարվեստի և հակամարտության պատմության մասին:

**Ռազմ.info, [www.razm.info](http://www.razm.info)**

Կայքը ռազմական գործունեությանն առնչվող հոդվածների և լրատվական նյութերի արժեքավոր ռեսուրս է: Տեղակայված են նաև վերլուծական աշխատանքներ, տեսանյութեր: Առկա են օգտակար հղումներ պաշտպանության ոլորտի և զինծառայողների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կայքերին:

**ՌԴ պաշտպանության նախարարություն, [www.mil.ru](http://www.mil.ru)**

ՌԴ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում առկա է ՌԴ-ում գործող զինվորական և ռազմական գործունեության հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ցանկ: Ներկայացված են ՌԴ-ում զինվորական ծառայության տեսակներն ու ռազմական կարիերայի հնարավորությունները, զինծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքների ու փոխհատուցումների համակարգը:

**Ռազմական իրավունք, Военное право, [www.voенноеправо.ru](http://www.voенноеправо.ru)**

Կայքում գետեղված են ՌԴ իրավական բազան, դատական նախադեպերը, ռազմական ծառայությանը վերաբերող պարբերականներ, ռազմական և հարակից

իրավունքի ճյուղերին վերաբերող դասագրքեր, ՌԴ և օտարերկրյա ռազմական ծառայության մարմիններին և ռազմական այլ ռեսուրսներին արված հղումներ:

**Կոնսուլտանտ պլյուս**, Консультант Плюс, [www.consultant.ru/popular/military/militaryhelp/](http://www.consultant.ru/popular/military/militaryhelp/)

Այլ նյութերի շարքում կայքում զետեղված են նաև ռազմական իրավունքին վերաբերող նյութեր:

**Ռազմական գրականություն, Военная литература**, <http://militera.lib.ru/>

Կայքում զետեղված են ռուսական բանակի վերաբերյալ հոդվածներ, ռազմական գործունեությանը, ռազմաքաղաքական, սոցիալ-իրավական ոլորտներին առնչվող հարուստ գրականություն, ինչպես նաև հարակից ոլորտներին առնչվող տեղեկատվություն:

**Բլաքանթեմ**, Blackanthem.com, <http://blackanthem.com>

Անկախ լրատվական կայք-ռեսուրսն ընթերցողին է առաջարկում այլընտրանքային տեղեկատվություն զինված ուժերի հիմնահարցերի վերաբերյալ:

**Միլիթարի Թայմս**, Military Times, <http://militarytimes.com>

Կայք-ռեսուրսը պարունակում է մի քանի զինվորական ամսագրերի հղումներ, որոնցից են են «Այր Ֆորս Թայմսը», «Արմի Թայմսը», «Մարինե Կորպս Թայմսը» և «Նեյվի Թայմսը»:

**Սթրաթֆոր**, Stratfor, <http://www.stratfor.com>

Սթրաթֆոր կազմակերպությունն իրականացնում է ռազմավարական ուսուցում համաշխարհային բիզնեսի, տնտեսագիտության, անվտանգության և ռազմական զարգացումների վերաբերյալ: Կայքում կարելի է գտնել կազմակերպության իրականացրած ծրագրերի արդյունքները:

**Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ԱՄՆ-ի և Կանադայի ինստիտուտ**, Российская академия наук, Институт США и Канады, [www.iskran.ru/docbase.php](http://www.iskran.ru/docbase.php)

Կայքում կարելի է գտնել օգտակար տեղեկատվություն զինված ուժերի նկատմամբ քաղաքական վերահսկողության վերաբերյալ: Կայքը պարունակում է արժեքավոր նյութեր զինված ուժերի վերահսկողության ՌԴ, ԵՄ և ԱՄՆ փորձի վերաբերյալ:

**ԱՄՆ բանակի ասոցիացիա**, Association of the United States Army, <http://www.USA.org>

ԱՄՆ բանակի ասոցիացիան կենտրոնացած է ԱՄՆ բանակի գործողությունների վրա՝ ամբողջ աշխարհում: Կայքում զետեղված են նյութեր բանակի հիմնահարցերով զբաղվող անձանց ու կազմակերպությունների համար:

**Եվրոպական միության անվտանգության ոլորտի հետազոտությունների ինստիտուտ**, European Union Institute for Security Studies, <http://www.iss.europa.eu/>

Եվրոպական միության անվտանգության ոլորտի հետազոտությունների ինստիտուտը հանդիսանում է Եվրոպական միության գործակալությունը: Այն գործում է ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության ներքո: Ինստիտուտը հանդիսանում է ինքնավար գործակալություն՝ վայելելով լիարժեք գիտական ազատություն: Այն հետազոտություններ է իրականացնում ԵՄ-ին առնչվող անվտանգության հիմնահարցերով, ապահովում է ֆորում ակտիվ բանավեճի համար: Որպես ԵՄ գործակալություն՝ ինստիտուտը իր կատարած վերլուծություններն ու կանխատեսումները ներկայացնում է նաև արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցչին :

Կազմակերպության կայքում կարելի է գտնել ինստիտուտի մի շարք հետազոտություններ ու հրապարակումներ անվտանգության ոլորտի բազմաթիվ հիմնահարցերի վերաբերյալ:

**ԱՄՆ խաղաղության ինստիտուտ**, United States Institute of Peace, <http://www.usip.org>

